

Ս. Վ. Գրոմով

Ն. Ա. Ոռղինա

ՖԻԶԻԿԱ

ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԱՇՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Ուսուելենից թարգմանեց Ո.Գ. Բարոյանը

Թարգմանված հրապարակությունը լույս է
դեսնում համաձայն «Պրոսվեշչենի»
հրապարակության լիցենզիայի
Переводное издание выпущено в свет по
лицензии издательства "Просвещение"

«Անտարես» հրապարակություն
Երևան - 2008

Издательство "Просвещение"
Москва - 2002

Издательство "Антарес"
Ереван - 2008



Օզրագործվող նշանակումներ

s – ճանապարհ	h – բարձրություն
v – արագություն	g – ազար անկման արագացում
t – ժամանակ	λ – ալիքի երկարություն
a – արագացում	t – ջերմաստիճան
v – հաճախություն	U – ներքին էներգիա
T – պարբերություն	Q – ջերմաքանակ
m – զանգված	c – փեսակարար ջերմունակություն
F – ուժ	λ – հալման փեսակարար
P – կշիռ	ջերմություն
p – իմպուլս	r – շողեզոյացման փեսակարար
A – աշխափանք	ջերմություն
η – օգրակար գործողության գործակից	q – վառելիքի այրման փեսակարար ջերմություն
E – մեխանիկական էներգիա	

Ա.Վ. Գրոնվ, Ն.Ա. Ռոդինա

ՖԻԶԻԿԱ

Ուսուելենից թարգմանեց Ռ. Գ. Բարոյանը

Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք

§ 1. Գիրություն մարմինների շարժման մասին

Ֆիզիկայի այն բաժինը, որ սկսում եք ուսումնասիրել, կոչվում է մեխանիկա: **ՄԵԽԱՆԻԿԱՆ** գիրություն է մարմինների շարժման մասին:

Չննարկվող խնդիրների բնույթից են կոչվում՝ մեխանիկան բաժանվում է երկու հիմնական մասի՝ **Կինետիկա** և **Դինամիկա**:

Կինեմատիկայում (հունարեն «կինեմա» բառը նշանակում է «շարժում») փրկում է մարմինների շարժման տույ նկարագրությունը, թե ինչպես են նրանք շարժվում՝ առանց բացահայտելու պարզաբնուր, թե ինչու են նրանք այդպես շարժվում: Այս կամ այն շարժումը պայմանավորող պարագաները ուսումնասիրում է **դինամիկան** (հունարեն «դինամիս»՝ «ուժ» բառից):

Դիշեցնենք, որ մարմնի **մեխանիկական շարժում** է կոչվում նրա դիրքի փոփոխությունը՝ որպես հաշվարկման մարմին ընդունված այլ մարմնի նկարմամբ: Այդ պարբառով, *որպեսզի կարող անանք դարձողություն անել՝ դրվագ մարմինը շարժվո՞ւմ է, թե՛ ոչ, անհրաժեշտ է նաև ապահովել հաշվարկման մարմին ընդունել, որից հետո դեռնել՝ փոփոխվո՞ւմ է արդյոք դիտարկվող մարմնի դիրքը հաշվարկման մարմնի նկարմամբ:* Ընդ որում, դիրքարկվող մարմինը կարող է շարժվել հաշվարկման որևէ մարմնի նկարմամբ և անշարժ մնալ հաշվարկման մեջ այլ մարմնի նկարմամբ:

Օրինակ՝ գետնին ընկած քարը դադարի վիճակում է Երկրի նկարմամբ, բայց շարժվում է (Երկրի հետ միասին) Արեգակի նկարմամբ:

Տարածության մեջ մարմնի դիրքը որոշելու համար գիրնականներն օգտագործում են կոորդինատային համակարգ՝ միմյանց նկարմամբ ուղղահայց երեք առանցքներ՝ X, Y, Z: Ժամանակը չափում են ժամացույցի միջոցով:

Հաշվարկման մարմինը, նրա հետո կապված կոռորդինատային համակարգը և ժամանակ չափող սարքը միասին կազմում են **հաշվարկման համակարգը:**

- Մեխանիկական շարժումը հարաբերական է: Դա նշանակում է, որ
1. առանց նշելու հաշվարկման մարմինը, որի նկարմամբ դիվարկվում է շարժումը, անհմասսր է խոսել մարմնի շարժման մասին,
 2. հաշվարկման դարբեր մարմինների նկարմամբ (օրինակ՝ Երկրի, Վրեզակի, ինքնաթիռի և այլն) միևնույն շարժումը կարող է գնահարվել դարբեր կերպ. դարբեր կարող են լինել շարժման հետազգերը, անցած ճանապարհները, արագությունները և այլն:

Սակայն հարաբերականի հետո միասին մեխանիկական շարժմանը բնորոշ են նաև բացարձակ հարկություններ: Բացարձակ են անվանում շարժման այնպիսի հարկություններ, որոնք կախված չեն հաշվարկման մարմնի ընդունակությունից:

Օրինակ՝ եթե երկու՝ A և B մարմիններ Երկրի նկարմամբ մոդելներ են միմյանց, ապա դա դիտելի կունենա նաև հաշվարկման ցանկացած այլ մարմնի (ավորումներնայի, Լուսի, Վրեզակի և այլնի) նկարմամբ: Այլ խոսքով ասած՝ անհնար է գտնել այնպիսի հաշվարկման մարմին, որի նկարմամբ այդ երկու մարմինները միմյանց չմոդելնան, այլ օրինակ՝ հեռանան միմյանցից: Այդ մարմինների միմյանց մոդելնալը բացարձակ բնույթ է կրում:


Մարմինների շարժման հետ կապված խնդիրներն անհիշելի ժամանակներից հետաքրքրել են մարդկանց: Այդ խնդիրների հետազոտությունները պայմանավորված են ինչպես նրանց գործնական կարիքներով, այնպես էլ հետազոտողների հետաքրքրասիրությամբ: Մեխանիկական խնդիրների լուծումները շապէ հաճախ մեծ հնարամքություն են պահանջում (հիշենք, օրինակ՝ Վրբիմեդին): Այդ պաֆճառով, զարմանալի չէ, որ մարմինների շարժման մասին գիտության անվանումը (մեխանիկա) թարգմանվում է «խորամանկություն», «հնարամքություն»:


Մարմինների շարժման մասին դաստիարակություններ անկախ հետո անկախ կամ կամ անկախ երբեմն անսովոր դարձինակությունների (պարադոքսների) են հանգում: Դրանցից ամենազարմանալին Զենոն Էլեացու (մ.թ.ա. 5-րդ դար) պարադոքսներն են: Այն ժամանակ էլ, հիմա էլ դրանք կոչվում են

ապորիաներ: Զենոնի ապորիաները զիվնականների կողմից քննարկվում են արդեն երկուս ու կես հազար տարի:

Զենոնի ապորիաների մեջ ամենահուշակավորը թերևս «Աքիլեսն ու Կրիան» անունը կրողն է: Նրանում Զենոնն ապացուցում է, որ Տրոյական պատերազմի հերոս Աքիլեսը, չնայած իր հայփնի արագավագությանը, չի կարող հասնել դանդաղաշարժ կրիային: «Ընդունենք թե, – ասում է Զենոնը, – Աքիլեսը կրիայի եփսից սկսում է վազել՝ վազքն սկսելով նրա հետ միաժամանակ, բայց կրիայից հետո ընկած ինչ-որ ԱԲ հեռավորությունից (նկ. 1): Պարզ է, որ մինչև կրիային հասնելու Աքիլեսը պետք է հաղթահարի իրենց բաժանող ԱԲ հեռավորությունը: Սակայն մինչ նա այդ հեռավորությունը կվազի, կրիան նույնպես մի փոքր առաջ կսողա, և Աքիլեսն սրիպված պետք է լինի հաղթահարել լրացուցիչ ԱԿ հեռավորությունը: Բայց մինչ նա այդ կանի, կրիան նորից առաջ կզնա, և Աքիլեսը նորից պետք է լրացուցիչ հեռավորություն հաղթահարի: Վյու ընթացքում կրիան նորից կսողա ճանապարհի հաջորդ հարվածը, և այսպես մինչև անսահմանություն: Արդյունքում, կրիային հասնելու համար Աքիլեսից կպահանջվի հաղթահարել ճանապարհի անսահման հարվածներ, իսկ դրա համար կպահանջվի անսահման մեծ ժամանակ: Սա էլ հենց նշանակում է, որ Աքիլեսը երբեք չի հասնի կրիային»:

Իրականում, իհարկե, Աքիլեսը (ինչպես և ցանկացած այլ մարդ) առանց դժվարության կիասնի ու կանցնի առջևում սողացող կրիայից: Բայց դարօրինակը հենց այդ է. ինչպես է, որ իրականում մարդուն հաջողվում է հասնել կրիային և անցնել նրանից, եթե դեսականորեն (Զենոնի կարծիքով իհարկե) դա անելն անհնար է:





Նկար 2

Ոչ պակաս փարօրինակ եզրակացության է հանգեցնում նաև Զենոնի մյուս ապորիան, որ կոչվում է «Մարզադաշտ»: Ենթադրենք մարզադաշտում ունենք մարմինների երեք շարք (նկ. 2, ա): Շարք 1-ը դադարի վիճակում է: Իսկ շարք 2-ի և 3-ի մարմինները միավեսակ արագությամբ սկսում են շարժվել դեմ հանդիման և որոշ ժամանակ անց հայտնվում են նկար 2, բառում ցոյց փված իրավիճակում: Ընդ որում, շարք 3-ի առաջին մարմինը այդ ժամանակ անցնում է շարք 2-ի բոլոր մարմինների կողքով, այսինքն՝ որոշ S հեռավորություն: Միաժամանակ նա անցնում է և շարք 1-ի մարմինների կեսի կողքով՝ հաղթահարելով $S/2$ հեռավորություն: Քանի որ այդ երկու հեռավորություններն են միաժամանակ են հաղթահարվում, ապա սրացվում է, որ ամբողջ հավասար է իր կեսին՝

$$S = \frac{S}{2} :$$

Բայց սա անհեթերություն է: Դաշվի առնելով, որ մենք այդ անհեթեր եզրակացությանն ենք հանգել՝ համարելով, որ շարք 2-ը և շարք 3-ը շարժվում են, ապա պարզավոր ենք ընդունել, որ իրականում նրանք շարժվել չեն կարող:

Շարժում գոյություն չունի, այսպիսի փարօրինակ հեփսության հանգեց Զենոնը:

Նեփարբիր է, որ երբ Զենոնի ապորիաների հետ ծանոթացրին մի այլ իին հոյն փիլիսոփայի՝ Դիոգենեսին, վերջինս վեր կացավ և սկսեց լուս եփ ու առաջ շարժվել՝ դրանով ցոյց փալով, որ շարժումն իրականում այնուամենայնիվ գոյություն ունի:

Շափ դարեր անց ցանկանալով արժանին մարդուցել Դիոգենեսի հնարամդությանը՝ Ա. Ս. Պուշկինը գրել է.

Շարժում չկա, ասաց իմաստունը մորուքավոր,

Մյուսը լուս ուժին ելավ ու նրա առաջ քայլեց...

Սակայն Դիոզենեսը բավականաշափ իմաստուն էր՝ հասկանալու համար, որ քայլելով Զենոնին չես հերքի... դեռ ավելին, եթի նրա աշակերպներից մեկը լիովին բավարարվեց այդ «հերքումով», Դիոզենեսն սկսեց փայտով ծեծել նրան՝ ծեծելը հիմնավորելով այսպես. «Պետք էլ բավարարվել զգացմունքային ճշմարգությամբ, այլ անհրաժեշտ է հասկանալ»:

Այնպես որ, եթե ուզում եք զբնել Զենոնի ապօրիաների լուծումը, ապա դա պետք է անել ոչ թե գործնականում, այլ Զենոնի դափողություններում թույլ դրված սխալը որոնելու ուղիով:

Անհարժեշտ է նշել, որ Զենոնի ապօրիաների՝ բոլորի կողմից ընդունված լուծումներ առ այսօր գոյություն չունեն: Զենոնի առաջարկած խնդիրների վերլուծությունը ցույց փառեց, որ մեխանիկական շարժմանն իսկապես հարուկ են փարօրինակ և նույնիսկ հակասական հարկություններ: Այդպիսի հարկություններից մեկն էլ հարաբերականության հարկությունն է:

Զենոնն առաջինն էր, որ ընդհարվեց շարժման հարաբերականության խնդրի հետ: Իր «Մարզադաշտ» ապօրիայում նա դիմում է մարմնի շարժումը երկու փարբեր հաշվարկման մարմինների նկարմամբ (հաշվարկման մի մարմինը շարք 1-ն է, մյուսը՝ շարք 2-ը): Երկու փարբեր հաշվարկման մարմինների նկարմամբ միևնույն մարմնի միաժամանակյա շարժման նկարագրությունը փարբեր արդյունքներ փառեց: Սակայն դրանից բխող ճիշդ եզրակացությունը ոչ թե շարժման անհնարինության զաղափարն է, այլ շարժմանը ներքուստ հարուկ հարաբերականության հարկության գոյության զաղափարը:

Հարցեր

1. Ի՞նչ է մեխանիկան:

2. Ինչո՞վ է փարբերվում կինեմատիկան դինամիկայից:

3. Ի՞նչն է կոչվում մեխանիկական շարժում:

4. Ի՞նչ են հասկանում՝ ասելով «շարժման հարաբերականություն»:

5. Ո՞վ է զբնվում շարժման մեջ՝ ավտորուստվ ընթացող ուղևո՞րը, թե՛ կանգուում կանգնած մարդը:

§ 2. Անհավասարաչափ շարժում: Միջին արագություն

VII դասարանի դասագրքի աղյուսակ 2-ում բերված ոչ բոլոր մարմինների շարժումներն են հավասարաչափ: Միայն ձայնը, լույսը և ռադիոալիքները որոշակի պայմաններում փարածվում են հասպարուն արագությամբ: Այյուսակում բերված մնացած մարմինների արագությունները շարժման ընթացքում փոփոխվում են: Այդ պատճառով դրանց համար բերված են արագությունների միջին կամ առավելագույն արժեքները, որոնց կարող են հասնել մարմինները շարժման ընթացքում:

Շարժումը, որի ընթացքում մարմնի արագությունը հերազգի փարբեր փեղամասներում փարբեր է, կոչվում է **անհավասարաչափ:**

Անհավասարաչափ շարժումը բնութագրվում է **միջին արագությամբ:** Անհավասարաչափ շարժման միջին արագությունը գրնում են ճիշդ այնպես, ինչպես հավասարաչափ շարժման արագությունը, այսինքն՝ մարմնի անցած ճանապարհը բաժանում են շարժման ժամանակամիջոցի վրա.

$$V_{\text{միջ.}} = \frac{S}{t} :$$

Այս բանաձևով հաշվարկված միջին արագության արժեքը հերազգի փարբեր փեղամասներում կարող է փարբեր լինել: Անհավասարաչափ շարժման դեպքում որոշ փեղամասներում մարմինն ունենում է փոքր արագություններ, այլ փեղամասներում՝ մեծ արագություններ: Օրինակ՝ կայարանից հեռացող գնացքը սկսում է մեծացնել իր արագությունը: Մոդելնարկով կայարանին՝ ընդհակառակը, գնացքն ասդիմանաբար փոքրացնում է իր արագությունը:

Միայն հավասարաչափ շարժման ընթացքում է, որ ամբողջ հերազգի վրա մարմնի արագության թվային արժեքը չի փոխվում:

Դարցեր

1. Ո՞ր շարժումն է կոչվում անհավասարաչափ: 2. Բերեք անհավասարաչափ շարժման օրինակներ: 3. Ինչպես են որոշում մարմնի միջին արագությունը:

Փորձարարական առաջադրություններ: 1. Որոշներ ձեր միջին արագությունը 100 մ փարածությունը վագրով անցնելիս: 2. Եթե ձեր փանը կա լարովի խաղալիք ավտոմեքենա, ապա, կարող ենք համապարփառ չափումներ, որոշներ նրա միջին արագությունը որոշակի ճանապարհ անցնելիս: Չափման արդյունքները գրանցենք փեքրում:

§ 3. Արագացում

Ֆիզիկայի VII դասարանի դասընթացում դուք ուսումնասիրել եք շարժման ամենապարզ գործակը՝ հավասարաչափ ուղղագիծ շարժումը: Այդպիսի շարժման դեպքում մարմնի արագությունն անփոփոխ է, և ժամանակի ցանկացած հավասար հարվածներում մարմինը հավասար ճանապարհ է անցնում:

Շարժումների մեծ մասը, սակայն, չի կարելի հավասարաչափ համարել: Ճանապարհի որոշ հարվածներում մարմինները կարող են մեծ արագություն ունենալ, այլ հարվածներում՝ փոքր: Օրինակ՝ երկաթուղային կայարանից ճանապարհվող գնացքն սկսում է ասրիճանաբար շարժվել ավելի ու ավելի արագ, իսկ եերթական կայարանին մոդենալիս, ընդհակառակը, սկսում է ասրիճանաբար դանդաղեցնել ընթացքը:

Կարարենք այսպիսի փորձ: Փոքրիկ սայլակի վրա կաթոցիկ գրեղադրենք, որից միավեսակ ժամանակահարվածներում ներկված հեղուկի կաթիլներ են կաթում: Սայլակը գրեղադրենք թեր քախսրակի վրա և բաց թողնենք: Կրեսնենք, որ սայլակի ներքև շարժվելու հետ կաթիլների թողած հետքերի միջև ընկած հեռավորությունը գնալով մեծանում է (նկ. 3): Դա նշանակում է, որ հավասար ժամանակահարվածներում սայլակն անհավասար ճանապարհներ է անցնում: Սայլակի արագությունն աճում է: Ընդ որում, դժվար չէ ապացուցել, որ թեր հարթությունից ներքև գլորվող սայլակի արագությունը հավասար ժամանակահարվածներում աճում է միշտ միևնույն չափով:

Անհավասարաչափ շարժման ժամանակ, եթե ցանկացած հավասար ժամանակահարվածներում մարմնի արագությունը փոփոխում է միավեսակ, ապա շարժումն անվանում են **հավասարաչափ արագացող**:

Այսպես, օրինակ՝ փորձերով ապացուցված է, որ ազար անկման մեջ գրնվող ցանկացած մարմնի արագությունը (օդի դիմադրության բացակա-



Նկար 3

յության դեպքում) յուրաքանչյուր վայրկյանում աճում է մոտ 9,8 մ/վ, այսինքն՝ եթե շարժման սկզբում մարմինը դադարի վիճակում է, ապա անկումն սկսելուց մեկ վայրկյան անց նրա արագությունը կհասնի 9,8 մ/վ-ի, ելի մեկ վայրկյան անց 19,6 մ/վ-ի, ելի մեկ վայրկյան անց՝ 29,4 մ/վ-ի և այլն:

Հավասարաչափ արագացող շարժման յուրաքանչյուր վայրկյանի ընթացքում մարմնի արագության փոփոխության չափը ցույց տվող ֆիզիկական մեծությունը կոչվում է **արագացում**:

ա – արագացում:

Միավորների ՄՎ -ում արագացման միավոր է ընդունված այն արագացումը, որի դեպքում յուրաքանչյուր վայրկյանում մարմնի արագությունը փոփոխում է 1 մ/վ-ով: Այս միավորը նշանակում են 1 մ/վ² և անվանում են «մեկ մետր վայրկյան քառակուսի»:

Արագացումը բնութագրում է արագության փոփոխության թափը: Եթե օրինակ, մարմնի արագացումը հավասար է 10 մ/վ^2 , նշանակում է՝ մարմնի արագությունը յուրաքանչյուր վայրկյանում փոփոխում է 10 մ/վ-ով , այսինքն՝ 10 անգամ արագ, քան 1 մ/վ^2 արագացման դեպքում:

Կյանքում հանդիպող արագացման օրինակներ կարելի է գրնել աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Արագացումը

Մերձքաղաքային էլեկտրագնացքը	0,6 մ/վ ²
Տրոլեյբուսը կանգնած դեղից շարժվելիս	1,2 մ/վ ²
Ուղևորափար ինքնաթիռը թափ առնելիս	1,7 մ/վ ²
Արքանյակը արձակվելու դեպքում	10 մ/վ ²
Գնդակը Կալաշնիկովի ավլումագի փողում	600.000 մ/վ ²

Ինչպես են հաշվում արագացումը, որով մարմիններն սկսում են շարժվել:

Ընդունենք, թե հայդնի է, որ կայարանից շարժվող էլեկտրագնացքի արագությունը 2 վայրկյանի ընթացքում աճում է $1,2 \text{ մ/վ-ով}$: Այդ դեպքում 1 վայրկյանի ընթացքում արագության աճն իմանալու համար անհրաժեշտ է

1,2 մ/վ-ը բաժանել 2 վ-ի վրա: Կսդանանք 0,6 մ/վ²: Դա էլ հենց էլեկտրագնացքի արագացումն է:

Այսպիսով՝ հավասարաչափ արագացող շարժում սկսող մարմնի արագացումը որոշելու համար անհրաժեշտ է մարմնի ձեռք բերած արագությունը բաժանել այդ արագությունը ձեռք բերելու համար ծախսած ժամանակի վրա.

$$\text{արագացումը} = \frac{\text{ձեռք բերած արագություն}}{\text{ժամանակ}}.$$

Այս արդահայքության մեջ մինող բոլոր մեծությունները նշանակենք լավիներեն դատելով. արագացումը՝ a-ով, ձեռք բերած արագությունը՝ v-ով, արագություն ձեռք բերելու վրա ծախսված ժամանակը՝ t-ով:

Վյդ դեպքում արագացումը որոշելու բանաձևը կարելի է գրել հետևյալ գեներով.

$$a = \frac{v}{t} : \quad (3.1)$$

Այս բանաձևը ճիշդ է, եթե հավասարաչափ արագացող շարժումն սկսվում է դադարի վիճակից, այսինքն՝ եթե մարմնի սկզբնական արագությունը հավասար է զրոյի: Մարմնի սկզբնական արագությունը նշանակում են v₀-ով: Այսպիսով՝ (3.1) բանաձևը ճիշդ է այն դեպքում, եթե v₀=0:


Իսկ եթե զրոյի է հավասար ոչ թե սկզբնական, այլ շարժման վերջնական արագությունը, ապա արագացման բանաձևն այսպիսի գեներ է սպանում.

$$a = \frac{v_0}{t} : \quad (3.2)$$

Արագացման բանաձևն այս գեներով գործածվում է այն դեպքերում, եթե v₀ արագություն ունեցող մարմինն սկսում է ավելի ու ավելի դանդաղ շարժվել, մինչև որ վերջապես կանգ է առնում (v=0):

Տես այս բանաձևով պետք է հաշվենք ավտոմեքենայի և գրանսպորտային այլ միջոցների արգելակման արագացումը: Վյդ դեպքում որպես ժամանակ պետք է ընդունենք արգելակման ժամանակը:

Ինչպես և արագությունը, մարմնի արագացումը նոյնպես բնութագրվում է ոչ միայն թվային արժեքով, այլև ուղղությամբ: Դա նշանակում է, որ արագացումը նոյնպես վեկտորական մեծություն է: Վյդ պարզաբու նկարներում այն պարկերվում է սլաքի գեներով:



Եթե հավասարաչափ արագացող ուղղագիծ շարժման դեպքում մարմնի արագությունն աճում է, ապա արագացումը և արագությունը նույն ուղղությունն ունեն (նկ. 4, w). իսկ եթե դվյալ շարժման ժամանակ մարմնի արագությունը նվազում է, ապա արագացումն ուղղված է հակառակ ուղղությամբ (նկ. 4, p):

Հավասարաչափ ուղղագիծ շարժման դեպքում մարմնի արագությունը չի փոխվում: Այդ պարզաբուվ այդպիսի շարժման դեպքում արագացումը բացակայում է ($a=0$), և պարզ է, որ նկարներում որևէ կերպ պարկերվել չի կարող:

Տարցեր

1. Ո՞ր շարժումն են անվանում հավասարաչափ արագացող:
2. Ի՞նչ է արագացումը:
3. Ի՞նչ է բնութագրում արագացումը:
4. Ո՞ր դեպքերում է արագացումը հավասար զրոյի:
5. Նանգստի վիճակից հավասարաչափ արագացող շարժման դեպքում ի՞նչ բանաձևով է որոշվում մարմնի արագացումը:
6. Շարժման արագությունը մինչև զրո նվազելու դեպքում ի՞նչ բանաձևով է որոշվում մարմնի արագացումը:
7. Ի՞նչ ուղղություն ունի արագացումը հավասարաչափ արագացող ուղղագիծ շարժման դեպքում:

Փորձարարական առաջադրանք: Քանոնն օգբագործելով որպես թեր հարթություն՝ նրա վերին ծայրին մելքաղադրամ դրե՛ք և բաց թողեք: Կշարժվի՞ արդյոք մելքաղադրամը: Եթե շարժվի, ապա ինչպե՞ս՝ հավասարաչափ, թե՞ հավասարաչափ արագացող: Ինչպե՞ս է դա կախված բանոնի թերության անկյունից:

§ 4. Հավասարաչափ արագացող շարժման արագությունը

Հավասարաչափ արագացող շարժման փեսությունը մշակել է իրավացի նշանավոր գիտնական Գալիլեօն Գալիլեյը: 1638 թվականին լույս փեսավ նրա «Գիտության երկու նոր ճյուղերին՝ Մեխանիկային և Տեղային շարժմանը վերաբերող զրույցներ և մաթեմատիկական ապացույցներ» գիրքը: Գալիլեյն առաջինը դրվեց հավասարաչափ արագացող շարժման ձևակերպումը և ապացուցեց մի շարք թեորեմներ, որոնցով նկարագրվում էին այդ շարժման օրինաչափությունները:

Ձեռնամուխ լինելով *հավասարաչափ արագացող ուղղագիծ շարժման հերազությանը՝ սկզբում պարզենք*, թե ինչպես է որոշվում մարմնի արագությունը, եթե հայտնի են մարմնի արագացումը և շարժման ժամանակը:

Բանաձև (3.1)-ից հետևում է, որ զր ($v_0=0$) սկզբնական արագության դեպքում

$$v = at : \quad (4.1)$$

Այս բանաձևը ցույց է փալիս, որ *շարժումն սկսելուց և ժամանակ անց մարմնի արագությունը որոշելու համար անհրաժեշտ է մարմնի արագացումը բազմապատկել շարժման ժամանակով*:

Տակառակ դեպքում, եթե մարմնի արագությունը զնալով նվազում է, և այն վերջիվերջո կանգ է առնում ($v=0$), արագացման (3.2) բանաձևը թույլ է փալիս որոշել մարմնի սկզբնական արագությունը.

$$v_0 = at : \quad (4.2)$$

Հավասար արագացող շարժման դեպքում մարմնի արագության փոփոխության ակնառու պարբերը կարելի է սպանալ՝ կառուցելով **արագության գրաֆիկ**:

Արագության գրաֆիկները 14-րդ դարի կեսերին առաջին անգամ ներմուծել են ֆրանցիսկյան միաբանության վանական, գիտնական Զիովաննի դի Կազալիսը և Ռուան քաղաքի գաճարի ավագ սարկավագ Նիկոլա Օրեմը, որը հետագայում Ֆրանսիայի թագավոր Կարլ 5-րդի խորհրդականը դարձավ:



Գալիլեօն Գալիլեյ



Նրանք առաջարկեցին հորիզոնական առանցքի վրա գեղադրել ժամանակը, իսկ ուղահայաց առանցքի վրա՝ արագությունը: Հավասարաչափ արագացող շարժման դեպքում կոորդինատների այդպիսի համակարգում արագության գրաֆիկները ուղիղ գծի վեսք ունեն, որոնց թեքությունը ցույց է գտնիլիս, թե ինչքան արագ է փոխվում արագությունը ժամանակի ընթացքում:

Աճող արագությամբ շարժումը նկարագրող (4.1) բանաձևին համապարփականում է նկար 5-ում պարկերված արագության գրաֆիկը: Նկար 6-ում պարկերված գրաֆիկը համապարփականում է նվազող արագությամբ շարժմանը:

Հավասարաչափ արագացող շարժման դեպքում մարմնի արագությունն անընդհագ փոխվում է: Արագության գրաֆիկները թույլ են գտնիլի մարմնի արագությունը որոշել ժամանակի դարրենք պահերին: Բայց երբեմն անհրաժեշտ է լինում իմանալ ոչ թե արագությունը ժամանակի այս կամ այն կոնկերս պահին (այդպիսի արագությունն անվանում են *ակնթարթային*), այլ շարժման միջին արագությունը ողջ ճանապարհի ընթացքում:

Առաջինը Գալիլեյին հաջողվեց լուծել հավասարաչափ արագացող շարժման դեպքում միջին արագությունը որոշելու խնդիրը: Իր ուսումնասիրություններում նա օգբագործեց շարժումը նկարագրելու գրաֆիկական ներառությամբ:

Համաձայն Գալիլեյի գետսության, եթե հավասարաչափ արագացող շարժման դեպքում մարմնի արագությունն աճում է զրոյից մինչև մի որոշ



Ն արժեք, ապա այդպիսի շարժման միջին արագությունը հավասար կլինի ձեռք բերված արագության կեսին.

$$v_{\text{միջ.}} = \frac{v}{2} : \quad (4.3)$$

Նմանօրինակ բանաձև ճիշդի է նաև նվազող արագությամբ շարժման դեպքում: Եթե այն մի որոշ v_0 սկզբնական արժեքից նվազում է մինչև զրո արժեքը, ապա այդպիսի շարժման միջին արագությունը հավասար կլինի

$$v_{\text{միջ.}} = \frac{v_0}{2} : \quad (4.4)$$

Սրացված արդյունքները կարելի են լուսաբանել արագության զրաֆիկի օգնությամբ: Այսպես օրինակ՝ նկար 5-ում պարկերված զրաֆիկին համապատասխանող շարժման միջին արագությունը որոշելու համար պետք է զգնենք 6 մ/վ-ի կեսը: Արդյունքում սրանում ենք 3 մ/վ: Սա էլ հենց դիպարկվող շարժման միջին արագությունն է:

Տարցեր

1. Ո՞վ է հավասարաչափ արագացող շարժման առաջին դիստության հեղինակը:
2. Ինչպես է որոշվում դադարի վիճակից հավասարաչափ արագացող շարժում կարարող մարմնի արագությունը:
3. Նկար 5-ում պարկերված զրաֆիկից օգտվելով՝ որոշե՛ք մարմնի արագությունը շարժումն սկսելուց երկու վայրկյան անց:
4. Նկար 6-ում պարկերված զրաֆիկից օգտվելով՝ որոշե՛ք մարմնի շարժման միջին արագությունը ամբողջ շարժման ընթացքում:

§ 5. Հավասարաչափ արագացող շարժման ճանապարհը

Շարժման միջին արագությունը և ժամանակն իմանալով՝ կարելի է որոշել անցած ճանապարհը.

$$s = v_{\text{միջ.}} t : \quad (5.1)$$

Այս բանաձևում դիտարկելով (4.3) արդահայտությունը՝ կսպանանք դադարի վիճակից հավասարաչափ արագացող շարժում կարարող մարմնի անցած ճանապարհը.

$$s = \frac{v_0 t}{2} : \quad (5.2)$$

Իսկ եթե մենք (5.1) բանաձևում դեղադրենք (4.4) արդահայփությունը, ապա կորոշենք արգելակման դեպքում մարմնի անցած ճանապարհը.

$$s = \frac{v_0 t}{2} : \quad (5.3)$$

Վերջին երկու բանաձևերի մեջ մտնում են v_0 և t արագությունները: Այդ արագությունները կարելի է որոշել (4.1) և (4.2) բանաձևերով: Տեղադրելով (4.1) արդահայփությունը (5.2) բանաձևում, իսկ (4.2) արդահայփությունը (5.3) բանաձևում, կստանանք

$$s = \frac{at^2}{2} : \quad (5.4)$$

Սպազմած բանաձևը ճիշդ է ինչպես դադարի վիճակից հավասարաչափ արագացող շարժման, այնպես էլ նվազող արագությամբ շարժման համար, եթե ճանապարհի վերջում մարմինը կանգ է առնում: Երկու դեպքում էլ անցած ճանապարհը համեմատական է շարժման ժամանակի քառակուսուն (այլ ոչ թե պարզապես ժամանակին, ինչպես հավասարաչափ արագացող շարժման դեպքում էր):

Գալիքո Գալիքը առաջինը հայփնաբերեց այս օրինաչափությունը:

Աղյուսակ 2-ում ներկայացված են հավասարաչափ արագացող շարժումը նկարագրող հիմնական բանաձևերը:

Իր գիրքը, որի մեջ (ի թիվս այլ հայփնագործությունների) շարադրված էր հավասարաչափ արագացող շարժման դեսությունը, Գալիքը չփեսավ: Եթե այն հրաժարակվեց, 74-ամյա գիտնականն արդեն կուրացել էր: Գալիքը շափ ծանր էր դանում դեսության կորուսդը:

Հավասարաչափ արագացող շարժում

Շարժման բնութագիրը	$v_0 = 0, \quad v \neq 0$	$v_0 \neq 0, \quad v = 0$
Արագացում	$a = \frac{v}{t}$	$a = \frac{v_0}{t}$
Ժամանակ	Ժամանակը ժամանակը $t = \frac{v}{a}$	Վրգելակման ժամանակը $t = \frac{v_0}{a}$
Արագություն	Վերջնական արագությունը $v = at$	Սկզբնական արագությունը $v_0 = a t$
Անցած ճանապարհ	$s = \frac{at^2}{2}$	$s = \frac{at^2}{2}$

«Կարո՞ղ եք պարկերացնել, – գրում է նա, – ինչպես եմ դառապում, երբ զիտակցում եմ, որ այս երկինքը, այս աշխարհն ու Տիեզերքը, որոնք անցած հարյուրամյակների զիտության մարդկանց պարկերացումների համեմափ՝ իմ դիրքարկումներով ու հսկակ ապացույցներով մի քանի հազար անգամ ընդարձակվել են, այժմ ինձ համար այսպես կրծագվել ու փոքրացել են»:

Դրանից հինգ դարի առաջ Գալիլեյին հավաքարննության (ինկվիզի-ցիայի) դադին ենթարկեցին: Աշխարհի կառուցվածքի մասին նրա հայցըները (Գալիլեյը կողմնակից էր Կոպենհագենի համակարգին, որի կենդրունական մարմինը Արեգակն էր և ոչ թե Երկիրը) վաղուց արդեն դուր չէին գալիս և կեղեցու սպասավորներին: Դոմինիկյան վանական Կաչինին դեռևս 1614 թվականին Գալիլեյին հերետիկոս հայդարարեց, իսկ մաթեմատիկան՝ դիվային հորինվածք: Արդեն 1616 թվականին ինկվիզիցիան պաշտոնապես հայդարարեց, որ «Կոպենհագենի վերագրվող ուսմունքը, որի համաձայն՝ Երկիրն է պարզվում Արեգակի շուրջը, Արեգակն էլ կանգնած է Տիեզերքի կենդրունում, հակառակ է Սուրբ գրքին և այդ պարզաբուվ պեսք չէ այն ոչ պաշտպանել, ոչ էլ ընդունել որպես ճշմարգություն»: Կոպենհագենի գիրքը և նրանում շարադրված համակարգի զադափարը արգելվեց, իսկ Գալիլեյը զգուշացվեց, որ եթե նա «չհանգստանա, ապա նրան բանդարկության կդադապապարփեն»:

Սակայն Գալիլեյը «չհանգստանավ»: «Աշխարհում չկա ավելի մեծ արե-

լություն, – գրում էր զիբնականը, – քան տգիպության դածած ափելությունը զիբության հանդեպ»: 1632 թվականին լույս է դնեսնում նրա «Երկխոսություն աշխարհի պարունակույան և կովետնիկույան երկու զիխավոր համակարգերի մասին» հոչակավոր գիրքը: Այդ գրում Գալիլեյը սրբարաթիվ փասփարկներ է ներկայացնում Կոպեռնիկոսի համակարգի օգիքին: Սակայն վաճառել հաջողվեց «Երկխոսության» միայն 500 օրինակ՝ քանի որ մի քանի ամիս անց, Նոոմի պապի կարգադրությամբ, գրքի հրապարակիչը հրաման սրբացավ դադարեցնել վաճառքը:

Նոյն դարվա աշնանը Գալիլեյը հավաքաքննության (ինկվիզիցիայի) դափարանից գրավոր կարգադրություն է սրբանում Նոոմ ներկայանալու մասին, և որոշ ժամանակ անց 69-ամյա իիվանդ զիբնականին պարզակով հասցնում են Նոոմ: Այսին՝ հավաքաքննության դափարանի բանդում, Գալիլեյին սրբիպում են հրաժարվել աշխարհի կառուցվածքի մասին իր հայացքներից: 1633 թվականի հուլիսի 22-ին Միներվայի հոոմեական մենասփառում Գալիլեյը կարդում և սպորագրում է հրաժարման վաղօրոք պարբասպաված դրեսպը. «Ես՝ Գալիլեո Գալիլեյս, հանգուցյալ Վինչենցո Գալիլեյ Ֆլորենտացու որդին, 70 տարեկան, անձամբ բերված դափարան, Զերդ Մրբազնությունների, Բարձրապարփիվ պարոն կարդինալների, զիխավոր հավաքաքնիչների առաջ, իմ առջև ունենալով Սուրբ Ավելաքանը և ձեռքս դնելով նրա վրա, ծնկաչոք երդվում եմ, որ ես միշտ հավաքացել եմ, այժմ ել հավաքում եմ և ապագայում ել Ասպծո օգնությամբ պիտի հավաքամ այն ամենին, որ սուրբ կաթոլիկական և առաքելական հոոմեական եկեղեցին ընդունում եմ, որոշում է ու քարոզում եմ»:

Դափարանի որոշման համաձայն՝ Գալիլեյի գիրքն արգելվեց, իսկ Գալիլեյը բանփարկության դափապարփվեց անորոշ ժամանակով: Սակայն Նոոմի պապը ներում շնորհեց Գալիլեյին և բանփարկությունը փոխարինեց աքսորով: Գալիլեյը դեղափոխվեց Արչեպքի և այնքեղ, դժուակին կալանքի դրակ գրնվելով, գրեց «Գիպության երկու նոր ճյուղերին՝ Մեխիանիկային և Տեղային շարժմանը վերաբերող գրույցներ ու մաթեմատիկական ապացույցներ» գիրքը: 1636 թվականին գրքի ձեռագիրն ուղարկվեց Հոլանդիա, որպես և այն դրագորվեց 1638 թվականին: Այս գրում Գալիլեյն անփոփում էր իր բազմամյա ֆիզիկական հետազոտությունների արդյունքները:

Այդ նույն փարում Գալիեյը լիովին կուրացավ: Վիվիանին (Գալիեյի աշակերգը), պարմելով մեծ զիվնականին պարահած ահավոր դժբախ- փության մասին, գրում է. «Նրա աչքերից փանջալից արդահոսք սկսվեց, այնպես, որ մի քանի ամիս անց բոլորովին առանց աչքերի մնաց, այո՛, ասում եմ՝ առանց իր աչքերի, որոնք կարծ ժամանակում այս աշխարհում ավելին են փեսել, քան բոլոր մարդկային աչքերն անցյալ բոլոր դարերի ընթաց- քում»:

Գալիեյին այցելության եկած ֆլորենտացի հավագրաքնիչը Շռում ու- ղարկած իր նամակում հաղորդում էր, թե նրան շատ ծանր վիճակում է զգել: Այդ նամակի վրա հիմնվելով՝ Շռոմի պապը Գալիեյին թույլագրում է վերա- դառնալ Ֆլորենցիա՝ հարազար դրուն, որպես նրան անմիջապես գրավոր կարգադրություն են հանձնում. «Բանքում ցմահ բանքարկության և եկեղե- ցուց վփարվելու ահից քաղաք դուրս չգալ և ոչ մեկի հետ, ով ուզում է լինի, չխոսել Երկրի երկակի շարժման անիջալ զադափարի մասին»:

Սակայն Գալիեյն իր փանը երկար չմնաց: Մի քանի ամիս անց նրան նո- րից հրամայեցին վերադառնալ Վրչեպրի: Չորս փարի անց՝ 1642 թվականի հունվարի 8-ին՝ զիշերված ժամը չորսին, Գալիեյը մահացավ:

«Տարցեր

1. Ինչո՞վ է փարբերվում հավասարաշափ արագացող շարժումը հավա- սարաշափ շարժումից:
2. Ինչո՞վ է փարբերվում հավասարաշափ արագացող շարժման ճանա- պարի բանաձևը հավասարաշափ շարժման ճանապարի բա- նաձևից:
3. Ի՞նչ զիփեր Գալիեյի կյանքի ու սրենդագործությունների մասին, ո՞ր թվականին է նա ծնվել:

§ 6. Ազար անկում: Ազար անկման արագացում

Արիստոփելի ժամանակներից սկսած համարվում էր, որ ծանր մարմի- նը թեթևից ավելի արագ է ընկնում:

Եթե մի մարմինը, ասենք, հարյուր անգամ ծանր է մյուսից, ապա, ըստ

Արիստոփելի, այն պեղը է հարյուր անգամ ավելի արագ ընկնի (և եթե դրանք միաժամանակ են ընկնում հարյուր կանգուն բարձրությունից, ապա այն պահին, երբ ավելի ծանր մարմինը կիասնի գետնին, թեթևու կանցնի ընդամենը մեկ կանգուն բարձրություն՝ առաջինից 99 կանգուն հետք մնալով): Թե ինչու էր նա այդպես մկածում, հայրնի չէ: Այդ ուղղությամբ Արիստոփելը հարցուկ փորձեր չի կարարել: Ինչպես Օ. Լոշն է ասել, «հավանաբար նա հիշել է քարի և փերուրի օրինակը և բավարարվել է այդքանով»: Փաստորեն, այդքանով բավարարվել էին նաև մյուսները: Արիստոփելի հայացքները մարդկանց այնքան բնական և ակնհայտ էին թվում, որ հաջորդող 18 հարյուրամյակների ընթացքում զրեթե ոչ ոք դրանք կասկածի բակ չառավ:

Սակայն 1553 թ-ին իբրաւացի գիտնական Զովանի Բենեդեկտին մի հոդված հրապարակեց, որում հայրարարեց, որ հակառակ Արիստոփելի՝ երկու մարմին, որոնք ունեն նույն ձևը և նույն խորոշությունը, բայց օժբված են բարբեր կշիռներով, նույն միջավայրում հավասար ժամանակամիջոցում հավասար ճանապարհներ են անցնում: Այս պնդումը փորձնական ապացուցում էր պահանջում: Ուստի XVI դարի վերջից այս ու այնպեղ բարբեր գիտնականներ սկսում են փորձեր կարարել՝ ծանր մարմինները աշխարակներից ներքև ներկելով: Այդ փորձերից առաջինները կարարվեցին Պիզայի հանրահայտ ընկնող աշխարակից (նկ. 103): Լեզենդի համաձայն՝ առաջինը դա արեց Գալիլեյը: «Մի գեղեցիկ առավոք,- զրում է Օ. Լոշը,- ամբողջ համալսարանի ներկայությամբ նա բարձրացավ հայրնի ընկնող աշխարակը՝ իր հետք վերցնելով հարյուր ֆունքանց և մեկ ֆունքանց երկու գունդ: Նա դրանք դեղադրեց աշխարակի եզրին և միաժամանակ բաց թողեց: Դրանք միասին ընկան և միասին էլ հասան գետնին: Գետնին ընկնող գների խոլ հարվածը հնչեց որպես ֆիզիկայի հին համակարգի թաղման զանգահարություն և ավելից նորի ծնունդը»:

Երբ Արիստոփելի փեսության կողմնակիցներից մեկը կշփամբեց Գալիլեյին նրանում, որ խոսելով ծանր և թեթև գնդերի միաժամանակյա անկման մասին՝ նա խեղաթյուրում է ճշմարդությունը, գիտնականը պարասխանեց: «Այս փորձը կարարելով՝ դուք կիեսնեք, որ մեծ գունդը առաջ կանցնի փորձից երկու մագնաչափ, ուստի երբ մեծը ընկնի գետնին, փոքրը նրանից հետք մնացած կլինի ընդամենը երկու մագնաչափով: Այս երկու մագուվ

դուք ուզում եք ծածկել Արիստոփենի իննունինը կանգունը, և խոսելով իմ փոքր սխալի մասին՝ լռում եք մյուսի հսկայական սխալի մասին... Տարբեր զանգվածներ ունեցող մարմինների անկման արագության փարբերությունը կախված է նրանց կշիռներից, այլ պայմանավորված է արդարին պայման-ներով՝ զլիսավորապես միջավայրի դիմադրությամբ, ուստի եթե վերացնենք այս վերջինը, ապա մարմինները նույն արագությամբ կընկնեն»:

Սա իսկապես այդպես է, և եթե փոքր կարաքենք սրվակով, որի միջից հանվել է օդը, ապա կվեսնենք, որ թերև փետուրը և կապարե կորորակը նույն արագությամբ կընկնեն: Անկման ընթացքում դրանք նույն ժամանակամիջոցում կանցնեն նույն փարածությունը և սրվակի հարակին կդիպչեն ժամանակի նույն պահին: Քանի որ ճանապարհը գրնում ենք $s=at^2/2$ բանաձևով, ապա մարմինների միաժամանակյա անկումից հեգեսում է, որ դրանց շարժումը դրենի է ունենում նույն արագացմամբ:

Դիշեցնենք, որ մարմինների անկումը միայն ծանրության ուժի ազդեցությամբ (օդի դիմադրության բացակայությամբ) անվանում են *ազարտանկում*, իսկ արագացումը, որով այն կարարվում է, նշանակում են *g* փառով և կոչում *ազարտանկում արագացում*:

Գալիլեյի ընդհանրացված օրենքն ասում է.

Տիեզերական ձգողականության նույն դաշտում բոլոր մարմինների ազարտանկումը, անկախ դրանց զանգվածից և ծավալից, տեղի է ունենում նույն արագացմամբ:

Դարցեր

1. Ո՞ր երևոյթն է կոչվում ազարտ անկում: 2. Զևակերպե՛ք Գալիլեյի օրենքը ազարտ անկման վերաբերյալ: 3. Ինչի՞ց է կախված ազարտ անկման արագացումը:

§ 7. Հավասարաչափ շրջանագծային շարժում

Հավասարաչափ արագացող ուղղագիծ շարժման հետ միաժամանակ շարտ հաճախ հանդիպում ենք հավասարաչափ շրջանագծային շարժմանը: Վյոպիսի շարժում են կարարում պարզվող անիվների, լիսեւնների, փուրբին-


ների ոռոգության կերպով, Երկրի՝ շրջանաձև ուղեծրելով պարզվող արհեստական արբանյակները և այլն: Դավասարաչափ շրջանային շարժման դեպքում արագության թվային արժեքը մնում է հաստափուն: Սակայն այդպիսի շարժման դեպքում արագության ուղղությունն անընդհափ փոխվում է:


Շրջանագծային ուղեծրի յուրաքանչյուր կերպում մասնիկի արագությունն ուղղված է այդ կերպում հետագծին դարձած շոշափողով (նկ. 7): Ասվածը դմվար չէ հաստափել փորձով: Պողպարե կպրիչը հպենք պարզվող սրոցաքարին: Մենք կիենանենք, որ սրոցաքարի շիկացած մասնիկները թռչում են հպման կերպում նրան դարձած շոշափողի ուղղությամբ (նկ. 8):

Շրջանագծով պարզվող մարմինը արագության ուղղության անընդհափ փոփոխության պարբերով արագացում է ձեռք բերում: Այդ արագացումը բնութագրում է ոչ թե արագության թվային արժեքի (այն չի փոփոխվում), այլ նրա ուղղության փոփոխության արագությունը:

Ինչպես է ուղղված արագացումը շրջանագծով հավասարաչափ շարժման դեպքում: Այն չի կարող ուղղված լինել ոչ շարժման ուղղությամբ (քանի որ այդ դեպքում մարմնի արագությունը կմնանա, և շարժումը կդադարի հավասարաչափ լինել), ոչ էլ շարժմանը հակառակ ուղղությամբ (քանի որ այս դեպքում էլ մարմնի արագությունը կնվազի, ինչը շարժումը կդադարի անհավասարաչափ):

Շրջանագծային հավասարաչափ շարժման դեպքում մարմնի արագացումը միշտ ուղղված է դեպի շրջանագծի կենտրոնը (նկ. 9): Այդ պարբերով այն կոչվում է կենտրոնաձիգ արագացում:





Նկար 9

Կենտրոնաձիգ արագացումը որոշելու համար անհրաժեշտ է շարժման արագությունը քառակուսի աստիճան բարձրացնել և բաժանել այն շրջանագծի շարավղի վրա, որով շարժվում է մարմինը:

$$a = \frac{v^2}{r} : \quad (7.1)$$

Մենք չենք ապացուի այս բանաձևը, քանի որ ապացույցը բավականաչափ բարդ է:

«արցեր»

1. Շրջանագծային հավասարաչափ շարժման դեպքում ի՞նչ է գենդի ունենում մարմնի արագության ուղղության և թվային արժեքի հետ:
2. Ի՞նչ է բնութագրում կենտրոնաձիգ արագացումը: Ինչո՞ւ է այն այդպես կոչվում:
3. Ի՞նչ բանաձևով է որոշվում կենտրոնաձիգ արագացումը:

§ 8. Պիրման պարբերություն և հաճախություն

Շրջանագծային հավասարաչափ շարժումը բնութագրվում է պիրման պարբերությամբ և հաճախությամբ:

Պիրման պարբերությունը այն ժամանակամիջոցն է, որի ընթացքում կափարվում է մեկ պիրույք: Եթե, օրինակ՝ շրջանագծով շարժվող մարմինը $t=4$ վ-ում կափարել է $n=2$ պիրույք, ապա դժվար չէ հասկանալ, որ մեկ պիրման գրանդությունը 2 վ է: Սա էլ հենց պիրման պարբերությունն է: Այն նշանակվում է T գրառով և որոշվում հեգլսյալ բանաձևով.

$$T = \frac{t}{n} : \quad (8.1)$$

Այսպիսով՝ պիրման պարբերությունը որոշելու համար անհրաժեշտ է **ո** թվով պիրույքներ կափարելու վրա ծախսված ժամանակը բաժանել պիրույքների թվի վրա:

Շրջանագծային հավասարաչափ շարժումը բնութագրող մյուս մեծությունը պարզման հաճախությունն է:

Պարզման հաճախությունը մեկ վայրկյանում կարարվող պարույրների թիվն է: Եթե, օրինակ, $t=2$ վ-ում մարմինը կարարել է $n=10$ պարույր, ապա դժվար չէ հասկանալ, որ 1 վ-ում այն հասցրել է կարարել 5 պարույր: Այս թիվն էլ հենց արդարացնելու պարզման հաճախությունը: Այն նշանակվում է հունարեն v (կարդացվում է նյու) փառով և որոշվում է հեքեյալ բանաձևով.

$$v = \frac{n}{t} : \quad (8.2)$$

Այսպիսով՝ պարզման հաճախությունը որոշելու համար անհրաժեշտ է պարույրների թիվը բաժանել այն ժամանակի վրա, որի ընթացքում այդ պարույրները կարարվել են:

Միավորների UN -ում պարզման հաճախության միավոր է ընդունված այն հաճախությունը, որի դեպքում յուրաքանչյուր վայրկյանում մարմինը կարարում է մեկ պարույր: Վյու միավորը նշանակվում է այսպես. $1/v$ կամ v^{-1} (կարդացվում է՝ վայրկյանի մինուս մեկ ասդիճան): Նախկինում այս միավորն անվանում էին «պարույր վայրկյանում», իսկ այժմ նման անվանումը հնացած է համարվում:

(8.1) և (8.2) բանաձևերը համեմատելու դեպքում կարելի է նկարել, որ պարբերությունն ու հաճախությունը միմյանց հակադարձ մեծություններ են: Այդ պարզմանը՝

$$T = \frac{1}{v}, \quad v = \frac{1}{T} : \quad (8.3)$$

(8.1) և (8.3) բանաձևերը թույլ են դալիս որոշել պարզման T պարբերությունը, եթե հայտնի են պարույրների ո թիվը և պարույրների ժամանակը կամ պարզման v հաճախությունը: Սակայն այն կարելի է որոշել նաև այն դեպքում, եթե այդ մեծություններից ոչ մեկը հայտնի չէ: Դրանց փոխարեն բավական է իմանալ մարմնի արագությունը և այն շրջանագծի r շառավիղը, որով շարժվում է մարմինը: Նոր բանաձևը սպանալու համար հիշենք, որ պարզման պարբերությունն այն ժամանակամիջոցն է, որի ընթացքում շարժ-

Վող մարմինը կարարում է մեկ պտոյք, այսինքն անցնում է շրջանագծի երկարությանը հավասար ճանապարհ ($\ell_{2\pi} = 2\pi r$, որտեղ $\pi \approx 3,14$ -ը մաթեմատիկայի դասընթացից հայտնի «պի» թիվն է): Բայց մենք զիվենք նաև, որ հավասարաչափ շարժման դեպքում ժամանակը որոշվում է՝ անցած ճանապարհը բաժանելով շարժման արագության վրա: Այսպիսով՝

$$T = \frac{\ell_{2\pi}}{v} = \frac{2\pi r}{v} : \quad (8.4)$$

Մարմնի պտղուման պարբերությունը որոշելու համար անհրաժեշտ է շրջանագծի երկարությունը, որով շարժվում է մարմինը, բաժանել նրա արագության վրա:

«Տարցեր»

1. Ի՞նչ է պտղուման պարբերությունը:
2. Ինչպես կարելի է որոշել մարմնի պտղուման պարբերությունը, եթե հայտնի են պտոյքների թիվն ու ժամանակը:
3. Ի՞նչ է պտղուման հաճախությունը:
4. Ի՞նչ գրառով է նշանակվում պտղուման հաճախությունը:
5. Իմանալով ժամանակն ու պտոյքների թիվը՝ ինչպես կարելի է որոշել պտղուման հաճախությունը:
6. Միմյանց հետ ինչպես են կապված պտղուման պարբերությունն ու հաճախությունը:
7. Մարմնի շարժման արագությունն ու շրջանագծի շառավիղն իմանալով՝ ինչպես կարելի է որոշել մարմնի պտղուման պարբերությունը:

§ 9. Նյուփոնի առաջին օրենքը

1727 թվականի մարտի 20-ին վախճանվեց անզիացի հանճարեղ գիտ-

նական Իսահակ Նյուփոնը: Անզիացի թագավոր Գեորգ I-ի հրամանագրով Լոնդոնի Վեսպմինհս-փերյան գերեզմանոցում գիլբնականին մեծ հանդիսավորությամբ հանձնեցին հողին: Ռուդարկավորությանը մասնակցեց անզիական դրումիկ ազնվականության վերնախավը՝ հերցոգներ, պերեր, կոմսեր: Ռուդարկավորությունից հետո Վոլփերը¹ գրեց. «Նյուփնի մի ընկերախմբում վերջերս ծեծված ու անմիտ հարց էր քննարկվում, թե ո՞վ է եղել մարդկության մեծագույն մարդը՝ Ռուիսու Կեսարը, Ալեքսանդր Մակեդոնացին, Լենկթեմո՞րը, թե՝ Կրոմվելը: Ինչ-որ մեկն ասաց, թե մեծագույն

Իսահակ Նյուփոն

մարդն անկասկած Իսահակ Նյուփոնն է: Եվ նա իրավացի էր: Մենք պետք է շնորհակալ լինենք Նյուփոնին, քանի որ նա մեր բանականությանը դիմեց ոչ թե բռնությամբ, այլ ճշմարդության ուժով»:

«Բնությունը նրա համար,— ավելի ուշ գրել է Էյնշվեյնը,— բաց գիրք էր, որը նա կարդում էր առանց դժվարության»:

Իր գիտական վաստակի համար Նույրոնն ասպետի կոչում սպացավ: Եվ լիովին իրավունք ուներ մահվան մահճում ասելու. «Արեցի, ինչ կարող էի, ուրիշները թող ավելի լավ անեն»:

Նյուփոնը ծնվել է 1642 թվականին՝ Գալիլեյի մահվան դարում: Ծնվել է չափազանց թույլ և այնքան փոքր, որ նրան կարելի էր լողացնել զարեցրի մեծ գավաթում: Մի ամբողջ շարաթ նրա կյանքը մազից էր կախված: Սակայն ճակարտագրին հաճո էր, որ մահը պարպեսի, և երեխան ողջ մնա:

1 Իսկական անունը՝ Ֆրանսուա Մարի Արուե Վոլփեր (1694-1778), Փրանսիական լուսավորիչների դարաշրջանի հանրահայք գրող և փիլիսոփա:

Դպրոցում Նյուփոնը սկզբում վագ էր սովորում, առաջադիմության ցուցակում գրադեցնում էր նախավերջին տեղը: Սակայն համադասարանցու հետք ինչ-որ առիթով պարահած ծեծկովորից հետք նա որոշում է ապացուցել, որ դասընկերոջը կարող է հաղթել նաև առաջադիմության ցուցակում նրանից առաջ անցնելով, և հրապուրվելով ուսմամբ՝ սկսում է մեկը մյուսի եվրայից առաջ անցնել դասարանի բոլոր աշակերպներից: Շուպով Իսահակը դառնում է դպրոցի լավագույն աշակերպը:

Մանկության փարիներին Նյուփոնը անրջելու և մդրերի մեջ խորասուգվելու հակում ուներ: Նա ոգևորված բանասքեղծություններ էր գրում, նկարում էր, ձեռքով զանազան բաներ պարբասպում՝ արևային ու ջրային ժամացույցներ, բամու ուժով աշխափող աղաց, թղթե օդապարիկ և այլն:

Դպրոցական փարիներին նրա միակ ընկերը իր կողմից ծեծկած համադասարանցու քույրն էր: Շատ փարիներ անց նա պարմում էր, որ Իսահակը «հանգիստ, կշռադապված ու խելացի փղա էր: Նա երբեք չէր խաղում բակի փղաների հետ և նրանց բոի զվարճանքներին չէր մասնակցում: Մնալով աղջիկների հետ՝ նա հաճախ էր փոքրիկ սեղանիկներ, զավաթիկներ և այլ խաղալիքներ պարբասպում և՛ իմ, և՛ իմ ընկերուիկների համար, որպեսզի մենք կարողանայինք դրեղավորել մեր փիկնիկներն ու էժանագին զարդարանքները»:

1661 թվականին Նյուփոնն ընդունվում է Քեմբրիջի համալսարանի Տրինիտի քուեջը: Չորս փարի անց ավարտում է այն՝ դառնալով արվեստների բակալավր:

1665 թվականին Անգլիայում խոլերայի համաճարակ փարածվեց: Փրկվելու համար քաղաքի բնակիչներն սկսեցին հետանալ շրջակա նոսր բնակեցված գյուղերը: Նյուփոնը նույնպես լրում է Քեմբրիջը և վերադառնում հայրենի գյուղ: Քաղաքային իրարանցումից հետք գյուղում անցկացրած այդ երկու փարիները նրա համար շապի արդյունավետ եղան: Իր գլխավոր հայփնագործությունները նա արեց այդ ժամանակ, մշակեց մաթեմատիկական հետքագործության նոր եղանակներ, սպեցեց գույների գիտությունը, բացահայտեց փիեզերական ձգողականության օրենքը և այլն: Սակայն այդ ժամանակ նրա ձեռք բերած արդյունքները հրապարակվեցին միայն շապի ժամանակ անց:

Նրա բազմամյա գիրական հետազոտությունների արդյունք եղավ «Բնական փիլիսոփայության մաթեմատիկական հիմունքները» վերնագրով հիմնարար աշխարհությունը: 1687 թվականին լույս բենած այդ գրքի առաջարանում Նյուփոնը գրել է. «Այս աշխարհանքը մեր կողմից առաջարկվում է որպես Ֆիզիկայի մաթեմատիկական հիմունքներ: Ֆիզիկայի դժվարությունն այն է, որ շարժման երևույթներով ճանաչի բնության ուժերը, որից հետո այդ ուժերով բացարձի բնության մյուս երևույթները»:

Նյուփոնի գիրքն սկսվում էր մեխանիկայի արմադրական հասկացությունների (գանգված, ուժ և այլն) ձևակերպումով: Դրան հաջորդում էին «աքսիոմները կամ շարժման օրենքները», որոնց վրա հիմնվելով ապացուցվում էին բազմաթիվ հետևանքներ ու թերեմներ:

Նյուփոնի ձևակերպած աքսիոմներն այժմ կոչվում են **Նյուփոնի օրենքներ**:

Նյուփոնի առաջին օրենքը պնդում է.

Յուրաքանչյուր մարմին պահպանում է իր դադարի կամ հավասարաչափ ուղղագիծ շարժման վիճակը, քանի դեռ գրնվում է մեկուսացած վիճակում:

Մեկուսացած մարմին հասկացության դակ այս օրենքում նկատի է առնվում Տիեզերքի մնացած բոլոր մարմիններից անսահման հեռու գրնվող մասնիկը (նյութական կերպ):

Նյուփոնի առաջին օրենքը գործում է ոչ բոլոր հաշվարկման համակարգերում: Դաշվարկման համակարգերը, որոնցում գործում է Նյուփոնի առաջին օրենքը, կոչվում են **իներցիալ**: Եթե Արեգակի կենտրոնով դանենք կոռորդինատային առանցքներ և դրանք ուղղենք միայնակ հեռավոր ասդեմքի ուղղություններով, ապա այդպիսի հաշվարկման համակարգի նկարմամբ ցանկացած մեկուսացած մարմնի արագությունը գործնականում կմնա անփոփոխ: Դա նշանակում է, որ Արեգակի և հեռավոր ասդեմքի հետ կապված հաշվարկման համակարգը բավարար ճշգրությամբ կարելի է իներցիալ համարել: Եթերի հետ կապված հաշվարկման համակարգը, խափորեն ասած, իներցիալ չէ, քանի որ հեռավոր երկնային մարմինները (որոնց գործնակա-

նում կարելի է մեկուսացած համարել) ուղիղ գծով շարժվելու փոխարեն Երկրի նկարմամբ օրական պրոֆական շարժման մեջ են գտնվում: Երկրային հաշվարկման համակարգի ոչ իներցիալությունը պայմանավորված է Երկրի պրոյքտով և՝ իր առանցքի, և՝ Արեգակի շուրջը: Սակայն այդ պրոյքտները համեմատաբար դանդաղ են դրեի ունենում, այդ պարզապով շատ դեպքերում Երկրի հետ կապված հաշվարկման համակարգը կարելի է մոդավորապես իներցիալ համարել:

Մենք հաշվարկման մարմին կրնդունենք Երկիրը: Վյո դեպքում Նյուփոնի օրենքները կզործեն միայն մոդավոր ճշգրտությամբ, սակայն շատ խնդիրների լուծման համար այդ ճշգրտությունը լիովին բավարար է:

Խիստ ասած՝ բնության մեջ մեկուսացված մարմիններ գոյություն չունեն: Վյո պարզապով Նյուփոնի առաջին օրենքը նկարագրում է ոչ թե իրական, այլ երևակայական իրադրություն: Նրանում խոսվում է այն մասին, թե ինչպես կշարժվեր մարմինը, եթե նրան շրջապատող բոլոր մարմինները հանկարծ նրանից անսահման հետու հայդրվեին: Մինչ Նյուփոնը կային գրաբեր կարծիքներ: Ոմանք համարում են, որ այդ դեպքում մարմինը կդադարեցնի շարժումը (քանի որ նրան շարժվել հարկադրող մարմինները անհետացել են), ուրիշները (հետևելով Գալիլեյին) այլ կարծիք են արդահայփում: Նրանք համարում են, որ միայն սկզբում հանգստի վիճակում գրնվող մարմինը կմնար հանգստի վիճակում, իսկ շարժվող մարմինը իներցիայով կշրունակի շարժվել իր սկզբնական արագությամբ:

Նյուփոնը Գալիլեյի հայացքների կողմնակիցն էր, ինչն էլ արդահայրեց իր առաջին օրենքում: Մնացած մարմիններից անսահման հետավորության վրա գրնվող մարմիններ Տիեզերքում գոյություն չունեն: Բայց կարող են լինել իրադրություններ, երբ այդ հետավորություններն այնքան մեծ են, որ դիպարկվող մարմինը բավական մեծ ճշգրտությամբ կարելի է մեկուսացած համարել: Վյապես օրինակ՝ միջասպրդային դարպարկ փարածությունում գրնվող դիեզերակայանը դիեզերական մարմիններից այնքան հետու է հայդրնվում, որ նրա շարժումը կարելի է նկարագրել Նյուփոնի առաջին օրենքի օգնությամբ: Շարժիչներն անջապեկուց հետո, այդպիսի կայանը կանգ չի առնում, այլ անփոփոխ արագությամբ շարունակում է ուղիղ գծով շարժվել Արեգակի ու ասդերի նկարմամբ: Ներկա պահին հենց այդպես են շարժվում ԱՄՆ-ի

կողմից արձակված ավտոմագր կայաններ «Պիոներ-10»-ը (1972 թ. մարտի 3), «Պիոներ-11»-ը (1973 թ. ապրիլի 6), «Վոյաջեր-1»-ը (1977 թ. սեպտեմբերի 5), որոնք դուրս են եկել Արեգակնային համակարգության սահմաններից:


Նարզեր

1. Ինչո՞վ է փարբերվում դինամիկան կինեմատիկայից:
2. Ո՞րն է Նյուփոնի առաջին օրենքի լությունը:
3. Նյուփոնի առաջին օրենքում ո՞ր մարմնի նկարմամբ է դիմարկվում շարժումը:
4. Ո՞ր մարմինն են կոչում մեկուսացած: Գոյություն ունե՞ն նրանք բնության մեջ:
5. Ի՞նչ կարող եք ասել մեկուսացած մարմնի արագացման մասին:
6. Մեկուսացած մարմինների շարժման հարցում Գալիլեյի և Նյուփոնի հայացքներն ինչո՞վ են փարբերվում իրենց նախորդների պարկերացումներից:
7. Ի՞նչ է նշանակում հաշվարկման համակարգ:
8. Ո՞ր հաշվարկման համակարգերն են անվանում իներցիալ:

§ 10. Նյուփոնի երկրորդ օրենքը

Նյուփոնի առաջին օրենքում դիմարկվում էր Տեղերքի մնացած բոլոր մարմիններից անսահման հետու գրնվող մարմինը: Այդպիսի մարմինը Արեգակի ու հեռավոր ասդդերի նկարմամբ չի կարող փոխել իր արագությունը և այդ պարբերով նրանց նկարմամբ պահպանում է կամ դադարի, կամ հավասարացակի ուղղագիծ շարժման վիճակը:

Մենք հաշվարկման համակարգը կապելու ենք Երկրի հետ: Դիմարկելով մարմինների շարժումը Երկրի մակերևույթի մոտ՝ կարելի է նկարել, որ մարմնի արագությունը Երկրի նկարմամբ փոխվում է միայն այն ժամանակ, երբ նրա վրա սկսում են ազդել այլ մարմիններ: Դա լուսաբանենք մի քանի օրինակներով:



Նկար 10

Դրելով վազոնիկը՝ մենք շարժման մեջ ենք դնում այն (նկ.10): Այս դեպքում վազոնիկի արագությունը փոխվում է մարդու ձևորի ազդեցության պարբառով:


Զրի մեջ խցան իջևաններ, որի վրա երկարյա ամրակ է դրված: Մազնիսը, ձգելով երկարյա ամրակը, շարժման մեջ է դնում և ամրակը, և խցանը (նկ.11): Այս դեպքում մազնիսն այն մարմինն է, որը փոխում է ամրակի և խցանի արագությունը:

Գնդի վրա ձևորի ազդեցության դեպքում զսպանակի գալարներն սկսում են շարժվել և զսպանակը սեղմվում է (նկ. 12, ա): Բաց թողնելով այն՝ մենք կլինանենք, թե ինչպես ուղղվելով, զսպանակը շարժման մեջ է դնում գունդը (նկ. 12, բ): Գնդի վրա ազդող մարմինն այսպես սկզբում մարդու ձևորն էր, իսկ հետո ազդող մարմին դարձավ զսպանակը:



Ներկայացված բոլոր օրինակներում մարմնի արագության փոփոխության (հետևարար նաև մարմնի կողմից արագացում ձևոր բերելու) պատճառը այլ մարմինների կողմից նրա վրա գործադրած ազդեցությունն էր:

Այդ ազդեցության չափը վեկտորական (այսինքն՝ ուղղություն ունեցող) ֆիզիկական մեծություն է և կոչվում է **ուժ**:

Եթե մարմնի նկարմամբ ուժ չի գործադրվում ($F=0$), ապա նշանակում է, որ նրա վրա ոչ մի ազդեցություն չկա: Այդ պարբառով, այդպիսի մարմնի արագությունը Երկրի նկարմամբ (ինչպես նաև ցանկացած այլ իներցիալ



Նկար 11



Նկար 12

հաշվարկման համակարգի նկարմամբ) կմնա անփոփոխ: Իսկ եթե ընդհակառակը, ուժը $F \neq 0$, ապա մարմինը որոշակի ազդեցություն է կրում, և նրա արագությունը կփոխվի: Ընդ որում, այդ դեպքում մարմնի ձևոր բերած արագությունը կախված է ինչպես ազդող ուժից, այնպես էլ փվյալ մարմնի զանգվածից: Դիշեցնենք, որ ու զանգվածը բնութագրում է մարմնի իներգությունը:

Նյուտոնի երկրորդ օրենքը արգահայքում է արագացման, ուժի և զանգվածի միջև գործող կապը:

Մարմնի զանգվածի և արագացման արգադրյալը հավասար է այն ուժին, որով նրա վրա ազդում են շրջապատող մարմինները:

Նյուտոնի երկրորդ օրենքը մաթեմատիկորեն արգահայքվում է հետևյալ բանաձևով՝

$$ma = F : \quad (10.1)$$

Եթե մարմնի (նյութական կետի) վրա միաժամանակ ազդում են մի քանի ուժեր, ապա (10.1) բանաձևում F -ը դրանց համագորն է: Եթե մարմնի նկարմամբ կիրառվող F ուժը հավասար է զրոյի, մարմնի արագությունը Երկրի նկարմամբ մնում է անփոփոխ: Իսկ եթե համազոր ուժը զրոյից տարբեր է, ապա մարմինը արագացում է ձևոր բերում, որի ուղղությունը համընկնում է համազոր ուժի ուղղության հետ:

Նյուտոնի երկրորդ օրենքի բանաձևից որոշենք արագացումը.

$$a = \frac{F}{m} : \quad (10.2)$$

Այսպեսից կարելի է երկու հետևյալ կապարել.

1. Ինչքան մեծ է փվյալ մարմնի վրա ազդող ուժը, այնքան մեծ է մարմնի արագացումը, և, հետևաբար, այնքան արագ է փոխվում փվյալ մարմնի արագությունը:
2. Ինչքան մեծ է մարմնի զանգվածը, այնքան փոքր արագացում է այն ձևոր բերում փվյալ ուժի ազդեցության արդյունքում և այդ պարճառով նույնքան էլ դանդաղ է փոխում իր արագությունը:

Նյուտոնի երկրորդ օրենքի հիման վրա ներմուծվում է ուժի միավոր՝ նյութունը (1 Ն): 1 նյութունն այն ուժն է, որով անհրաժեշտ է ազդել 1 կգ զանգված ունեցող մարմնի վրա՝ նրան 1 m/s^2 արագացում հաղորդելու համար:

Գործնականում կիրառվում են նաև ուժի այլ միավորներ, օրինակ՝ կիլոնյուգոնն ու միլինյուգոննը:

1 կՆ=1000 Ն, 1 մՆ=0,001 Ն:

Նյուգոնի երկրորդ օրենքը երբեմն անվանում են դինամիկայի հիմնական օրենք: Օրենքի հայդնագործումից հետո մարմինների շարժմանը վերաբերող այնպիսի խնդիրների լուծման հնարավորություն առաջացավ, որոնք մինչ Նյուգոնը անլուծելի էին համարվում: Նախկինում անհասկանալի թվացող շափ երևույթներ բացարձություն սպացան ֆիզիկայի պարզ ու հսկակ օրենքների հիման վրա: «Բնական փիլիսոփայության մաթեմատիկական հիմունքների» լույս դրանելուց հետո Նյուգոնի գլուխությունն սկսեց շափ արագ դարձվել ողջ Եվրոպայով մեկ: Նյուգոնի աշխարհությունը թարգմանվեց բազմաթիվ լեզուներով: Նոր գլուխության ժողովրդականությունն այնքան մեծ էր, որ նույնիսկ բացվեցին կանացի դասընթացներ՝ «Նյուգոնականությունը դիմում համար» անունով:

Այն մասին, թե Նյուգոնի ժամանակակիցներն ինչպես ընդունեցին այդ հանճարեղ աշխարհանքը, կարելի է դարել նրա հրաքարակչի հետևյալ խոսքերից. «Գրեթե անհնար է բառերով արտահայտել այն, թե ինչքան լույս, ինչպիսի վեհություն կա մեր ականավորագույն հեղինակի հիասքանչ սփեղծագործության մեջ: Նրա մեծագույն և երջանկագույն հանճարն այնպիսի դժվարագույն խնդիր է լուծել, այնպիսի սահմանների է հասել, որ հույս էլ չկար, թե մարդկային բանականությունն ի վիճակի է մինչև այնպեղ բարձրանալ»:

Հարցեր

- Ի՞նչն է մարմինների արագության փոփոխության պարճառը: Բերե՛ք օրինակներ:
- Ինչի՞ չափն է ուժը:
- Զևակերպե՛ք Նյուգոնի երկրորդ օրենքը:
- Ի՞նչ կարող եք ասել մարմնի արագության և արագացման մասին, եթե այդ մարմնի վրա ուժ չի ազդում ($F=0$):
- Ինչպիսի՞ երկու հետևանքներ են բխում Նյուգոնի երկրորդ օրենքից:
- Ինչպե՞ս է կոչվում ուժի միավորը:

§ 11. Նյուփոնի երրորդ օրենքը

Իր առաջին օրենքում Նյուփոնը նկարագրում է մարմնի այնպիսի վիճակ, եթե վերջինս այլ մարմինների ազդեցություն չի կրում: Այս դեպքում մարմինը կամ պահպանում է հանգստի իր վիճակը, կամ շարժվում հավասարաչափ ուղղագիծ (իներցիալ հաշվարկման համակարգի նկարմամբ):

Նյուփոնի երրորդ օրենքում քննարկվում է հակառակ իրադրությունը: Այժմ դպյալ մարմնի վրա ազդում են արդաքին մարմիններ, ըստ որում ազդող մարմինների քանակը կարող է կամայական լինել: Դիմումը մարմինը, շրջակայրում գտնվող մարմինների ազդեցության դաշտը, սկսում է շարժվել արագացումով: Ըստ որում, պարզվում է, որ դպյալ մարմնի զանգվածի և արագացման արդարությալը հավասար է ազդող ուժին:

Զևակերպելով այս երկու օրենքները՝ Նյուփոնը ձեռնամուխ եղավ այնպիսի իրադրության վերլուծությանը, եթե փոխազդեցությանը մասնակցում են միայն երկու մարմիններ: Ընդունենք, թե կան երկու՝ A և B մարմիններ, որոնք միմյանց ձգում են F և F' ուժերով: Այդ երկու ուժերից մեկը կարո՞ղ է մյուսից մեծ լինել: Այդ ինդրի շուրջ մփորումները Նյուփոնին հանգեցրին այսպիսի եզրակացության. նման քան չի կարող լինել: Երկու մարմինների փոխազդեցության ուժերը միշտ հավասար են մեկը մյուսին: Ինչի՞ հիման վրա Նյուփոնը հանգեց այդպիսի եզրակացության: Ահա թե ինչպես էր նա մփածում:

«Ինչ վերաբերում է ձգողականությանը, ապա կրծագ այն կարելի է շարադրել այսպես: Փոխադարձաբար միմյանց ձգող երկու մարմինների միջև անհրաժեշտ է պարկերացնել որևէ արգելապատճեց, որը մարմիններին թույլ չի տալիս մոփենալ միմյանց: Եթե այդ մարմիններից մեծը ավելի ուժեղ ձգվեր, քան B մարմինն է ձգվում A մարմնի կողմից, ապա արգելքը A մարմնի կողմից ավելի մեծ ճնշման կենթարկվեր, քան B մարմնի կողմից: Շեփսարար, հավասարակշռությունը կխսախրվի: Գերակշռող ճնշման ազդեցությամբ այդպիսի համակարգը ազագ դարձության մեջ կշարժվեր արագացումով և կհեռանար դեպի անսահմանություն: Այսպիսի եզրակացությունն անհեթեթ է և հակառակ է առաջին օրենքին... Այսպեսից հեփսում է, որ երկու մարմիններն ել արգելապատճեցի վրա հա-


վասար ճնշում են գործադրում, որեմն և փոխադարձաբար նոյն կերպ են ձգվում»:

Փորձերը հասդարում են Նյուփոնի եզրակացությունը: Վերցնենք երկու սայլակ: Մեկի վրա մազնիս ամրացնենք, մյուսի վրա՝ մի կփոք երկար և դրանք միացնենք ուժաչափերին: Մենք կդեսնենք, որ ուժաչափերի ցուցմունքները համընկնում են (նկ.13): Դա նշանակում է, որ այն ուժը, որով մազնիսը դեպի իրեն է ձգում երկաթը, մեծությամբ հավասար է այն ուժին, որով երկաթը դեպի իրեն է ձգում մազնիսը: Այդ ուժերը հավասար թվային արժեքներ ունեն, բայց հակառակ ուղղվածություններ. դեպի մազնիսը ձգող ուժն ուղղված է ձախ, իսկ դեպի երկաթը ձգող ուժը՝ աջ:


Յանկացած երկու մարմինների փոխազդեցության ուժերը մեծությամբ միշտ հավասար են, ուղղությամբ՝ հակառակ:

Այս պնդումը կոչվում է **Նյուփոնի երրորդ օրենք**: Նյուփոնի երրորդ օրենքը հիմնավորում է «փոխազդեցություն» հասկացության ներմուծումը: Եթե մի մարմին ազդում է մյուս մարմնի վրա, ապա երկրորդ մարմինը նոյնպես ազդում է առաջինի վրա: Այլ խոսքով ասած՝ չի կարող այնպես լինել, որ մի մարմինն ազդի երկրորդի վրա, բայց երկրորդը չափո՞ի առաջինի վրա: Ինչպես գրում է ինքը՝ Նյուփոնը, «ազդեցության նկարմամբ միշտ գործում է հավասար և հակադիր հակազդեցություն», մասնավորապես «եթե մեկը մարով սեղմում է քարը, ապա քարն էլ մարին է սեղմում, եթե ձին քաշում է ճոպանով կապված քարը, ապա հակառակը (եթե կարելի է այդպես արդահայփել) ինքն էլ հավասար ուժով եփ է ձգվում դեպի քար»:

Նյուփոնի երրորդ օրենքից հետևում է, որ մարմնի կշիռը, այսինքն՝ ուժը, որով մարմինը ճնշում է իր հենարանի վրա (կամ ձգում կախողը), մեծությամբ համընկնում է հենարանի կողմից դպայլ մարմնի վրա ազդող ուժին: Ուժը, որով հենարանը ճնշում է իր վրա գրնվող մարմնին, կոչվում է **հենարանի հակազդեցության ուժ**: Հենարանի հակազդեցության ուժը նշանա-



Նկար 13



Նկար 14

կեկով N փառով՝ կարող ենք գրել.

$$P = N: \quad (11.1)$$


Համապատասխան իրադրությունը ներկայացված է նկար 14-ում:

Սպազված բանաձևն ավելի ընդհանուր է, քան $P = mg$ բանաձևը, քանի որ այն արդարացի է և այն դեպքում, եթե մարմինը հենարանի հետք միասին արագացող շարժման մեջ է:

Բանաձև (11.1)-ով արդահայտված օրինաչափությունը կարելի է սպուզել փորձով: Վերցնենք կլոր ցուցափախտակով երկու ուժաչափ և դնենք մեկը մյուսի վրա (նկ. 15): Մենք կփեսնենք, որ վերևի ուժաչափը ճիշփ նույն ուժը ցույց կդրա, ինչ որ ներքեւինը:

Տարկ է հիշել, որ փոխազդեցության ուժերը, որոնց մասին խոսվում է Նյուփոնի երրորդ օրենքում, միևնույն մարմնի նկարմամբ կիրառվել չեն կարող. դրանք այն ուժերն են, որով մարմինները ազդում են միմյանց վրա (նկ.16):

Եթե Նյուփոնին հարցին, թե ինչ ուղիղվ է հասել հայտնազործություններին, նա պարախանեց. «Մշգրավես նրանց մասին էի մրածում: Ուսումնասիրության առարկան միշփ իմ առաջ է, և ես սպասում եմ, մինչև խավարը ճեղքող լուսաբացի առաջին ճառագայթներն ասքիճանաբար լուսավորեն այն ուժեղ ու վառ լույ-




Նկար 16

սով»:

Այն մասին, թե ինչպիսի փիփանական աշխափանք է թաքնված «լուսաբացին սպասելու» եվլուսում, հետազայում պարմեց նրա քարտուղար Դեմֆրին. «Նա (Նյուփոնը)

մշգրավես զբաղված էր աշխափանքով... Նա իրեն որևէ և լանակով հանգստանալու կամ շունչ քաշելու ժամանակ չէր դալիս՝ ձի չէր նսպում, չէր զբունում, կեզզի չէր խաղում, սպորտով չէր զբաղվում: Նա կորած էր համարում յուրաքանչյուր ժամը, որը նվիրված չէր հետազորություն-



Նկար 15

ներին: Նա զրեթե դուրս չէր գալիս իր աշխարհանյակից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ որպես լյուկասովյան պրոֆեսոր գնում էր դասախոսություններ կարդալու: Դասախոսություններին շափ քչերն էին հաճախում և շափ քիչ բան հասկանում: Դասախոսությունը հաճախ կարդացվում էր դաստիք լսարանում, միայն պարերի համար... Նա այնքան էր փարզում հետազոտություններով, որ հաճախ մոռանում էր ճաշել: Ոչ հազվադեպ նրա սենյակ մվրնելով՝ ես ճաշը գրնում էի սեղանին՝ բոլորովին ձեռք չըված, և միայն իմ հիշեցումից հետո նա ուրբի վրա մի բան էր ուրում... Գիշերվա ժամը 2-3-ից շուրջ հազվադեպ էր պատկում քնելու, իսկ որոշ դեպքերում առավույթյան ժամը 5-6-ին էր պատկում քնելու, նա միշտ 4-5 ժամ էր քնում, հարկապես աշնանն ու գարնանը: Նրա մրագանջությունից ու մշգրական աշխարհից դադելով՝ կարծում եմ, որ նա ծգում էր անցնել մարդկային ուժի ու արվեստի սահմանագիծը»:

Իրեն նախորդած մեծերի աշխարհանքներին հարգանքի վորք մարդուցելով՝ Նյուփոնն ասում էր, որ եթե ինքը նույնիսկ «ուրիշներից ավելի հեռուն է գրեսել, ապա միայն այն պարճառով, որ կանգնած է եղել գիրանների ուսերին»: Իսկ մահվանից մի փոքր առաջ նա գրեց. «Ես չգիտեմ՝ աշխարհն ինձ ինչպիսին է պարկերացնում, բայց ես ինքս ինձ ուղղակի երեխա եմ թվում, որ ծովափին խաղում է և սովորականից ավելի գեղեցիկ խեցի կամ ողոքը քարեր որոնելով՝ զվարճանում, մինչդեռ ճշմարգության՝ նրա առաջ փոված օվկիանոսը մնում է կարարելապես չքացահայփած»:

Քեմբրիջում կանգնեցված Նյուփոնի արձանին այսպիսի մակագրություն կա. «Բանականությամբ նա զերազանցում էր մարդկային ցեղին»:

Նյուփոնի փառքն այնքան մեծ էր, որ հայտնի մաթեմատիկոս Լույիտա-լը դեռ Նյուփոնի կենդանության ժամանակ զարմանում էր, որ մի՞թե նա էլ սովորական մարդու նման ուրում, խմում, քնում է: Իսկ Վեստմինստերյան արքայությունում, որդեռ թաղված է Նյուփոնը, կարելի է կարդալ մահարձանին դրոշմված այսպիսի բառեր. «Թող մահկանացուները իրավեն, որ զոյություն է ունեցել մարդկային ցեղի այսպիսի զարդ»:

Նսկայական է Նյուփոնի հայացքների ազդեցությունը Փիզիկայի հետազա զարգացման վրա: «Նյուփոնը, – գրում է ակադեմիկոս Վավիլովը, – Փիզիկային սփիպեց մրածել իր նման՝ «դասականորեն», ինչպես արդա-

հայդրում ենք մենք այժմ: Նյուփոնի լեզվով մենք խոսում ու մդրածում ենք, և միայն այժմ են նոր լեզու սպեղելու փորձեր արվում: Ահա՝ ինչու կարելի է պնդել, թե Ֆիզիկայի վրա նրա մդրի անհագրական կնիքն էր խփված, առանց Նյուփոնի գիրությունը այլ կերպ կզարգանար»:

Դարցեր

1. Ձևակերպեք Նյուփոնի երրորդ օրենքը:
2. Ենթադրենք, թե ավտոմեքենային ընդառաջ թռչող ճանճը բախվում է մեքենայի դիմապակուն: Հարվածի պահին, որ մեկն էր ավելի մեծ ուժով գործում՝ ճա՞նճը, թե՛ ավտոմեքենան:
3. Հայդրնի է, որ երկրագունդը դեպի իրեն է ձգում մոդիկ գրնվող մարմինները: Զգում են արդյո՞ք այդ մարմինները երկրագնդին:
4. Ի՞նչն է ավելի ուժեղ ձգում՝ խնձո՞րը երկրագնդին, թե՛ երկրագունդը՝ խնձորին:
5. Նյուփոնի երրորդ օրենքի համաձայն՝ թվային արժեքով ո՞ր ուժի հետ է համընկնում մարմնի կշիռը:

§ 12. Մարմնի իմպուլս

Մենք գիտենք, որ մարմնի արագության փոփոխության պարբեր այլ մարմինների ազդեցությունն է: Պարզենք, թե ինչ ուժ է պահանջվում տ ժամանակում մարմնի արագությունը O -ից մինչև մի որոշ շահագնելու համար: Ելեկով Նյուփոնի երկրորդ օրենքից՝ $F = ma$, իսկ (3.1) բանաձևի համաձայն՝ $a = v/t$, հետևաբար՝

$$F = \frac{mv}{t}: \quad (12.1)$$

Սպազմած արդահայփության աջ մասում գրնվող զանգվածի և արագության արդադրյալը նշանակենք p դրառով.

$$p = mv:$$

Մարմնի զանգվածի և արագության արդադրյալին հավասար Փիզիկական մեծությունը կոչվում է **մարմնի իմպուլս**.

$$p - \text{մարմնի իմպուլս:}$$

Եթե մարմինը դադարի վիճակում է, ապա նրա իմպուլսը հավասար է գրոյի: Արագության աճի հետ մարմնի իմպուլսը մեծանում է:


Իմպուլսը վեկտորական մեծություն է: Իմպուլսի վեկտորի ուղղությունը համընկնում է մարմնի արագության ուղղության հետ:

Միավորների UΝ-ում իմպուլսի միավոր է ընդունված 1կգ.մ/վ (կիլոգրամ մետր վայրկյանում): 1կգ.մ/վ-ը հավասար է 1մ/վ արագությամբ շարժվող և 1 կգ զանգված ունեցող մարմնի իմպուլսին:

«Իմպուլս» հասկացությունը Փիզիկա է ներմուծել ֆրանսիացի գիտնական Ուննե Դեկարտը (1596-1650թթ.): Դեկարտն ինքը, ճիշդ է, այդ մեծությունն անվանում էր ոչ թե իմպուլս, այլ շարժման քանակ: Իմպուլս բառը հայտնվեց ավելի ուշ:

Նարզեր

1. Ի՞նչ է իմպուլսը:
2. Թվարկվող մեծություններից որի՞ հետ է համընկնում իմպուլսի ուղղությունը՝ ո՞ւժի, արագության, թե՛ արագացման:
3. Ինչպես է որոշվում մարմնի ձեռք բերած իմպուլսը, եթե հայտնի են ուժը և նրա ազդեցության ժամանակը:
4. Ո՞վ է գիտություն ներմուծել «իմպուլս» հասկացությունը: Իմպուլսն ինչպես էին անվանում նախկինում:



Նկար 17

Խորհրդածե՛ք: Շնորհայի պնդումը Դեկարտը համարում էր իր փիլիսոփայության հիմնական սկզբունքը. «Ես մբածում եմ՝ ուրեմն գոյություն ունեմ»: Նրա ժամանակակից ֆրանսիացի գիտնական Պ. Գասենիին դրան հակադրում էր մի այլ պնդում. «Քանի որ գոյություն ունեմ, ուրեմն մբածում եմ»: Այս պնդումներից ո՞րն է ձեզ ավելի ճիշդ թվում:

§ 13. Իմպուլսի պահպանման օրենքը

Իմպուլսի համար գործում է բնության արմադրական օրենքներից մեկը, որը կոչվում է իմպուլսի (կամ շարժման քանակի) պահպանման օրենք: Այս օրենքը հայդրաբերել է ֆրանսիացի Դեկարտը: Իր նամակներից մեկում նա գրում է. «Ես ընդունում եմ, որ Տիեզերքում սրեղծված ողջ նյութի մեջ կա շարժման հայդրնի քանակ, որը երբեք չի մնանում և չի փոքրանում, այնպես որ, եթե մի մարմին շարժման մեջ է դուռ մյուսին, ապա իր շարժումից կորցնում է այնքան, որքան հաղորդում է»:


Առավել պարզ դեպքերում իմպուլսի պահպանման օրենքը կարող է ձևակերպվել հետևյալ կերպ:

Երկու մարմինների փոխազդեցության ժամանակ նույն ընդհանուր իմպուլսը մնում է անփոփոխ (այսինքն՝ պահպանվում է):


Փորձ կարարենք: Բարակ թելերից պողպապե երկու միագեսակ գունդ կախվենք (նկ. 18): Զախ գունդը հետացնենք ու բաց թողնենք: Կրեսնենք, որ գնդերի բախումից հետո ծախ գունդը կանգ կառնի, իսկ աջը կսկսի շարժվել: Բարձրությունը, որին կհասնի աջ գունդը, հավասար կլինի ծախ գնդի սկզբնական բարձրությանը: Դա վկայում է այն մասին, որ բախման ընթացքում ծախ գունդը աջ գնդին է փոխանցում իր ողջ իմպուլսը: Ինչքան պակասում է առաջին գնդի իմպուլսը, նույնքան էլ աճում է երկրորդ գնդի իմպուլսը: Գնդերի ընդհանուր (գումարային) իմպուլսն այս դեպքում մնում է անփոփոխի, այսինքն՝ պահպանվում է:

Իմպուլսի պահպանման օրենքն առավել հաճախ կիրառում են մարմինների բախման վերլուծության ժամանակ: Դիվարկենք մի հասարակ օրինակ: Ընդունենք, թե 50 կգ զանգված ունեցող փղան 3 մ/վրկ արագությամբ թռչում է իր առջև անշարժ կանգնած 2 կգ զանգված ունեցող սքեյփրորդի վրա: Դրանից հետո ինչպիսի՞ արագությամբ նա կսկսի շարժվել: Այդ հարցին պարագաներու համար սկզբում հաշվենք փղայի և սքեյփրորդի ընդհանուր իմպուլսը մինչ բախումը: Գրնում ենք՝ $50 \text{ կգ} \cdot 3 \text{ մ/վ} = 150 \text{ կգ}\cdot\text{մ/վ}$:

Իմպուլսի պահպանման օրենքի համաձայն՝ այդ նույն իմպուլսը պետք է



Նկար 18



Նկար 19

մնար նաև այն բանից հետո, եթք գրդան հայփնվեց սքեյփրորդի վրա: Բայց այժմ արդեն գրդան ու սքեյփրորդը միասին կազմում են 52 կգ զանգված ունեցող և ν արագությամբ շարժվող համակարգ: Արագությունը որոշելու համար կազմում ենք հավասարում.

$$52 \text{ կգ} \cdot v = 150 \text{ կգ} \cdot \text{մ}/\text{s}$$

Լուծելով հավասարում՝ գրնում ենք $v=2,9 \text{ մ}/\text{s}$:

Տարցեր

1. Ո՞վ է հայփնագործել իմպուլսի պահպանման օրենքը:
2. Մարմինների բախման ժամանակ ինչպե՞ս է դրսուրվում իմպուլսի պահպանման օրենքը:
3. Նկար 19-ում պարկերված միագեսակ առաձգական գնդերի համակարգում ի՞նչ գեղի կունենա, եթե ամենավերջին ձախ գունդը շեղենք դեպի ձախ և բաց թռղնենք:


§ 14. Ունակդիվ շարժում

Նյուփոնի օրենքները թույլ են գրախս բացապրել մի շար կարևոր մեխանիկական երևոյթ՝ **ունակդիվ շարժումը**: Վյդպես են անվանում մարմնի շարժումը, եթե որոշակի արագություն ունենալով՝ մարմնից անջարվում է նրա մի մասը՝ մնացած մարմնին սրիակելով շարժվել հակառակ ուղղությամբ:

Վերցնենք, օրինակ՝ մանկական ռեվինն փուտիկը, լավ փշենք ու բերանը բաց՝ մի կողմ նեպենք: Կրեսնենք, որ եթք օդն սկսի դուրս գալ մի կողմից, փուտիկը կթռչի հակառակ կողմ: Դա էլ հենց ռեվիպիվ շարժումն է:

Ունակդիվ շարժման սկզբունքով են գրեղաշարժվում կենդանական աշխարհի որոշ ներկայացուցիչներ, օրինակ՝ ութովնուկներն ու կալդամարները: Պարբերաբար դուրս մղելով իրենց մեջ ներքաշած ջուրը՝ նրանք ի վհճակի են 60-70 կմ/ժամ արագություն զարգացնել: Նմանօրինակ եղանակով են գրեղաշարժվում մեղուաները, սիպեները և մի քանի այլ կենդանիներ:

Ունակդիվ շարժման օրինակներ կարելի են հայդրնաբերել նաև բուսական աշխարհում: Օրինակ «կապաղած» վարունգի հասուն պարուղները, անզամ թեթև հպման դեպքում եւր են թռչում պարագագիկից և պոկված գրեղում վարունգի վրա առաջացած անցքից մեծ ուժով եւր է շարպվում դառը հեղուկը, ըստ որում, վարունգը թռչում է հակառակ ուղղությամբ:



Նկար 20


Զրի արդաներման դեպքում առաջացող ռեվիպիվ շարժումը կարելի է դիպել հեփսյալ փորձի ընթացքում: 45° անկյան դրական դոված ծայրակալ ունեցող ռեվինն փողրակին միացած ապակե ձագարի մեջ ջուր լցնենք (նկ.20): Տենց որ ջուրն սկսի դուրս թափվել ծայրակալից, փողրակը կսկսի շարժվել և կթռվի ջրի հոսքին հակառակ ուղղությամբ:

Ունակդիվ շարժման սկզբունքի վրա են հիմնված հրթիռների թռիչքները: Ժամանակակից պիեզերական հրթիռը չափազանց բարդ թռչող սարք է՝ կազմված հարյուրհազա-

րավոր, միլիոնավոր մասերից: Դրթիոի զանգվածն ահռելի չափերի է հասնում: Այն կազմված է աշխարհանքային մարմնի զանգվածից (այսինքն՝ վառելիքի այրման արդյունքում առաջացած և ռեակտիվ շիթերի դրանք դուրս ներվող շիկացած զագերից) և հրթիոի վերջին ասդիմանից կամ, ինչպես ասում են, «չոր» զանգվածից, որը մնում է, եթե հրթիոից դուրս է ներվում աշխարհանքային մարմինը:

Հրթիոի «չոր» զանգվածն իր հերթին կազմված է կառուցվածքային զանգվածից (այսինքն՝ հրթիոի պարյանից, նրա շարժիչներից, կառավարման համակարգերից և օգտակար բեռնվածության զանգվածից (այսինքն՝ գիրական սարքավորումներից, ուղեծիր դուրս բերվող փիեզերական ապարատից, անձնակազմից, նաև կենսապահովման համակարգից):

Աշխարհանքային մարմնի դուրս մղվելու ընթացքում ազարված բարե-



Նկար 21

- 4** բը, պարյանի ավելորդ մասերը սկսում են ծանրացնել հրթիոը անպեսք բեռով՝ դժվարացնելով նրա թափ առնելը: Այդ պարբառով, փիեզերական արագություններ ձեռք բերելու համար օգտագործում են բազմաստիճան հրթիոներ (նկ.21): Այդօրինակ հրթիոներում սկզբում աշխարում են դրանող հրթիոի առաջին ասդիճանի կառուցահարվածները (1): Եթե նրանցում վերջանում են վառելիքի պաշարները, նրանք առանձնանում են, ցած ընկնում, և միանում է երկրորդ ասդիճանը (2): Այսինքն ել վառելիքն սպառվելուց հետո երկրորդ ասդիճանը նույնպես ցած է ընկնում, և սկսում է աշխարել երրորդ ասդիճանը (3): Դրթիոի գլխամասում գրնվող արբանյակը կամ էլ որևէ այլ փիեզերական սարք ծածկվում է գլխամասային շրջուսիչով (4), որի շրջուսելի ձևը Երկրի մթնոլորտում հրթիոի թռիչքի ընթացքում օժանդակում է օդի դիմադրության նվազեցմանը:

Եթե ռեակտիվ զանգվածի շիթը մեծ արագությամբ դուրս է ներվում հրթիոից, հրթիոն ինքը առաջ է մղվում հակառակ ուղղությամբ: Ի՞նչ պարբառով է դա դրեղի ունենում:

Նյուփոնի երրորդ օրենքի համաձայն՝ F ուժը, որով հրթիռն ազդում է աշխարհային մարմնի վրա, մեծությամբ հավասար և ուղղությամբ հակառակ է աշխարհանքային մարմնի կողմից հրթիռի պարյանի վրա ազդող F' ուժին.

$$F = F': \quad (14.1)$$

Տես F ուժն էլ (որին անվանում են ռեակտիվ ուժ) հրթիռին թափավագք է հաղորդում:

(12.1) հավասարությունը բխում է, որ մարմնին հաղորդվող իմպուլսը հավասար է ուժի և նրա ազդեցության ժամանակի արդադրյալին: Այդ պարզաբանված միևնույն ժամանակահարվածում գործող միավեսակ ուժերը մարմիններին հավասար իմպուլսներ են հաղորդում: Տվյալ դեպքում հրթիռի կողմից ձեռք բերված $m_{\text{հրթ.}} v_{\text{հրթ.}}$ իմպուլսը պետք է հավասար լինի արդաներված գազերի $m_{\text{զագ.}} v_{\text{զագ.}}$ իմպուլսին.

$$m_{\text{հրթ.}} v_{\text{հրթ.}} = m_{\text{զագ.}} v_{\text{զագ.}} :$$

Այսպեսից հենքնում է, որ հրթիռի արագությունը

$$v_{\text{հրթ.}} = \frac{m_{\text{զագ.}}}{m_{\text{հրթ.}}} v_{\text{զագ.}} : \quad (14.2)$$

Վերլուծնք սրացված արդահայդրությունը: Մենք գրեսնում ենք, որ ինչքան մեծ է արդաներված գազերի արագությունը, ինչպես նաև աշխարհող մարմնի զանգվածի (այսինքն՝ վառելիքի զանգվածի) և հրթիռի վերջնական («չոր») զանգվածի հարաբերությունը, այնքան մեծ է հրթիռի արագությունը:

(14.2.) բանաձևը մուրավոր է: Նրանում հաշվի չի առնվում, որ վառելիքի այրմանը զուգընթաց պացող հրթիռի զանգվածն ավելի ու ավելի է նվազում: Հրթիռի արագությունը որոշելու ճշգրիտ բանաձևը առաջին անգամ

հաշվարկել է Կ. Է. Ցիոլկովսկին դեռևս 1897 թվականին: Բանաձևը կրում է Ցիոլկովսկու անունը:



Կ. Է. Ցիոլկովսկի

Ցիոլկովսկու բանաձևը թույլ է գրալիս հաշվարկել սրբած արագությունը հաղորդելու համար հրթիռին անհրաժեշտ վառելիքի քանակը: Այդուսակ 3-ում ներկայացված են հրթիռի սկզբնական m_0 և վերջնական m զանգվածների հարաբերության արժեքները հրթիռի գույքը արագությունների դեպքում, եթե արդաներված գազի արագությունը (հրթիռի նկարմամբ) $v=4$ կմ/վ է:


$V_{\text{հրթ.}}, \text{կմ/վ}$	m_0/m	$V_{\text{հրթ.}}, \text{կմ/վ}$	m_0/m	$V_{\text{հրթ.}}, \text{կմ/վ}$	m_0/m
4	2,7	16	55	28	1100
8	7,4	20	148	32	2980
12	20,1	24	403	36	8100

Օրինակ՝ որպեսզի հրթիռը կարողանա գազերի արտահոսքի արագությունը 4 անգամ զերազանցող արագություն ձևոր բերել ($V_{\text{հրթ.}}=16 \text{ կմ/վ}$) հրթիռի նախնական գանգվածը (վառելիքի հետ միասին) վերջնական գանգվածին («չոր») պետք է զերազանցի 55 անգամ ($m_0/m=55$): Դա նշանակում է, որ թռիչքակիրապարակում կանգնած հրթիռի գանգվածի առյուծի բաժինը պետք է կազմի հենց վառելիքի գանգվածը: Իսկ օգտակար բերնվածությունը, նրա հետ համեմարտած, պետք է շատ փոքր գանգված ունենա:

Ուսակդիվ շարժման տեսության գարգացման մեջ կարևոր ներդրում է կարարել Կ. Է. Ցիոլկովսկու ժամանակակից, ոուս գիտնական Ի. Վ. Մեշչերսկին (1859-1935թ.): Փոփոխական գանգված ունեցող մարմնի շարժման բանաձևը նրա անունն է կրում:

Նարցեր

- Ի՞նչ է ուսակդիվ շարժումը: Բերե՛ք օրինակ-ներ:
- Նկար 22-ում պարկերված փորձում կորացրած ծայրափողերից ջրի դուրս հնուելու դեպքում, դույլիկը պտղվում է պարի ցույց դրված ուղղությամբ: Բացադրե՛ք երևոյթը:
- Ինչի՞ց է կախված հրթիռի ձևոր բերած արագությունը:



Նկար 22

§ 15. Նրանց պետքանիկայի գարզացումը

Առաջին հրթիռները պարբասարվել են շար վաղուց: Նրանց հայփնավելը կապված էր վառողի գյուղի հետ: Չինասրանում վառողային հրթիռները գործադրվել են արդեն մեր թվագրության 10-րդ դարում: Նարյուրավոր գարիների ընթացքում այդպիսի հրթիռներն օգտագործվել են հիմնականում որպես ազդանշանային և հրավառության սարքեր: Ավելի ուշ հայփնվեցին մարդական (բոցավառող) հրթիռները:

18-րդ դարի վերջին, Սերինգապարում քաղաքի պաշարման ժամանակ հնդկական գորքերը անզիական գաղութարարների դեմ վառողային հրթիռներ գործադրեցին: Դրանք սև, ծխարձակ վառողը որպես վանելիք օգտագործող, 3-6 կգ զանգված և թոշքի մոտ 2 կմ հեռավորություն ունեցող հրթիռներ էին: Զավթիչների բանակում զբնվող անզիացի զնդապես Ու. Կոնգրեսը հետաքրքրվեց այդ (Եվրոպայի համար նոր) գենքով և հայրենիք վերադառնալուց հետո սեփական կառուցվածքի մարդական հրթիռ մշակեց: Սակայն 1804 թվականին դրանց առաջին փորձարկումներն այնքան էլ հաջող չէին: Կոնգրեսը հետագայում այնքան կարարելազործեց իր հրթիռը, որ այն դարձավ մարդական ահարկու գենք: 20 կգ զանգվածի դեպքում նրա թոշքի հեռավորությունը հասնում էր 2,5 կմ-ի: 1807 թվականին անզիացիների կողմից Կոպենհագենի պաշարման ժամանակ բրիգանական նավարորմի նավերից մի քանի հազար այդպիսի հրթիռներ արձակվեցին: Նրանց պատճենության արդյունքում քաղաքին զգալի վնաս պատճառվեց:

Ուստասրանում վառողային հրթիռները սպառագինության մեջ են ընդգրկվել 19-րդ դարի սկզբին: Դրանք հաջողությամբ գործադրվել են 1828-29 թ.թ. ոուս-թուրքական պարերազմում, 1853-56 թ.թ. Ղրիմի պարերազմում, ինչպես նաև 1877-78 թ.թ. ոուս-թուրքական պարերազմում:

Ուստասրական հրթիռային գենքի գարզացման գործում մեծ ներդրում ունեցավ գիրնական-հրեփանավոր, գեներալ-լեյփենանու Կ. Ի. Կոնստանտինովը: 1850 թվականին, Պետքերբուրգում նրա դեկավարությամբ սկսեց աշխատել հապուկ «հրթիռային գործարանը»: Ուստասրական հրթիռների թոշքի առավելագույն հեռավորությունը, 80 կգ ընդհանուր զանգվածի դեպքում, հասնում էր 4 կմ-ի: Այն ժամանակների համար դրանք ունեկորդային ցուցանիշներ

Էին: Կոնսդրանսդինովն իր հետքազուրությունների արդյունքները փառագրեց «Մարդական հրթիռների մասին» վերնագրով գրքում: Վյու աշխատանքը մնեց հետքաբրություն առաջացրեց և շուպով փառագրվեց Ֆրանսիայում և Անգլիայում:


Սակայն 19-րդ դարի 80-ական թվականներին փեղող գիշելով ակոսավոր հրետանուն՝ սև ծխավոր վառող օգտագործող մարդական հրթիռները արդադրությունից դուրս եկան, և դրանցով բանակի մասնակարարումը դադարեցվեց: Դրթիռների մասին սկսեցին մոռանալ: Եվ միայն թուզող սարքերում դրանց կիրառման մասին երազող առանձին անհապ գյուղարարներ շարունակում էին հիշել հրթիռները:

Աշխարհում մարդու թոփչքի համար նախագեսված առաջին ռեակտիվ թուզող սարքի նախագծի հեղինակը ուսու հեղափոխական-նարողավոլեց Ն. Ի. Կիբալչիչն է (1835-1881 թթ.): Նա մահվան դարպապարփվեց Ալեքսանդր 2-րդ ցարի վրա մահափորձ կապարելու նպագրակով Ա. Գրեննիցկու պայթեցրած ոումբը պարբասփելու համար: Իր նախագիծը Կիբալչիչը մշակեց բանդում, մահվան դարպապարփվելուց հետո: Մարդի 23-ին նա բանդույին իշխանություններին հանձնեց հետքայալ հայդրարարությունը. «Գրնվելով կալանքում, մահիցս մի քանի օր առաջ ես գրում եմ այս նախագիծը: Ես հավաքում եմ իմ զաղափարի իրազործելիությանը, և իմ սարսափեկի վիճակում այդ հավաքը ինձ սապար է լինում: Եթե մասնագետ գիբնականների կողմից մանրամասն քննարկվելուց հետո իմ զաղափարը իրականացման ենթակա ճանաչվի, ապա ես երջանիկ կլինեմ հայրենիքիս ու մարդկությանը մեծ ծառայություն մարդուցած լինելուս համար: Վյու աշխատ կը նդունեմ մահը՝ գիբնալով, որ իմ զաղափարը չի մեռնի ինձ հետ միասին, այլ գոյություն կունենա մարդկության մեջ, որի համար պարբասապ եմ զոհել կյանքս»:

Նախագիծը գիբնականների քննարկմանը ներկայացնելու Կիբալչիչի խնդրանքը մերժվեց: Ապրիլի 3-ին նա մահապարժի ենթարկվեց: Իսկ նրա գրած նախագիծը հեղափոխությունից հետո գրնվեց ժանդարմական վարչության գործերում: 1918 թվականին այն հրաժարակվեց, և մարդիկ նոր իմացան մի գյուղի մասին, որ 37 տարի անհայտ էր մնացել:

Առաջին հրթիռները վառողային (պինդվառելիքային) էին: Շեղուկային

հրթիռային շարժիչի սխեման մշակել է Կ. Է. Ցիոլկովսկին, 1903 թվականին: ԱՄՆ-ում նմանօրինակ շարժիչի մշակմամբ զբաղվում էր Ռ. Գոդարդը: Նրա ռեակտիվարությամբ այդպիսի շարժիչի առաջին փորձարկումներն իրականացվել են 20-րդ դարի 20-ական թվականներին: Ռուսասփանում հեղուկային հրթիռային շարժիչներ կառուցել ու փորձարկվել են 1930-31 թվականներին:



Նկար 23

Ինչպես հայրնի է քիմիայից, վառելիքի այրումը շափ արագ ընթացող օքսիդացման գործընթաց է: Այդ պարճառով այրման համար անհրաժեշտ է թթվածին (օքսիդացնող նյութ): Ավիացիոն ռեակտիվ շարժիչները այդ թթվածինը վերցնում են շրջակա օդից: Խոկ հրթիռային շարժիչները պետք է աշխապես և՛ մթնոլորդի վերին շերտերում, որպես թթվածինը շափ քիչ կերոսին է, և՛ փիեզերական փարածությունում, որպես թթվածինայն ընդհանրապես չկա: Այդ պարճառով, վառելիքի (օրինակ՝ կերոսինի) բաքերի հետ միասին նաև օքսիդացնող նյութի (թթվածին) զգալի պաշարներ են դեղադրում (նկ.23): Դաբուկ պոմպերի միջոցով կամ ևլ սեղմված զազի ճնշման դրակ վառելիքն ու թթվածինը մղվում են այրման խցիկ: Վառելիքի բաղադրիչները, միմյանց հետ քիմիական ռեակցիայի մեջ մփնկով, բոցավառվում են ու սկսում այրվել: Վյրման արդյունքում առաջացած զազերի ելքը դեղի և ունենում հարուկ կառուցվածքի փրանցքերից:

Հրթիռային դեմքնիկան նշանակալի զարգացում ապրեց երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: ԽՍԴՄ-ում մշակվեցին անծովիս վառող օգտագործող ռեակտիվ արկեր, որոնք խորհրդային ավիացիայի կողմից փորձարկվեցին արդեն 1939 թվականին (Խալիխն Գոլ գետի մոտ մղած մարտերում): Դրան անմիջապես հետևեց բազմաթից արձակման կայանքների սպեղծումը, որոնք դեղադրվում էին ավտոմեքենաների վրա: Այդ ռեակտիվ սարքերը (կարյուշաները) հայրենական մեծ պարերազմում կարևոր դեր

խաղացին ռուսական բանակի մարդական գործողություններում:


1942 թվականին Վերներ ֆոն Բրաունի ղեկավարությամբ Գերմանիայում սկսվեցին կառավարվող հեղուկային Ֆաու-2 հրթիռի փորձարկումները: Ֆաու-2-ի թոհքը հեռավորությունը կազմում էր 300 կմ, հետագա դի բարձրությունը՝ 70-80 կմ, զանգվածը՝ մոտ 13 տոննա: 1944-45 թվականներին Լոնդոնի և Անգլիայի մյուս քաղաքների վրա 10 հազարից ավելի նման հրթիռներ արձակվեցին: Սակայն կառուցվածքային անկարարության և թոհքի ընթացքում անկառավարելիության պատճառով այդ հրթիռների արդյունավելությունը ցածր էր (38 %):

Ժամանակակից մարդական հրթիռները ինչպես սովորական, այնպես էլ միջուկային լիցք են կրում, ունակ են մի քանի տասնյակ րոպեում մի քանի հազար կիլոմետր գրաբածություն հաղթահարել: Թոհքահարթակի և նպագակակեսի գրեղից կախված՝ այդ հրթիռները բաժանվում են մի քանի խմբի՝ «Երկիր-Երկիր» (արձակվում են երկրի կամ ծովի մակերևույթից՝ վերգետնյա կամ ծովային նպագակակերպերը ոչնչացնելու համար), «Երկիր-օդ» (արձակվում են երկրի կամ ծովից մակերևույթից՝ օդային նպագակակերպերը ոչնչացնելու համար), «օդ-Երկիր» (արձակվում են ինքնաթիռներից՝ երկրային կամ ծովային նպագակակերպերը ոչնչացնելու համար) և այլն:

Արքանյակներ և զանազան տիեզերակայաններ Տիեզերք արձակելու համար, 1957 թվականից սկսած (երբ ԽՍԴՄ-ում Ս. Պ. Կորույովի ղեկավարությամբ արձակվեց Երկրի առաջին արհեստական արրանյակը), կիրառվում են տիեզերական հրթիռներ (փանող հրթիռներ):

Ժամանակակից տիեզերական հրթիռներին հասանելի արագությունները թույլ են տալիս հաջողությամբ ուսումնասիրել Արեգակնային համակարգությունը: Մինչև ներկա պահը ավտոմատ միջմոլորակային կայանները հասել են Արեգակնային համակարգության գրեթե բոլոր մոլորակների շրջակայքը: Սակայն միջասպղային թոհքների համար շատ ավելի մեծ արագություններ են հարկավոր. ոչ թե 10-20 կմ/վ, այլ լույսի արագությանը մոտ արագություններ (c ≈ 300 000 կմ/վ): Բայց նման արագությունների անհնարի է հասնել զագի արդարությունը v=4 կմ/վ արագության դեպքում: Նաշվարկները ցույց են տալիս, որ նույնիսկ արդարներվող զագի v=10 կմ/վ արագության դեպքում (որն առաջմ անհասանելի է) հրթիռին v=0,01 c արագություն հա-

դորդելու համար անհրաժեշտ է, որպեսզի հրթիռի մեկնարկային զանգվածը վերջնական զանգվածին 2×10^{130} անգամ: Դա նշանակում է, որ այդպիսի հրթիռում վառելիքի զանգվածը պեսքը է բազմակի գերազանցի ոչ միայն երկրագնդի, այլև Տիեզերքի ողջ դիրքող մասի զանգվածը: Այդպիսի ասրդաթիռ կառուցելու իհարկե անհնար է: Այդ պատճառով, միջասրդային թռիքներ իրականացնելու համար անհրաժեշտ է փիեզերանավերին արագություն հաղորդելու սկզբունքորեն այլ միջոցներ որոնել: Այդպիսի միջոցներից մեկը ֆուրոնային շարժիք սպեղծելուն է: Ֆուրոնային շարժիքում զազաշիքի դերն իր վրա է վերցնում լույսի հզոր հոսքը: Այս դեպքում արդահոսքի արագությունը $v=c$, որի շնորհիվ էլ ֆուրոնային հրթիռը (նկ.24) կարող է մերձլուսային արագություն ձեռք բերել: Այս դեպքում ճանապարհորդությունները դեպի ուրիշ ասրդեր կդառնան լիովին իրական: Բայց այդպիսի հրթիռների սպեղծումը հեռավոր ապագայի գործ է:



Նկար 24

«Տարցեր»

1. Ի՞նչ վառելիք էր օգտագործվում առաջին հրթիռներում:
2. Առաջինը ո՞վ է մշակել հեղուկային ռեակտիվ շարժիչի սխեման:
3. Ո՞ր թվականին և ո՞ւմ դեկավարությամբ է արձակվել Երկրի առաջին արհեստական արրանյակը:
4. Քիմիական վառելիք օգտագործող հրթիռները պիփանի՝ են արդյոք միջասրդային թռիքների համար: Ինչո՞ւ:

Խորհրդածե՛ք: «Ես ասում եմ մարդուն՝ հավաքա՞ ինքդ քեզ: Դու ամեն ինչ կարող ես: Դու կարող ես հավերժության բոլոր գաղտնիքները ճանաչել, բնության բոլոր գանձերի տեսքը դաշնալ: Չո թիկունքին ոսկեհուր թևեր կան: Թափահարի՛ դրանք: Դե՛, թափահարի՛ և դու հզոր, երջանիկ ու ազատ կլինես» (Վ. Է. Ցիոլկովսկի): Ի՞նչ եք կարծում՝ մարդու երջանկությունն ու ազատությունը իրո՞ք կախված են սեփական ուժերին վսփահելուց և ինքն իրեն հավաքալուց: Ձեր թիկունքին երբսե զգացնե՛ եք ոսկեհուր թևեր:


§ 16. Էներգիա

«Էներգիա» հասկացությունը գործածության մեջ է մտցրել անգլիացի գիտնական Թ. Ցունզը, 1807 թվականին: Բառը հունարեն է, թարգմանաբար նշանակում է «գործողություն», «գործունեություն»:

Ուղղակի անհնար է ժամանակակից գիտությունը պարկերացնել առանց այդ հասկացության: Վյու գոյություն ունի Փիզիկայի բոլոր բաժիններում: Դա և՛ էլեկտրական էներգիան է, և՛ մագնիսական էներգիան, և՛ ափոմային էներգիան և այլն: Մեխանիկայում հետազոտվող էներգիան կոչվում է մեխանիկական: Դենց դրանից էլ կազմակերպությունը այդ կարևորագույն հասկացության հետ:

Մեխանիկական էներգիան նշանակվում է Ե գրառվ և չափվում է նույն միավորներով, ինչ որ աշխատանքը, այսինքն՝ չուուներով (Զ):

Քանի որ մեխանիկայում ուսումնասիրում են մարմինների շարժումը և նրանց փոխազդեցությունը մեկը մյուսի հետ, ապա ընդունված է գրաբերակել մեխանիկական էներգիայի երկու գումարակ՝ մարմինների շարժմամբ պայմանավորված էներգիա և նրանց փոխազդեցությամբ պայմանավորված էներգիա: Դրանցից առաջինը կոչվում է **կինետիկ էներգիա** և նշանակվում է Ե_կ գրառվ, երկրորդը կոչվում է **պոտենցիալ էներգիա** և նշանակվում է Ե_պ գրառվ:




Եվ պոտենցիալ, և՛ կինետիկ էներգիան որոշելու համար գոյություն ունի ընդհանուր կանոն: *Մարմնի ունեցած էներգիան հաշվելու համար հարկավոր է որոշել դրվագ մարմինը զրոյական վիճակից դրվագ վիճակին հասցնող աշխատանքը* (գրոյական վիճակն այն վիճակն է,

որում մարմնի համապատասխան էներգիան համարվում է զրոյին հավասար): Ինչքան այդ աշխափանքը մեծ է, այնքան մեծ էներգիա ունի մարմինը դրվագ վիճակում:

Էներգիաներից յուրաքանչյուրը հաշվելու համար օգտվենք այս կանոնից:

- Կինետիկ էներգիա:** Որոշենք ո զանգված ունեցող և արագությամբ շարժվող մարմնի էներգիան: Կինետիկ էներգիան շարժման էներգիան է: Այդ պարբռառով, մարմնի համար զրոյականը այն վիճակն է, երբ մարմինը չի շարժվում, այլ գրնվում է հանգստի վիճակում: Գրնելով մարմնին դրվագ արագությունը հաղորդելու համար ծախսված աշխափանքը՝ մենք կորոշենք նաև նրա կինետիկ էներգիան: Օգտագործելով աշխափանքի սահմանումը ($A = Fs$), Նյուտոնի երկրորդ օրենքը ($F = ma$), ինչպես նաև (3.1) և (5.2) բանաձևերը՝ սպանում ենք (նկ.25)



Նկար 25

$$A = Fs = mas = m \times \frac{V}{t} \times \frac{vt}{2} = \frac{mv^2}{2}:$$

Այսպես գրված արդահայտություններից վերջինն էլ հենց մարմնի կինետիկ էներգիան է.

$$E_k = \frac{mv^2}{2} : \quad (16.1)$$

Այսպիսով՝ կինետիկ էներգիան հավասար է մարմնի զանգվածի և արագության քառակուսու արդադրյալի կեսին:

- Պոտենցիալ էներգիա:** Որոշենք Երկրի հետ փոխազդեցության մեջ գրնվող մարմնի պոտենցիալ էներգիան: Զրոյական համարենք մարմնի դիրքը Երկրի վրա: Այդ դեպքում մի որոշ հ բարձրության վրա գրնվող մարմնի պոտենցիալ էներգիան հավասար կլինի դրվագ մարմինը Երկրի մակերևույթից մինչև այդ բարձրությունը դրվագի մակերևույթից մասնաւոր աշխափանքին:

Տավասարաչափ բարձրացնելու դեպքում, երբ մարմնի վրա գործադրվող ուժը մեծությամբ համապատասխանում է ծանրության ուժին (նկ.26), այդ աշխափանքը կարելի է որոշել հեփեյալ կերպ.


$$A = Fs = F_d h = mgh$$

Սա էլ հենց հ բարձրության վրա գտնվող մարմնի պոտենցիալ էներգիան է.

$$E_{\text{up}} = mgh : (16.2)$$

Այսպիսով՝ Երկրի հետ փոխազդող գոյնվող մարմնի պոտենցիալ էներգիան հավասար է այդ մարմնի զանգվածի, ազատ անկման արագացման և մարմնի ունեցած բարձրության արդադրյալին:

Պոտենցիալ էներգիան որոշելու դեպքում բնավ էլ պարփառիք չէ գրոյական համարել մարմնի՝ Երկրի մակերևույթին գտնվելու դիրքը: Զրոյական




Նկար 26

կարելի է համարել և՝ հարակի մակարդակը սենյակում, և՝ սեղանի մակերևույթը և այլն: Մարմնի հ բարձրությունը հաշվարկելու համար ընդունված գրոյական կերպն ընդունված էն կամայական, դեկավարվելով, սովորաբար, պարզության ու հարմարավելության նկատառումներով:

Երկրի հետ փոխազդող մարմնի պոտենցիալ էներգիան որոշում էն (16.2) բանաձևով: Այլ փոխազդեցությունների պոտենցիալ էներգիան որոշվում է այլ բանաձևերով:

Մարմինն ինչքան էներգիա է կրում, այնքան էլ աշխարհանք կարող է կարարել: Ինչքան մեծ է մարմնի էներգիան, այնքան մեծ աշխարհանք կկարարվի: Դա ցուցադրենք հասարակ փորձերով:



Նկար 27

Վերցնենք թեր և հորիզոնական մասեր ունեցող ճռ և նրա կորացած մասում այլումինե զլան փեղադրենք (նկ. 27): Ճռի թեր մասից բաց թռղնենք փարբեր բարձրություններից, միևնույն զանգվածներով կամ միևնույն բարձրությունից փարբեր զանգվածներով զնդիկներ: Դժվար չի լինի նկարել. որքան մեծ պոտենցիալ էներգիա ունի զնդիկը, այնքան մեծ փարածության վրա այն կդեղաշարժի մերժադատ զլանը:

Նարցեր

1. Ինչո՞վ է պայմանավորված կինեփիկ էներգիան:
2. Ինչի՞ է հավասար մարմնի կինեփիկ էներգիան:
3. Ինչո՞վ է պայմանավորված մարմնի պատենցիալ էներգիան:
4. Ինչի՞ է հավասար Երկրի հետ փոխազդող մարմնի պոտենցիալ էներգիան:
5. Ինչպե՞ս է կոչվում էներգիայի միավորը:
6. Ո՞ր դեպքում է մարմնի կինեփիկ էներգիան հավասար զրոյի:
7. Ինչպիսի՞ էներգիայով է օժդրված երկնքում թռչող ինքնաթիռը՝ կինեփիկ, պոտենցիալ՝, թե՛ երկուսը՝ միաժամանակ:
8. Ինչպիսի՞ էներգիայով է օժդրված հիդրոկայանի ամբարդակով արգելակաված ջուրը, և ինչպիսի՞ էներգիայով՝ ամբարդակի ջրանցախցերից ցած գահավիճող ջուրը:
9. Ինչպե՞ս են փոխավում ուղղահայաց դեպի վեր ներփած գնդակի պոտենցիալ և կինեփիկ էներգիաները շարժման ընթացքում:

§ 17. Էներգիայի պահպանման օրենքը

Ընդհանուր առմամբ, մարմինը միաժամանակ կարող է ունենալ ինչպես կինեփիկ, այնպես էլ պոտենցիալ էներգիա: Դրանց երկուսի գումարն անվանում են **լրիվ մեխանիկական էներգիա**.

$$E = E_{\text{պ}} + E_{\text{լ}} : \quad (17.1)$$

Այս հասկացությունը ֆիզիկա է ներմուծել 26-ամյա գերմանացի գիտնական Դ. Շելմիլցը, 1847 թվականին: Մարմնի շարժման ընթացքում ի՞նչ է փեղի ունենում լրիվ մեխանիկական էներգիայի հետ: Պարզելու համար դիպարկենք մի պարզ փորձ:

Գնդակն ուղղահայաց վեր ներփենք: Գնդակին արագություն հաղորդելով՝ մենք նրան մի որոշ կինեփիկ էներգիա կհաղորդենք: Գնդակի վեր բարձրանալու հետ Երկրի ձգողության հետքեանքով նրա շարժումը կդանդաղի և գնդակի արագությունը, միաժամանակ նաև կինեփիկ էներգիան, կսկսեն ավելի ու ավելի փոքրանալ: Դրա հետ մնելու գնդակի պոտենցիալ էներ-

զիան, ի բարձրության մեծանալու հետ կսկսի աճել: Շեփագծի ամենաբարձր կեպում (առավելագույն բարձրության վրա) գնդակի պոտենցիալ էներգիան իր առավելագույն արժեքին կհասնի, իսկ կինետիկ էներգիան կհավասարվի զրոյի: Դրանից հետո ասդիմանաբար արագություն ձեռք բերելով՝ գնդակը կսկսի ցած ընկնել: Անկման ընթացքում կինետիկ էներգիան կսկսի աճել, իսկ պոտենցիալ էներգիան՝ բարձրության նվազման պարբռով, պակասել: Գերինին բախվելու պահին գնդակի կինետիկ էներգիան իր առավելագույն արժեքին կհասնի, իսկ պոտենցիալ էներգիան կդառնա զրո:

Այսպիսով, եթե մարմնի կինետիկ էներգիան նվազում է, աճում է պոտենցիալ էներգիան, և հակառակը, եթե մարմնի կինետիկ էներգիան աճում է, նվազում է պոտենցիալ էներգիան: Մարմնի ազար անկման (օդի դիմադրության բացակայության դեպքում) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էներգիայի այս երկու փեսակներից որևէ մեկի ցանկացած նվազում ուղեկցվում է էներգիայի մյուս փեսակի նույնքան աճով: Ընդ որում, այդ ընթացքում մարմնի լրիվ մեխանիկական էներգիան պահպանվում է:


Սա է մեխանիկական էներգիայի պահպանման օրենքը:

Մարմնի լրիվ մեխանիկական էներգիան իր շարժման ընթացքում մնում է անփոփոխ, եթե նրա վրա չեն ազդում շինան ու դիմադրության ուժեր:

Եթե մարմնի սկզբնական և վերջնական էներգիաները նշանակենք որպես E և E' փառերով, ապա էներգիայի պահպանման օրենքը կարելի է արդահայքել հետևյալ հավասարումով.

$$E = E': \quad (17.2)$$

Ենթադրենք ազար շարժվող մարմինը ժամանակի սկզբնական պահին գրնվում էր h_0 բարձրության վրա և ուներ v_0 արագություն: Այդ դեպքում նրա լրիվ մեխանիկական էներգիան ժամանակի այդ պահին հավասար էր.



Նկար 28

$$E = \frac{mv_0^2}{2} + mgh_0 : (17.3)$$

Եթե որոշ ժամանակ անց ունենալով ν արագություն դիմարկվող մարմինը հայտնվի հ բարձրության վրա (նկ.28), ապա նրա լրիվ մեխանիկական էներգիան հավասար կլինի

$$E = \frac{mv^2}{2} + mgh : (17.4)$$

Էներգիայի պահպանման օրենքի համաձայն՝ էներգիայի այս երկու արժեքները պեսք է համընկնեն: Այդ պարզառով՝

$$\frac{mv^2}{2} + mgh = \frac{mv_0^2}{2} + mgh_0 : (17.5)$$

Եթե հայտնի են h_0 և v_0 սկզբնական արժեքները, ապա այս հավասարումը թույլ է տալիս որոշել մարմնի ν արագությունը հ բարձրության վրա կամ հակառակը, հ բարձրությունը, որի վրա մարմինն ունի ν արագություն: Ընդ որում, մարմնի զանգվածը որևէ դեր խաղալ չի կարող, քանի որ (17.5) հավասարման մեջ այն կրճադրվում է:

Տարկ է հիշել, որ լրիվ մեխանիկական էներգիայի պահպանվում է միայն այն դեպքում, եթե բացակայում են դիմադրության և շփման ուժերը: Իսկ եթե այդ ուժերն առկա են, ապա նրանց ազդեցությունը հանգեցնում է մեխանիկական էներգիայի նվազման:

Դարցեր

1. Ի՞նչն են անվանում լրիվ մեխանիկական էներգիա:
2. Զևակերպեք մեխանիկական էներգիայի պահպանման օրենքը:
3. Ո՞ր էներգիայի հետ է համընկնում ազատ անկում կարարող մարմնի էներգիան զեփնին բախվելու պահին՝ կինետիկ, թե՛ պորենցիալ:
4. Ո՞ր էներգիայի հետ է համընկնում ուղղահայաց դեպի վեր ներված զնդակի լրիվ մեխանիկական էներգիան այն պահին, եթե զնդակը հասել է թոհքի առավելագույն բարձրությանը:
5. Շփման և դիմադրության ուժերի առկայության դեպքում ի՞նչ է դեղի ունենում մարմնի լրիվ մեխանիկական էներգիայի հետ:

§ 18. Նոտդ ջրի և քամու Էներգիաների օգտագործումը

Չուրը կարող է օժբված լինել ինչպես կինետիկ, այնպես էլ պորենցիալ էներգիայով: Ամբարդակի օգնությամբ գետի ջրի մակարդակը բարձրացնելով՝ մենք մեծացնում ենք ջրի պորենցիալ էներգիան: Ենիսեյ գետի վրա կառուցված Կրասնոյարսկի ՀԷԿ-ի ամբարդակի բարձրությունը 124 մետր է: Այդպիսի բարձրության վրա ցած ջրի նույնիսկ 1մ³-ն օժբված է միլիոն շոուլը գերազանցող պորենցիալ էներգիայով: Ջրի անկման ժամանակ նրա պորենցիալ էներգիան փոխակերպվում է կինետիկ էներգիայի: Շարժվող ջրի կինետիկ էներգիան օգտագործում են ջրային գուրքինի պարուրակները շարժման մեջ դնելու համար: Այդ գուրքինը էլեկտրական գեներատորի լիսերին պարագան շարժում է հաղորդում և գեներատորն սկսում է էլեկտրական հոսանք արդադրել:

Կինետիկ էներգիայով օժբված է նաև շարժվող օդը՝ քամին: Նրա էներգիան օգտագործվում է հողմաշարժիչներում (նկ. 29): Շարժվող օդը ճնշում է գործադրում օդային անիվի հողմաթեսերի կամ պարուրակների վրա և նրան շարժման մեջ դնում: Նողմաթեսերի պարագան շարժումը փոխանցվում է այս կամ այն աշխատանքը կարարող սարքերին: Այդ սարքերը կարող են լեռնային արոտավայրերում կամ անապատներում ջուրը վեր հանել, ջուրը ջրաշփարակ բարձրացնել, էլեկտրակեներգիա սպանալ և այլն: Միջին դարերում լայնորեն գործածված էին հողմաղացները:

Քամին միշտ չէ, որ նույն կողմից է փշում: Եթե քամու ուղղությունը փոխվում է, օդանիվը շրջվում է քամուն համընթաց: Շրջվելն ապահովում են հողմացույց կոչվող պոչուկային թիթեղները:

Քամու ժամանակակից շարժիչներում հաջողվում է կարգավորել նույնիսկ հողմաղացների պարուրակի պարուրակների հաճախությունը: Ինչպես հայտնի է, քամու արագությունը փոփոխական է: Որպեսզի այդ փոփոխությունները հաշվի առնելու հնարավորություն ունենան, քամանիվի հողմաթեսերը շրջադարձվող են անում: Եթե քամին ուժեղանում է, հողմաթեսերը եզրերով շրջվում են դեպի քամին, եթե քամին թուլանում է, շրջվում են ամրող հարթությամբ:

Այն դեպքում, եթե հիդրոկայանների ամբարդակները, գետերի վրա արհեստական ծովեր առաջացնելով, խախտում են բնության հավասարակշ-


ուությունը (փոխվում է մերձափնյա գտարածքների միկրոկլիման, դժվարանում՝ ձևների ծվաղբան գաղթը, գետի ափերը ջրասույզ են լինում և այլն), քամու Էներգիա արդարողությունը կայանքները ներդաշնակորեն համադրվում են շրջակա միջավայրի հետ:

Ի գարքերություն ջերմային ու ափումային էլեկտրակայանների՝ քամու կայանքները կառուցումից հետո վառելիքի ծախս այլևս չեն պահանջում: Նրանց կողմից օգտագործվող քամու Էներգիան մարդակարարվում է (վերականգնվում է) բնության կողմից: Բացի դրանից, քամու շարժիչների աշխատանքը վնասակար թափոններ չի գոյացնում (ինչպես վառելիքի այրման ժամանակ առաջացող զագերը կամ էլ ռադիոակտիվ թափոնները): Այդ պարճառով, քամու շարժիչները Էներգիայի Էկոլոգիապես մաքուր աղբյուրներ են:

Էկոլոգիապես մաքուր են նաև մակրնթացային էլեկտրակայանները (ՄԷԿ-ները), որոնք օգտագործում են ծովերի ու օվկիանոսների ջրի մակնթացությունն ու գրեղագությունը: Այդպիսի մի քանի կայաններ գործում են Ռուսաստանի Դաշնությունում: Նրանց մեջ ամենահզորը Մեզենսկյան ՄԷԿ-ն է Սպիտակ ծովի ափին: Նրա ամբարտակի բարձրությունը 6 մետր է, երկարությունը 93 մետր: Տեղադրված է 80 հիդրոգուրիքներ: Այս կայանի հզորությունը 15200 մեգավատ է:

Հարցեր

1. Որպե՞ն է օգտագործվում շարժվող ջրի Էներգիան:
2. Ինչպիսի՞ Էներգիա է օգտագործվում քամու շարժիչներում:
3. Շիդրոկայանների, ջերմակայանների, ափումակայանների հետ համեմարտած՝ ի՞նչ առավելություններ ունեն քամու կայանքները:
4. Ի՞նչ է ՄԷԿ-ը:



§ 19. Մեխանիկական փափանումներ

Տափանումները շարժման չափազանց փարածված դրևակ են: Տափանումների թվին են պափկանում քամուց ծառերի ճյուղերի ճռվելը, երածշփական գործիքների լարերի թրթիռները, ավտոմեքենայի շարժիչի զլաններում միացների շարժվելը, ճռվանակի ճռվելը, պարի ճամացույցի և նոյնիսկ մեր սրբի զարկերը:


Տափանողական շարժումը դիրքարկենք թելավոր և զսպանակավոր ճաճանակների օրինակներով:

Թելավոր ճոճանակը պարկերված է նկար 30-ում: Այն բարակ ու թեթև թելից կախված գնդիկ է: Եթե գնդիկը հավասարակշռության դիրքից հանելով՝ մի կողմ շեղենք ու բաց թողնենք, այն կսկսի **փափանվել**, այսինքն՝ կրկնվող շարժումներ կարարել՝ պարբերաբար անցնելով հավասարակշռության դիրքով:


Նկար 31-ում պարկերված է **զսպանակավոր ճոճանակը**: Այս ճռանակը զսպանակից կախված քեռ է և ի վիճակի է փափանվել զսպանակի առաձգականության ուժի շնորհիվ:

Տափանողական շարժումը բնութագրում են լայնութեամբ, պարբերությամբ և հաճախությամբ.

A – լայնության, T – պարբերություն, v – հաճախություն



Նկար 30



Նկար 31

Տարանումների լայնույթն այն առավելագույն հետավորությունն է, որի չափով իր հավասարակշռության դիրքից կարողանում է հետանալ գործառնող մարմինը: Տարանումների լայնույթը չափում է երկարության միավորներով՝ մետրերով, սանդիմետրերով:

Տարանումների պարբերությունը մեկ գործառնում կարարելու համար անհրաժեշտ ժամանակամիջոցն է: Տարանումների պարբերությունը չափում է ժամանակի միավորներով՝ վայրկյաններով, րոպեներով:

Տարանումների հաճախությունը մեկ վայրկյանում կարարվող գործառնումների թիվն է: Միավորների ՄԴ-ում հաճախականության չափման միավոր է ընդունված հերցը (1 Հց)` գերմանացի Ֆիզիկոս Ն. Շերցի պարզվին (1857-1894 թթ.): Եթե գործառնումների հաճախությունը հավասար է 1 Հց-ի, նշանակում է յուրաքանչյուր վայրկյանի ընթացքում կարարվում է մեկ գործառնում: Իսկ եթե, օրինակ՝ հաճախությունը $v=50$ Հց, նշանակում է, որ մեկ վայրկյանի ընթացքում կարարվում է 50 գործառնում:

Տարանումների T պարբերության և v հաճախության համար ճիշդ են այն նույն բանաձևերը, որ մենք սպացանք շրջանագծային հավասարաչափ շարժման հաճախության և պարբերության համար (գլեն § 8):

1. Տարանումների պարբերությունը որոշելու համար անհրաժեշտ է ժամանակը բաժանել այդ ընթացքում կարարված գործառնումների ո թվի վրա.

$$T = \frac{t}{n} : \quad (19.1)$$

2. Տարանումների հաճախությունը որոշելու համար անհրաժեշտ է գործառնումների ո թիվը բաժանել այն ժամանակի վրա, որի ընթացքում այդ գործառնումները դրևի են ունեցել.

$$v = \frac{n}{t} : \quad (19.2)$$

Տարանումների թիվը հաշվելու համար անհրաժեշտ է զործնականում հարակ պարկերացնել, թե իրենից ինչ է ներկայացնում մեկ (լրիվ) գործառնումը: Եթե օրինակ՝ ճոճանակն սկսում է շարժվել 1 կերպից (գլեն նկար 30), ապա մեկ գործառնում է համարվում նրա այնպիսի շարժումը, երբ ճոճանակն անցնելով նշված հավասարակշռության 0 դիրքը, հետո հասնելով 2 դիրքին, եսք է վերադառնում, անցնում է հավասարակշռության 0 դիրքը և նորից հասնում 1 դիրքին:

Նամեմագրելով (19.1) և (19.2) բանաձևերը՝ դեսնում ենք, որ դադանումների պարբերությունն ու հաճախությունը հակադարձ մնջություններ են, այսինքն՝


$$T = \frac{1}{v}, \quad v = \frac{1}{T} : \quad (19.3)$$

Տափանման ժամանակ մարմնի դիրքն անընդհատ փոփոխվում է: Տափանվող մարմնի կոռորդինատների՝ ժամանակից կախման գրաֆիկն առանցքի վրա դեղադրում են տ ժամանակը, ուղղահայացի առանցքի վրա՝ x կոռորդինատը: Այդ կոռորդինատի մողուլը ցույց է դարձնում առանցքի պահին հավասարակշռության դիրքից ինչ հեռավորության վրա է գրնվուած դադանումների մարմինը (նյութական կեպը): Եթե մարմինն անցնում է հավասարակշռության դիրքով, կոռորդինատի նշանը փոփոխվում է հակառակի՝ դրանով ցույց դարձնում, որ մարմինը հայդրով է միջին դիրքի մյուս կողմում:


Տափանումների գրաֆիկի ձևի մասին կարելի է դադել՝ հիմնվելով հետևյալ փորձերի վրա:

Զսպանակավոր ճոճանակը միացնենք գրող սարքի հետ և դադանումների առաջ սկսենք հավասարաչափ շարժել թղթե ժապավենը (նկ.32): Գրող սարքը թղթե ժապավենի վրա զիծ կնկարի, որը ձևով կհամընկնի դադանումների գրաֆիկի հետ:


Թելավոր ճոճանակի դադանումների գրառման համար կարելի է օգտագործել նկար 33-ում պատկերված սարքը: Այսպես ճոճանակ է ծառա-



Նկար 32



Նկար 33



Նկար 34

յում ավագով լցված ձագարը: Եթե դապանվող ձագարի փակ հավասարաչափ գործությունը բարակ գործություն է (կամ բարակ գործությունը բարակ գործություն), ապա դա կամ ավագ նրա վրա հետք կթողնի:

Բավականաչափ փոքր շփումների և կարճ ժամանակահավածների դեպքում ճոճանակներից յուրաքանչյուրի դապանումների գրաֆիկը նման է սինուսոիդ կորի կամ, կարճ ասած, սինուսոիդ է:

Տապանումների գրաֆիկով կարելի է որոշել դապանողական շարժման բոլոր բնութագրերը: Այսպես, օրինակ՝ նկար 34-ում պարզերված գրաֆիկը նկարագրում է $A=5$ սմ լայնություն, $T=4$ վ պարբերությամբ և $v=1/T=0,25$ մ/վ հաճախությամբ դապանումներ:

«Արցեր»

1. Անընդհակեած դապանումների օրինակներ:
2. Ի՞նչն են անվանում դապանման լայնույթ:
3. Ի՞նչ է դապանման պարբերությունը:
4. Ի՞նչն են անվանում դապանման հաճախություն:
5. Ինչպես է կոչվում դապանման հաճախության միավորը:
6. Ինչո՞վ է դապանման գաղանակավոր ճոճանակը բեկալավոր ճոճանակից:
7. Դավասարակշռության դիրքից հետանալիս թելավոր ճոճանակին ի՞նչ ուժ է ապիսում հետ շարժվել: Ինչո՞ւ նա կանգ չի առնում հավասարակշռության դիրքում:
8. Ի՞նչ ուժի ազդեցությամբ են դեղի ունենում գաղանակավոր ճոճանակի դապանումները:

§ 20. Էներգիայի փոխակերպումները դաստիարակության մասին

Օդի դիմադրության պարագաները ճնշանակի դաստիարակումները մարդու բնույթ են կրում. դրանց լայնույթն ասդիմանաբար նվազում, և ի վերջու ճնշանակը կանգ է առնում (նկ. 35):


Սակայն եթե օդի դիմադրությունը փոքր է, ապա ժամանակի դրսության փոքր հափակածներում այն կարելի է հաշվի չառնել: Այս դեպքում ճնշանակի նկարմամբ կարելի է կիրառել էներգիայի պահպանման օրենքը:

Որպես օրինակ քննարկենք թելավոր ճնշանակը: Եթե այն հանում են հավասարակշռության վիճակից, այդպիսով նրան հաղորդում են որոշակի E_{ω} պոտենցիալ էներգիա: Տապանումների սկզբում, եթե ճնշանակը, թափ առնելով շրջանի աղեղով, սրբնթաց ցած է իշնում (դեպքի հավասարակշռության դիրքը), նրա պոտենցիալ էներգիան նվազում է, իսկ կինետիկը՝ աճում: Միշին դիրքում E_{η} կինետիկ էներգիան առավելագույնն է, իսկ պոտենցիալը՝ նվազագույնը (հավասար է զրոյի): Այն բանից հետո, եթե ճնշանակը իներցիայով անցնի հավասարակշռության դիրքից, նրա կինետիկ էներգիան կսկսի նվազել, իսկ պոտենցիալը՝ աճել: Եզրային դիրքում ճնշանակի պոտենցիալ էներգիան կհասնի իր առավելագույն արժեքին, իսկ կինետիկ էներգիան կվերածվի զրոյի: Այնուհետև այս ամենը կը կննի հակառակ հաջորդականությամբ:

Ընդունված է ասել, որ ճնշանակի դաստիարակումների ընթացքում նրա պոտենցիալ էներգիան պարբերաբար փոխակերպվում է կինետիկ էներգիայի, իսկ կինետիկ էներգիան՝ պոտենցիալի.

$$E_{\omega} \rightarrow E_{\eta} \rightarrow E_{\omega} \rightarrow \dots$$

Այս էներգիաներից յուրաքանչյուրն առանձին-առանձին փոփոխվում է, սակայն դրանց գումարը (այսինքն՝ E լիիվ մեխանիկական էներգիան) շփման և դիմադրության ուժերի բացակայության դեպքում մնում է անփոփոխ:



Նկար 35

Նարցեր

- Ինչո՞ւ են մարում ճոճանակի դատանումները:
- Էներգիայի ինչպիսի՞ փոխակերպումներ են դեղի ունենում ճոճանակի շնարող դատանումների դեպքում:
- Ճոճանակի ո՞ր դիրքերում է նրա արագությունը հավասարվում գրոյի: Ո՞ր դիրքում է այն առավելագույնը: Ինչո՞ւ:

Փորձարարական առաջադրանք: Ձեկից փոքր բեռ կախե՞ք: Այն դուրս բերեք հավասարակշռության դիրքից և բաց թողեք: Մի որոշ ժամանակ հետևեք ճոճանակի դատանումներին: Պարկերեք ճոճանակը՝ նշելով ճոճանակի այն դիրքերը, որոնցում ա) կինեփիկ էներգիան առավելագույնն է, բ) կինեփիկ էներգիան նվազագույնն է, գ) պոտենցիալ էներգիան նվազագույնն է, դ) պոտենցիալ էներգիան առավելագույնն է:

§ 21. Տարանումների դեսակները

Զսպանակավոր և թելավոր ճոճանակների դատանումները, որոնք քննարկվեցին նախորդ պարագրաֆներում, կոչվում են ազար: **Ազար** դատանումները գեղի են ունենում «ինքնարերարար», առանց արդարին, պարբերաբար փոփոխվող ուժերի ազդեցության: Խսկ այդպիսի ուժերի առկայության դեպքում դատանումները կոչվում են **հարկադրական**:

Անհարթ ճանապարհով շարժվող ավտոմեքենայի ցնցումները, նավախելի թերթ դատանումները՝ պայմանավորված թիապուրակի աշխատանքով, ինչո՞ր մենքի կողմից պարբերաբար հրվող մանկական ճլորթու շարժումը. այս բոլորը հարկադրական դատանումներ են:

Հարկադրական դատանումներն ուսումնասիրելու համար կարելի է օգտագործել նկ. 36-ում պարկերված սարքը: Բռնակով շուրջվիկին ամրացնում են զսպանակավոր ճոճանակ: Բռնակը հավասարաչափ պարկելու դեպքում զսպանակի միջոցով բերին կհաղորդվի պարբերաբար փոփոխվող ուժի ազդեցությունը: Բռնակի պարման հաճախությանը հավասար հաճախությամբ փոփոխվելով՝ այդ ուժը կսփիսի բերին հարկադրական դատանումներ կարարել:

Չնայած արդաքին նմանությանը՝ ազատ և հարկադրական դպրանումների միջև էական դպրերություններ կան:

Շփման և միջավայրի դիմադրության առկայության պարզաբու ազատ դպրանումները մարում են. նրանց էներգիան և լայնութքը ժամանակի ընթացքում նվազում են: Դարկադրական դպրանումները չեն մարում. այդ դպրանումների ընթացքում դեղի ունեցող էներգիայի կորուսպները փոխապուցկում են արդաքին ուժի աղբյուրից եկող էներգիայով:

Դարկադրական դպրանումների հաճախությունը և պարբերությունը կարող են կամայական լինել. դրանք համընկնում են արդաքին ուժի փոփոխության հաճախության և պարբերության հետ (օրինակ՝ նկ. 36-ում պապկերված բռնակի պարբերության հետ): Ազատ դպրանումները կարող են դեղի ունենալ միայն որոշակի հաճախություններով և պարբերություններով, որոնք կախված են դպրանողական համակարգի բնութագրիչներից:

Այսպես, օրինակ՝ զապանակավոր ճոճանակը բնութագրվում է ո զանգվածով և զապանակի կոշփությամբ, որոնցով էլ որոշվում է զապանակից կախված բերի ազատ դպրանումների պարբերությունը.


$$T = 2\pi \sqrt{\frac{m}{k}} : \quad (21.1)$$

Թելավոր ճոճանակի ազատ դպրանումների պարբերությունը կախված է թելի և երկարությունից և ազատ անկման ը արագացումից:

$$T = 2\pi \sqrt{\frac{l}{g}} : \quad (21.2)$$

Թելավոր ճոճանակի դպրանումների պարբերությունը կախված չէ մարմնի զանգվածից:

Իմանալով պարբերությունը՝ կարելի է զգնել ազատ դպրանումների հաճախությունը: Այն կոչվում է դպրանողական համակարգի **սեփական հաճախություն**: Այս անվանումը պայմանավորված է նրանով, որ դպրանողական յուրաքանչյուր համակարգ ունի իր բնութագրիչները, և առանց



Նկար 36


դրանք փոխելու անհնար է փոխել սեփական հաճախությունը:

Բնության մեջ և գեինիկայում ամենապարբեր հաճախությունների տարանումներ են հանդիպում: Այսպես, օրինակ՝ Պերեբրուրզի Էսակիւյան դաշտում դաշտական գույնը ճոճանակի սեփական հաճախությունը 0,05 Հց է, երկաթուղային գսավակավոր վագոնի դաշտանումների հաճախությունը կազմում է մոտ 1 Հց, կամերդի դաշտանումների հաճախությունները կազմում են դաշտական հերցից մինչև մի քանի կիլոհերց, իսկ մոլեկուլներում ափումների դաշտանումների հաճախությունը կարող է հասնել միլիոնավոր մեզահերցերի:

Ազատ դաշտանումները ժամանակի ընթացքում մարում են: Այդ պար-ճառով գործնական նպագրակներով ավելի հաճախ օգտագործում են ոչ թե ազատ, այլ հարկադրական դաշտանումները: Առավել լայնորեն դրանք կիրառվում են զանազան վիրացիոն մեքենաներում: Դրանցից մեկի՝ հան-

քահար մուրճի մասին արդեն խոսվել է VII դասարանի դասագրքում: Այլ գեսակի վիրացիոն մեքենաներում հարկադրական դաշտանումներն առաջ են զայխ շիավասարակշռված պարզվող ռոպորների (այսպես կոչված հակահավասարակշիռների) պարբերական ներգործության արդյունքում: Այսպիսի մեքենայի օրինակ է վիրացիոն մուրճը:

Վիրացիոն մուրճը հարվածային վիրացիոն մեքենա է, որը նախարարեաված է գեպնի մեջ դարձնել գեսակի ցցեր, խողովակներ և այլն խփելու համար: Այս մեքենայի ուրվագիծը պարկերված է նկ. 37-ում: Վիրացիոն մուրճը զսպանակե կախոցի (1) միջոցով միացնում են ցցին (2): Նակահավասարակշիռների (3) պարզման ժամանակ առաջ են զայխ հարկադրական դաշտանումներ, որոնք ուղեկցվում են ցցի սալի (5) վրա կռանի (4) հարվածային իմպուլսներով: Ցցի դաշտի գեպինը վիրեցվում է, և ծանրության ուժի գործողության ազդեցությամբ ցիցը ներքև է իջնում:




Նկար 37


Նարցեր

1. Ո՞ր գրադանումներն են կոչվում ազադ: Բերենք օրինակներ:
2. Ո՞ր գրադանումներն են կոչվում հարկադրական: Բերենք օրինակներ:
 3. Ո՞ր գեսակի (ազադ, թե՛ հարկադրական) գրադանումներին են վերաբերում հետևյալ երևոյթները. Ներքին այրման շարժիչում միտցի շարժումը, սեղանի շարժումը, որ առաջացել է նրա վրա ծանր առարկա ընկնելու պարճառով, աշխադրող կարի մեքենայի ասեղի գրեղաշարժը, լարի գրադանումները, որոնք առաջացել են միանգամյա ներգործության արդյունքում:
4. Ինչո՞ւ ազադ գրադանումները ժամանակի ընթացքում մարում են, իսկ հարկադրականները՝ ոչ:
5. Ինչո՞վ է որոշվում ազադ գրադանումների հաճախությունը: Ինչո՞ւ են այն անվանում գրադանողական համակարգի սեփական հաճախություն:
6. Ի՞նչ բանաձևներով են հաշվարկվում զապանակավոր և թելավոր ճռճանակների ազադ գրադանումների պարբերությունները:
7. Ո՞ր մեքենաներում են օգտագործվում հարկադրական գրադանումները:


§ 22. Ռեզոնանս

Հարկադրական գրադանումների գարբերիչ առանձնահագիտությունը դրանց A լայնույթի կախվածությունն է արգարին ուժի փոփոխման v հաճախությունից: Այս կախվածությունն ուսումնասիրելու համար կարելի է օգրվել նկ. 36-ում պարբերված մեզ արդեն ծանոթ սարքից: Եթեն շուրջվիկի բռնակը շաբ դանդաղ պարեցնենք, ապա բեռը զապանակի հետ միասին վեր ու վար կգրեղաշարժվի այնպես, ինչպես կախման O կեպը: Այս դեպքում հարկադրական գրադանումների լայնույթը մեծ չի լինի: Ավելի արագ պարբելու դեպքում բեռը կսկսի ավելի ուժեղ գրադանվել, և զապանակավոր ճռճանակի սեփական հաճախությանը հավասար պարույքի հաճախության դեպքում





Նկար 39



Նկար 40

($v = v_{սեփ}$) նրա գրադանումների լայնույթը կհասնի առավելագույնին: Բռնակի պարույքի հաճախության հետքագա մեծացման ժամանակ բնորդի հարկադրական գրադանումների լայնույթը կրկին կփոքրանա: Իսկ բռնակը շար արագ պարույքու դեպքում բեռք կզգնվի գրեթե անշարժ վիճակում. իր իներգության պարզաբանվ չհասցնելով հետքեւ արդարին ուժի փոփոխություններին՝ զապանակավոր ճոճանակը պարզապես կակսի «գեղում դողալ»:

$v = v_{սեփ}$ դեպքում հարկադրական գրադանումների լայնույթի կորուկաձը կոճվում է **ռեզոնանս**:

Արդարին ուժի փոփոխության հաճախությունից հարկադրական գրադանումների լայնույթի կախվածության գրաֆիկը պարկերված է նկ. 38-ում: Այս գրաֆիկն անվանում են **ռեզոնանսային կոռ**: Այս կոռի առավելագույն կերպը համապարասիանում է այն v հաճախությանը, որը հավասար է գրադանումների $v_{սեփ}$ սեփական հաճախությանը:

Ռեզոնանսի երևույթը կարելի է ցուցադրել նաև թելավոր ճոճանակների միջոցով: Փայտե ձողից կախենք մի մեծ զունդ (1) և մի քանի թերթեն, դարբեր երկարության թելեր ունեցող ճոճանակներ (նկ. 39): Այդ ճոճանակներից յուրաքանչյուրն ունի գրադանումների իր սեփական հաճախությունը, որը կարելի է որոշել՝ իմանալով թելի երկարությունը և ազար անկման արագացումը: Այժմ, ձեռք չփալով թերթեն ճոճանակներին, հավասարակշռության վիճակից հանենք մեծ զունդը և բաց թողնենք: Ծանր զնդի ճոճվելու պարճառով ձողը կակսի պարբերաբար ճկվել, ինչն էլ կհանգեցնի նրան, որ թերթեն

ճոճանակներից յուրաքանչյուրի վրա կսկսի ազդել պարբերաբար փոփոխվող առաջականության ուժ: Դրա փոփոխման հաճախությունը հավասար կլինի գնդի քափանումների հաճախությանը: Այս ուժի ներգործության ներքո ճոճանակները կսկսեն հարկադրական քափանումներ կափարել: Ընդ որում մենք կդեսնենք, որ 2 և 3 ճոճանակները համարյա անշարժ կմնան: 4 և 5 ճոճանակները կսկսեն քափանվել մի փոքր ավելի մեծ լայնույթով: Իսկ 6 ճոճանակը, որն ունի թելի նույն երկարությունը, հետքեաբար և քափանումների նույն սեփական հաճախությունը, ինչ մեծ գունդը, կդադանվի ամենամեծ լայնույթով: Սա հենց ռեզոնանսի երևույթն է:

Ռեզոնանսը կարելի է դիմում պարկերված սարքի միջոցով: Մեփրոնոմի 1 ճոճանակի հիմքը թեկով միացնում են 2 ճոճանակի թեկին: Այս փոքրի դեպքում ճոճանակը ճոճվում է առավելագույն լայնույթով այն ժամանակ, երբ մեփրոնոմի (որը «քաշում է» ճոճանակի թելից) քափանումների հաճախությունը համընկնում է այդ ճոճանակի ազար քափանումների հաճախությանը:

Ռեզոնանսն առաջանում է այն պարբառով, որ արդարին ուժը, մարմնի ազար քափանումներին համարայլ գործելով, անընդհափ դրական աշխափանք է կափարում: Այս աշխափանքի շնորհիվ քափանվող մարմնի էներգիան մեծանում է, և քափանումների լայնույթն աճում է:

Ռեզոնանսի երևույթը կարող է ն' դրական, ն' բացասական դեր խաղալ:

«Այսինի է, օրինակ՝ որ մեծ զանգի ծանր լեզվակը կարող է գարութերել անզամ երեխան, եթե նա պարանի վրա ազդի լեզվակի ազար քափանումներին համապարախան:

Ռեզոնանսի կիրառման վրա է հիմնված *լեզվակավոր հաճախաչափի* աշխափանքը: Այս սարքը ընդհանուր հիմքի վրա ամրացված քարբեր երկարության առաջական թիթեղների հավաքածու է: Ամեն մի թիթեղի սեփական հաճախությունը հայփնի է: Տարանողական համակարգի հետ, որի հաճախությունը պետք է որոշել, հաճախաչափի շփման ժամանակ առավելագույն լայնույթով սկսում է քափանվել այն թիթեղը, որի հաճախությունը համընկնում է չափվող հաճախությանը: Տեսնելով, թե որ թիթեղն է մինչև ռեզոնանսի մեջ, մենք կորոշենք համակարգի քափանումների հաճախությունը:

Ունգոնանսի կարող ենք հանդիպել նաև այնպիսի դեպքերում, երբ այն միանգամայն անցանկապի է: Այսպես, օրինակ՝ 1750 թվականին Ֆրանսիայի Անժեր քաղաքի մոտքակայքում 102 մ երկարությամբ շղթայակապ կամրջի վրայով անցնում էր համաչափ քայլող զինվորների ջոկապը: Նրանց քայլերի հաճախությունը համընկավ կամրջի ազադ տարանումների հաճախությանը: Դրա պարճառով կամրջի տարանումների թափը կփրուկ մեծացավ (սկսվեց ռեզոնանսը), և շղթաները պոկվեցին: Կամուրջն ընկավ գերը:

1830 թվականին նույն պարճառով փլվեց Անգլիայի Մանչեստր քաղաքի մոտ գտնվող կախովի կամուրջը, երբ նրա վրայով շարային քայլով անցնում էր զինվորական ջոկապը:

1906 թվականին ռեզոնանսի պարճառով կործանվեց Պեփերբուրգի, այսպես կոչված, Եգիպտական կամուրջը, որով հեծելազոր էր անցնում:

Այժմ նման պարահարները կանխելու նպատակով կամրջով անցնելու դեպքում զորամասներին հրաման է տրվում շարժվել ոչ թե շարային, այլ ազադ քայլրով:

Իսկ եթե կամրջով գնացք է անցնում, ապա ռեզոնանսից խուսափելու համար այն կամ դանդաղ է շարժվում, կամ, ընդհակառակը, առավելագույն արագությամբ, որպեսզի ռելսերի կցափեղերի վրա գնացքի անիվների հարվածների հաճախությունը հավասար չլինի կամրջի սեփական հաճախությանը:

Իր սեփական հաճախությունն ունի նաև վազոնը, որը տարանվում է իր զսպակների վրա: Եթե ռելսերի կցափեղերի վրա վազոնի անիվների հարվածների հաճախությունը հավասարվում է այդ հաճախությանը, վազոնը սկսում է ուժեղ ճոճվել:

Ռեզոնանսի կարելի է հանդիպել ոչ միայն ցամաքում, այլև ջրում և անգամ օդում: Այսպես, օրինակ՝ թիալիսեռի պղպղման որոշակի հաճախության դեպքում ռեզոնանսի մեջ են մընում ամբողջական նավեր: Իսկ ավիացիայի զարգացման արշալույսին որոշ շարժիչներ օդանավերի մասերի ռեզոնանսային այնպիսի հումկու տարանումներ էին առաջացնում, որ դրանք կործանվում էին օդում:

Նարցեր


- Ի՞նչ է ռեզոնանսը: Ի՞նչ պայմաններում է այն ի հայտ գալիս:
- Նկարագրե՛ք փորձեր, որոնց ժամանակ դիվում է ռեզոնանսի երևոյթը:
- Ի՞նչ դեր (օգտակա՞ր, թե՛ վնասակար) է խաղում ռեզոնանսը մարդկանց կյանքում: Բերե՛ք օրինակներ:

§ 23. Մեխանիկական ալիքներ

Տիշո՞ւմ եք՝ ինչ եր գրում Կոզմա Պրուֆկովը. «Զրի մեջ քարեր նեփելիս նայիր դրանցից առաջացող շրջաններին, հակառակ դեպքում նեփումն դադարեց զբաղմունք կիհնի»: Իրար հաջորդող կապարների և զոգավորությունների փեսքով այդ շրջանները մինչ այդ շրի հանգիստ մակերևոյթի *խորորումներ* են: Առաջանալով մի փեղում (ուր նեփվել եր քարը)՝ դրանք անմիջապես սկսում են փարածվել բոլոր կողմերով (նկ. 41): Սրանք ալիքներն են:

Տեղուկի մակերևոյթին ալիքները գոյություն ունեն շնորհիվ հեղուկի մասնիկների վրա ծանրության ուժի և միջմոլեկուլային փոխազդեցության ուժի ներգործության: Այս փեսակի ալիքներից ամենափարածվածը և ուշագրավը ծովի ալիքներն են, այսինքն՝ ծովերի և օվկիանոսների մակերևոյթի ալիքները:

Անգլիացի գիբնական Ա. Էդինգտոնը գրում էր, որ «նավով ճանապարհորդողին թվում է, թե օվկիանոսը կազմված է ալիքներից, այլ ոչ թե ջրից»: Ալիքների առաջին նշույլները (մեղմ ծփանքը՝ զուգահեռ շարքերի փեսքով) ի հայտ են գալիս այն բանից հետո, երբ ջրի մակերևոյթի վրա ներգործող քամու արագությունը հասնում է $1,1 \text{ m/s}$: Քամու արագության մեծանալուն զուգընթաց ալիքների բնույթը փոխվում է.



Նկար 41

կարարների բարձրությունը մեծանում է, իսկ ձևը՝ բարդանում: Բալթիկ ծովում ալիքների բարձրությունը հասնում է 5 մ-ի, Ավրանպյան օվկիանոսում՝ մինչև 9 մ-ի, իսկ հարավային կիսագնդի ջրերում պարահել են 12-13 մետրանոց ալիքներ, որոնք գեղաշարժվել են մոտ 20 մ/վ արագությամբ:

Երբ ծովի ալիքները հասնում են ափին, ապա նրա մոտ ջրային շերտի խորության կրորուկ փոփոխության դեպքում կարող են ջրի չափազանց բարձր (երբեմն մի քանի գրանյակ մետր բարձրությամբ) ներդումներ առաջանալ: Այս դեպքում ջրի հսկայական զանգվածի կինետիկ էներգիան հաղորդվում է հանդիպակաց ափամերձ արգելքներին, որոնք հնարավոր է չկարողանան դիմագրավել ջրի ճնշմանը և քանդվեն: Վերախության կործանիչ ուժը երբեմն հասնում է զարմանալիորեն մեծ արժեքների: Այսպես, օրինակ՝ Շելլինյան կղզիներում կարելի է գրնել մինչև 13 դ զանգվածով ժայռաբեկորներ, որոնք ալերախության հետևանքով ներվել են մոտ 20 մ բարձրության վրա: Իսկ Բիլբաոյում (Իսպանիա) ալերախությունը շրջել և գեղահան է արել 1700 դ բերոնե զանգվածը:


Տեղուկի մակերևույթի վրա առաջացող ալիքներից բացի, մեխանիկան ուսումնասիրում է, այսպես կոչված, **առաձգական ալիքները**, որոնք պարագաներում են գործառքային միջավայրերում՝ շնորհիվ նրանցում գործող առաձգականության ուժերի: Այդ միջավայրերը կոչվում են **առաձգական**:

Վերցնենք, օրինակ՝ երկար պարան (կամ ռեվինե քույ) և նրա ծայրերից մեկն ամրացնենք պարին: Զգելով պարանը՝ ձեռքի կրորուկ շարժումով հարվածենք նրա չամրացված եզրին: Մենք կրեսնենք, որ այդ կարճափու խորորումը «կվազի» պարանի երկայնքով և հասնելով պարին՝ հետ կանդրադառնա (նկ. 42):

Միջավայրի սկզբնական խորորումը, որը հանգեցնում է նրանում ալիքի առաջացմանը, պայմանավորված է միջավայրում որևէ օգար մարմնի ազդեցությամբ: Վերջինս կոչվում է ալիքի **աղբյուր**: Դա կարող է լինել

մարդու ձեռքը, որը հարվածել է պարանին, փոքրիկ քարը, որ ներվել է ջուրը և այն:

Եթե աղբյուրի ներգործությունը կարճափու բնույթ է կրում, ապա միջավայրում առաջ է գալիս, այսպես կոչված, միայնակ




Նկար 42

ալիք (փես նկ. 42): Իսկ եթե ալիքի աղբյուրը երկարավուն գագառանողական շարժում է կապարում, ապա ալիքները միջավայրում սկսում են զնալ մեկը մյուսի հետևից: Նման պարկեր կարելի է փեսնել, եթե ջրով լի գագառի վերևում գրեղադրենք գագառվող թիթեղ, որի ծայրն իջեցված է ջրի մեջ:


Ալիքի առաջացման անհրաժեշտ պայմանը խորորման պահին արգելակիչ ուժի, օրինակ՝ առաձգականության ուժերի երևան գալն է: Այդ ուժերը ձգվում են մոփեցնել միջավայրի հարևան մասնիկները, եթե դրանք հեռացել են իրարից, և հեռացնել, եթե դրանք մոփեցել են: Ազդելով աղբյուրից ավելի ու ավելի հեռու գրնվող միջավայրի մասնիկների վրա՝ առաձգականության ուժերը սկսում են դրանք դուրս բերել հավասարակշռության վիճակից: Ասդիմանաբար միջավայրի բոլոր մասնիկները մեկը մյուսի հետևից ներգրավվում են գագառանողական շարժման մեջ: Այս գագառումների գագառածումն էլ ներկայանում է ալիքի գրեսով:

Յանկացած առաձգական ալիքում միաժամանակ գոյություն ունեն երկու տեսակի շարժումներ՝ միջավայրի մասնիկների գագառանումներ և խորորման գարածումը: Այն ալիքը, որում միջավայրի մասնիկները գագառվում են նրա գարածման ուղղության երկայնքով, կոչվում է **Երկայնական**, իսկ այն ալիքը, որում միջավայրի մասնիկները գագառվում են նրա գարածման ուղղությանն ուղղահայց, կոչվում է **Լայնական**:

Երկայնական ալիքում խորորումը ներկայանում է միջավայրի խորացումների և նոսրացումների ձևով, (նկ. 43, ա), իսկ լայնականում՝ միջավայրի որոշ շերպերի՝ մյուսների նկարմամբ գրեղաշարժերի սահքի գրեսով (նկ. 43 բ): Խորացումը միշտ ուղեկցվում է առաձգականության ուժերի ի հայր գալով, մինչդեռ սահքը հանգեցնում է առաձգականության ուժերի առաջացմանը միայն պինդ մարմիններում: Շերպերի գրեղաշարժերը զագերում և հեղուկներում առաձգականության ուժեր չեն առաջացնում: Ուստի **Երկայ-**




ա Երկայնական ալիք



բ Լայնական ալիք

Ալիքի տարածման
ուղղությունը



Նկար 44

նաև ալիքները կարող են փարածվել բոլոր միջավայրերում (և հեղուկ, և պինդ, և զազային), իսկ լայնական ները՝ միայն պինդ միջավայրերում:

Զրի (կամ ցանկացած այլ հեղուկի) մակերևույթի ալիքները ոչ երկայնական են, ոչ էլ լայնական: Դրանք բարդ, երկայնա-լայնական բնույթ ունեն, որի ժամանակ հեղուկի մասնիկները շարժվում են կամ շրջանագծով (նկ. 44), կամ հորիզոնական ուղղությամբ ձգված էլիպսներով: Դրանում հեշտ է համոզվել, եթե հետևենք զրի վրա թերև փաշեղի փեղաշարժերին: Բայց սա դեռ ամենը չէ: Զրի մակերևույթին մասնիկների շրջանաձև շարժումները (հարկապես փափանումների մեծ լայնությի դեպքում) ուղեկցվում են ալիքի փարածման ուղղությամբ դրանց դանդաղ փեղաշարժմամբ: Դենց սրանով է բացարձուվում «ծովային բարիքների» առկայությունը ծովափերին:

Հարցեր

1. Ինչո՞վ են փարբերվում առաձգական ալիքները հեղուկի մակերևույթի ալիքներից:
2. Ի՞նչ են հասկանում առաձգական միջավայրի խոփորում ասելով:
3. Ո՞րն է ալիքի առաջացման անհրաժեշտ պայմանը:
4. Ո՞ր ալիքներն են կոչվում երկայնական, որո՞նք՝ լայնական:
5. Ո՞ր միջավայրերում են փարածվում երկայնական ալիքները, որոնցո՞նք լայնականները:
6. Մասնիկներն ինչպե՞ս են շարժվում զրի մակերևույթի ալիքներում:

§ 24. Ալիքի արագություն և երկարություն

Ցանկացած ալիք փարածվում է որոշակի արագությամբ: **Ալիքի արագություն** ասելով հասկանում են խոփորման փարածման արագությունը:

Օրինակ՝ պողպարե ձողի ճակարին հարվածելիս նրանում առաջանում է գեղային խփացում, որն այնուհետև ձողի երկայնքով դարածվում է մոք 5 կմ/վ արագությամբ:

Ալիքի արագությունը որոշվում է այն միջավայրի հարկություններով, որում այդ ալիքը դարձվում է:Մի միջավայրից մեկ այլ միջավայր անցնելու դեպքում ալիքի արագությունը փոխվում է:

Արագությունից բացի ալիքի կարևոր բնութագրիչներից է ալիքի երկարությունը: **Ալիքի երկարություն** է կոչվում այն դարձությունը, որն անցնում է ալիքը դարձանումների պարբերությանը հավասար ժամանակամիջություն:

Քանի որ ալիքի արագությունը հասպարուն մեծություն է (գրված միջավայրի համար), ապա ալիքի անցած դարձությունը հավասար է արագության և նրա դարձման ժամանակի արդարության: **Վյայիսով՝ ալիքի երկարությունը գրնելու համար պետք է նրա արագությունը բազմապատկել դարձանումների պարբերությամբ.**


$$\lambda = vT, \quad (24.1)$$

որպես

v -ն ալիքի արագությունն է, T -ն՝ ալիքում դարձման պարբերությունը, λ -ն (հունարեն «լամբդա» բառը՝ ալիքի երկարությունը:

Իբրև ալիքի դարձման ուղղությունը ընդունվու գործելով x առանցքը և y -ով նշանակելով ալիքում դարձման մասնիկների կոորդինատը՝ կարելի է կառուցել **ալիքի գրաֆիկը:** Սինուսիդան ալիքի գրաֆիկը (ժամանակի դրվագը պահի համար) պարկերված է նկար 45-ում: Տարևան կարպարների (կամ զոգավորությունների) միջև հեռավորությունն այս գրաֆիկում համընկնում է ալիքի λ երկարությանը:

(24.1) բանաձևն արդարացնում է ալիքի երկարության կապը նրա արագության և պարբերության հետ: Տաշվի առնելով, որ դարձման պարբերությունը կամ զոգավորությունը պահպանվում է ալիքի գրաֆիկում:



Նկար 45

պարբերությունը հակադարձ համեմատական է հաճախությանը, այսինքն՝ $T=1/v$, կարելի է սրանալ մի բանաձև, որը կարգահայփի ալիքի երկարության կապը նրա արագության և հաճախության հետ:

$$\lambda = vT = v \cdot 1/v ,$$

որպեսից՝

$$v = \lambda v \quad (24.2)$$

Սրացված բանաձևը ցույց է տրամադրությանը հավասար է ալիքի երկարության և տրամանումների հաճախության արգադրությանը:

Ալիքում տրամանումների հաճախությունը համընկնում է աղբյուրի տրամանումների հաճախությանը (քանի որ միջավայրի մասնիկների տրամանումները հարկադրական են) և կապված չեն այն միջավայրի հավելություններից, որում ալիքը տրամածվում է: *Մի միջավայրից մեկ այլ միջավայր անցնելու դեպքում ալիքի հաճախությունը չի փոխվում, փոխվում են միայն ալիքի արագությունն ու երկարությունը:*

Տարցեր

1. Ի՞նչ են հասկանում ալիքի արագություն ասելով:
2. Ի՞նչ է ալիքի երկարությունը:
3. Ինչպես է կապված ալիքի երկարությունը նրա արագության և տրամանումների պարբերության հետ:
4. Ինչպես է ալիքի երկարությունը կապված արագության և տրամանումների հաճախության հետ:
5. Ալիքի հետևյալ բնութագրերից որո՞նք են փոխվում ալիքը մի միջավայրից մեկ այլ միջավայր անցնելու դեպքում. ա) ալիքի հաճախությունը, բ) պարբերությունը, զ) արագությունը, դ) երկարությունը:

Փորձարարական առաջադրանք: Տաշփի մեջ ջուր լցրե՛ք և մաղով (կամ քանոնով) ջրին ոդիմիկ հպումների միջոցով նրա մակերևույթին ալիքներ առաջացրե՛ք: Օգտագործելով տրամանումների պարբեր հաճախություններ (օրինակ՝ ջրին հպվելով վայրկյանում մեկ կամ երկու անգամ՝ ուշադրություն դարձրե՛ք ալիքների հարևան կապարների միջև հեռավորությանը: Տարանումների ինչպիսի հաճախության դեպքում է

ալիքի երկարությունն ավելի մեծ:


§ 23. Սեյսմիկ ալիքներ

Սեյսմիկ ալիքներ են կոչվում այն ալիքները, որոնք դարձվում են Երկրի ներսում երկրաշարժերի կամ այլ հզոր պայթյունների օջախներից: Քանի որ Երկիրը հիմնականում պինդ է, ուստի նրանում միաժամանակ կարող են առաջ գալ երկու դեսակի ալիքներ՝ երկայնական և լայնական: Այս ալիքների արագությունը նույնը չէ. երկայնական ալիքները լայնականներից ավելի արագ են դարձվում: Օրինակ՝ 500 կմ խորության վրա լայնական սեյսմիկ ալիքների արագությունը մոտավորապես 5 կմ/վ է, իսկ երկայնական ալիքներինը՝ մոտավորապես 10 կմ/վ:

Սեյսմիկ ալիքներով պայմանավորված Երկրի մակերևույթի դարձանումների արձանագրումն ու գրանցումն իրականացվում է *սեյսմոգրաֆ* կոչվող սարքի միջոցով: Սեյսմոգրաֆի հիմնական մասը ճոճանակն է, որը սկսում է դարձանվել սեյսմիկ ալիքների ի հայր գալուց: Սարքավորման պարզագույն դեսակի դեպքում ճոճանակը միացնում են գրող սարքին, որը հարուկ ժապավենի վրա գծում է դարձանումների գրաֆիկը:

Տարածվելով երկրաշարժի օջախից՝ առաջինը սեյսմիկ կայանին են հասնում երկայնական ալիքները, իսկ որոշ ժամանակ անց՝ լայնականները: Իմանալով երկրակեղենում ալիքների դարձման արագությունը՝ կարելի է որոշել մինչև երկրաշարժի էպիկենտրոնն ընկած R դարձությունը: Էպիկենտրոնի կոնկրետ դետալն իմանալու համար օգտագործում են մի քանի սեյսմիկ կայաններից սրացված փլյալները: Ենթադրենք, որ երկրաշարժի էպիկենտրոնից մինչև S_1 սեյսմիկ կայանն ընկած հեռավորությունը հավասար է R_1 -ի, մինչև S_2 կայանը՝ R_2 , իսկ մինչև S_3 -ը՝ R_3 : Այդ դեպքում քարբեզի վրա սեյսմիկ կայանների շուրջը գծելով համապատասխան շառավիղներով շրջանագծեր և զդունքով դրանց հարման կետը՝ կիմանանք՝ որպես է զդունքում սեյսմիկ ալիքների աղբյուրը (նկ. 46-ում A կետը):

Երկրագնդում դարձելան հարյուր հազար-



Նկար 46

Վոր Երկրաշարժեր են զրանցվում: Դրանց գերակշիռ մասը թույլ են, սակայն ժամանակ առ ժամանակ պարահում են այնպիսինները, որոնք խախտում են Երկրակեղենի ամբողջականությունը, ավերում են շինությունները և հանգեցնում մարդկային զոհերի:

Երկրաշարժերի ուժգնությունը որոշում են 12 բալանց սանդղակի միջոցով (աղ. 4):

Աղյուսակ 4

Բալ	Երկրաշարժի անվանումը	Համառորդ բնութագիրը
1	Անշան	Գրանցվում է միայն սեյսմիկ սարքավորումների միջոցով:
2	Շապ թույլ	Զգում են միայն լիակաբար հանգստի վիճակում գրնվող հարցուկներ մարդիկ:
3	Թույլ	Զգում է բնակչության մի փոքր մասը:
4	Չափավոր	Բնորոշ է առարկաների, ամանեղենի և պարուհանների ապակիների թերթ զնզվածողը և բարանումը, դռների և պարերի ճռոցը:
5	Բավականաչափ ուժեղ	Շենքերի ընդհանուր ցնցումներ, կահույքի բարանումներ: Լուսամուգների ապակիների և պարերի սվաղի ճաքը: Քնած մարդիկ արթնանում են:
6	Ուժեղ	Զգում են բոլորը: Պարերին ամրացված նկարները ցած են ընկնում: Մվառի կորոններ են արկվում: Շենքերը թերթ վնասվածքներ են սպանում:
7	Շապ ուժեղ	Ճաքում են քարե գրների պարերը: Սեյսմակայուն և փայտե շինություններն անվաս են մնում:
8	Ավերիչ	Ճաքեր են առաջանում զատիթափ լանջերին և խոնավ հողում: Ռուշարձանները դեղաշարժվում են կամ շրջվում:
9	Անայացնող	Ճաքեր գրների մեծ վնասվածքներ և ավերումներ:
10	Կործանիչ	Ռողի խոշոր ճնշելիքներ: Փլուզումներ և սողվածքներ: Ճաքեր շինությունների ավերումներ: Երկաթզգի ռելսները ծոմովում են:
11	Աղեկ	Ռողում լայն ճնշելիք: Բազմաթիվ փլուզումներ և սողվածքներ: Ճաքեր գրներն ամրողացվին ավերվում են:
12	Սասպիկ աղեկ	Բնահողի փոփոխությունները հասնում են հսկայական չափերի: Բազմաբանակ ճնշելիքներ, փլուզումներ, սողվածքներ: Զրվեմների, լճերում և նրանքակների առաջացում, զերերի հոսանքների շեղում: Ոչ մի շինություն կանգուն չի մնում:

Օրինակ՝ Աշխարադի 1948 թ-ի Երկրաշարժը գնահապելում է 9-10 բալ,

իսկ 1966 թ-ի Տաշքենդի երկրաշարժը՝ 8 բալ: Նման աղեգների ժամանակ հսկայական քանակությամբ մարդիկ են զոհվում: Հայաստանում Սպիտակի երկրաշարժի ժամանակ (1988 թ.) մի քանի փասնյակ հազար մարդ զոհվեց, իսկ Չինաստանում Տյան Շանի երկրաշարժի ժամանակ (1976 թ.) մարդկային զոհերի թիվը հասավ մի քանի հարյուր հազարի:

Ուժեղ երկրաշարժերի ավերիչ հեփանքներին դիմակայել հնարավոր է միայն սեյսմակայուն շինություններ կառուցելու միջոցով: Սակայն այսպիսի շինարարությունները բավականին թանկ արժեն, և բացի այդ միշտ չեն, որ հասպարապես հայտնի են, թե որքեւդ պետք է կառուցել այդպիսի շինությունները: Երկրաշարժերի կանխագիտումը շատ բարդ խնդիր է: Այս խնդրի լուծմամբ են զրադպում հարուկ ազգային ծառայությունները և գիտահետազոտական ինստիտուտները:

Երկրի ներսում սեյսմիկ ալիքների փարածման հետագործությունը հնարավորություն է փալիս ուսումնասիրելու մեր մոլորակի խորքային կառուցվածքը: Նման ուսումնասիրությունների պարզագույն ուրվագիծը հեփսյալն է: Ինչ-որ մի փեղ հողի մեջ պայթուցիկ լիցք են փեղադրում, որից հետո սպորերկրյա պայթեցում են իրականացնում: Պայթյունի վայրից բոլոր կողմերով փարածվող սեյսմիկ ալիքները Երկրի ներսում հասնում են փարբեր շերպերի: Դրանցից յուրաքանչյուրի սահմանին առաջանում են անդրադարձող ալիքներ: Այդ ալիքները վերադառնում են Երկրի մակերևույթ և գրանցվում են հարուկ սեյսմահետքափայլական կայանների կողմից: Այս կերպ, օրինակ՝ հասպարվեց, որ Երկրի ընդերքը կարելի է բաժանել երեք հիմնական մասի՝ երկրակետների, միջնապարյանի և միջուկի: Զափումները ցույց տվեցին, որ մոլորապես 2800 կմ խորության վրա (միջնապարյանի և միջուկի սահմանագծին) երկայնական ալիքների արագությունը թոփքածն նվազում է՝ 13,6-ից դառնալով 8,1 կմ/վ, իսկ լայնական ալիքների արագությունը՝ 7,3 կմ/վ-ից հավասարվելով գրոյի: Լայնական ալիքների համար միջուկի անթափանցելիությունը վկայում է, որ միջուկի արգաքին շերպը ոչ թե պինդ է, այլ հեղուկ:

Երկրագնդի կառուցվածքի ուսումնասիրությունից բացի սեյսմիկ հեփախուզությունը հայտնաբերում է այն վայրերը, որոնք նպաստավոր են նավթի և գազի կուրակման համար:

Սեյսմիկ հեղագործություններ իրականացվում են ոչ միայն Երկրում, այլև երկնային այլ մարմիններում: Այսպես, օրինակ՝ 1969 թ-ին ամերիկյան ասդրագնացները սեյսմիկ կայաններ փեղադրեցին Լուսնի վրա: Այդ կայանները գրաբեկան 600-ից մինչև 3000 թույլ լուսնաշարժեր են գրանցում: Իսկ 1976 թ-ին ամերիկյան «Վիկինգ» գրիեզերական ապարատը սեյսմոգրաֆ փեղակայեց Մարսի վրա: Սակայն կապի խիստ խանգարումների պատճառով Մարսի սեյսմիկ վիճակի մասին հավասարի գրյալներ սրանալ չի հաջողվել:

Նարզեր


1. Ո՞ր ալիքներն են կոչվում սեյսմիկ:
2. Դինդ մարմիններում ո՞ր ալիքների արագությունն է ավելի մեծ՝ երկայնականներինը, թե՛ լայնականներինը:
3. Ի՞նչ կերպ կարելի է որոշել երկրաշարժի էպիկենտրոնի դրերը:
4. Երկրի ուսումնասիրման ո՞ր մեթոդներն են հնարավորություն գրալիս որոշելու նրա ներքին կառուցվածքը:
5. Ինչի՞ց է հեղևուում, որ Երկրի միջուկի արդարին շերպը հեղուկ է:

§ 26. Զայնային ալիքներ

Առաձգական ալիքները, որոնք գրարածվում են օդում, ինչպես նաև հեղուկներում և պինդ մարմիններում, անդեսանելի են: Սակայն որոշակի պայմաններում դրանք կարելի է լսել:

Կարտարենք հեղևույալ փորձը: Մամլակի մեջ սեղմենք երկար պողպապյաքանոնք: Եթե քանոնի մեծ մասը գրնվի մամլակից վերև (նկ. 47 ա), ապա այն գրադանելով՝ մենք չենք լսի նրանից առաջացող ալիքների ձայնը: Բայց եթե կարճացնենք մամլակից վեր գրնվող մասը և դրանով իսկ մեծացնենք նրա գրադանումների հաճախությունը, ապա կհայդնաբերենք, որ քանոնք սկսեց հնչել (նկ. 47 բ):

Առաձգական ալիքները, որոնք կարող են մարդու մով լսողական զգացողություն առաջացնել, կոչվում են ձայնային ալիքներ կամ պարզապես ձայն:




Մարդու ականջը ընդունակ է ընկալել մոդավորապես 16 Նց-ից մինչև 20 կԴց հաճախությամբ առաձգական ալիքները: Դրա համար էլ 16 Նց-ից մինչև 20 կԴց-ն ընդգրկվող հաճախությունները կոչվում են ծայնային: Ցանկացած մարմին, որ փարանվում է ծայնային հաճախությամբ, ծայնի աղբյուր է, քանի որ նրան շրջապատող միջավայրում առաջանում են նրանից փարածվող ծայնային ալիքներ:

Կենդանիները որպես ծայն ընկալում են այլ հաճախությունների ալիքներ:

Գոյություն ունեն ծայնի բնական և արհեստական աղբյուրներ: Չայնի արհեստական աղբյուրներից մեկը կսմերտունն է (նկ. 48): Վյու սփեղծել է անզլիացի երաժիշտ Ջ.Շորը 1711 թ-ին՝ երաժշտական գործիքներ լարելու համար:

Կամերփոնը երկու ճյուղի փեսքով կորացված, մեջքեղում բռնիչ ունեցող մելքաղել ձող է: Ունի մուրճով կամերփոնի ճյուղերից մեկին հարվածելով՝ որոշակի ծայն կլսենք: Վյու ծայնն առաջանում է կամերփոնին հարվածելուց հետո. նրա ճյուղերը սկսում են թրթռալ՝ իրենց շուրջը սփեղծելով օդի փոփոխական խփացումներ և նոսրացումներ (նկ. 48 ա): Տարածվելով օդում՝ այդ փարանումները ծայնային ալիք են սփեղծում:

Կամերփոնի փարանումների սփանդարք հաճախությունը 440 Նց է: Սա նշանակում է, որ 1 վայրկյանում նրա ճյուղերը հասցնում են 440 փարանում կափարել: Աչքի համար դրանք փեսանելի չեն: Սակայն եթե հպվեք հնչող





կամերփոնին, ապա կզզաք նրա թրթռոցը: Կամերփոնի փափանումների բնույթը որոշելու համար հարկավոր է նրա ճյուղերից մեկին ասել ամրացնել: Կամերփոնը հնչնելով՝ նրան ամրացված ասեղով այն փանենք մրոդված ապակու շերփի վրայով: Շերփի վրա կհայփնվի սինուսիդի փեաքով հետքը (նկ. 49):

Կամերփոնի արձակած ձայնն ուժեղացնելու համար նրա բռնիչը ամրացնում են փայփե արկղիկի վրա, որի մի կողմը բաց է (նկ. 48 թ): Այս արկղիկն անվանում են ռեզոնաֆոր: Կամերփոնի փափանումների ժամանակ արկղիկի թրթռումը հաղորդվում է նրա մեջ զգնվող օդին: Ռեզոնանսի պարճառով, որն առաջանում է արկղի ճիշդ ընդուրված չափսերի դեպքում, օդի հարկադրական փափանումների լայնույթը մեծանում է, և ձայնը ուժեցնանում է: Նրա ուժեցնագույնը նպաստում է նաև ճառագայթող մակերևույթի մակերեսի մեծացումը, որը փեղի է ունենում կամերփոնը արկղիկին միացնելու դեպքում:

Համանման երևույթ է փեղի ունենում այնպիսի երաժշգրական գործիքներում, ինչպիսիք են կիթառը, ջույշակը և այլն: Այս գործիքների լարերը ինքնուրույնարար թույլ ձայն են արձակում: Այն ուժեցնանում է շնորհիվ բացվածք ունեցող որոշակի ձևի իրանի առկայության, որի միջից ձայնային ալիքներ են դուրս գալիս:

Զայնի աղբյուր կարող են լինել ոչ միայն փափանվող պինդ մարմինները, այլև որոշ երևույթներ, որոնք շրջակա միջավայրում ճնշման փափանումներ են առաջացնում (պայթյունը, հրա-



Նկար 49


ցանի գնդակի թռիչքը, քամու ոռնոցը և այլն): Այս երևոյթի վառ օրինակ է կայծակը: Ամպրոպի ժամանակ ջերմաստիճանը կայծակի փիրոյթում բարձրանում է մինչև $30\,000\text{ }^{\circ}\text{C}$: Ճնշումը կիրուկ աճում է, և օդում առաջանում է հարվածային ալիք, որն ասդիմանաբար վերածվում է ձայնային փափանումների ($60\text{--}70$ բնութագրական հաճախությամբ), որոնք փարածվում են՝ առաջացնելով որոպի:

Զայնի հեփաքրքրական աղբյուր է սկավառակածն շչակը, որ հայտնագործել է գերմանացի Փիզիկոս Տ. Զեերեկը (1770–1831): Սա էլեկտրական շարժիչին միացված, անցքեր ունեցող սկավառակ է, որը գրնվում է օդի ուժեղ շիրի դիմաց (նկ. 50): Սկավառակի պիրվելու ժամանակ օդի հոսքը, անցնելով անցքերի միջով, ժամանակ առ ժամանակ ընդհապվում է, ինչի արդյունքում առանձնահապուկ սուր ձայն է առաջանում: Այս ձայնի հաճախությունը կարելի է գրնել $v = nk$ բանաձևով, որտեղ n -ը սկավառակի պիրվման հաճախությունն է, k -ն՝ նրա վրա եղած անցքերի թիվը:


Սկավառակի վրա փարբեր քանակությամբ անցքեր բացելով և կարգավորելով սկավառակի պիրվման հաճախությունը՝ կարելի է փարբեր հաճախության ձայներ սպանալ: Գործնականում կիրառվող այս շչակների հաճախությունը սովորաբար գրնվում է $200\text{--}300$ հաճախությունը՝ մինչև $100\text{--}150$ սահմաններում:

Գագերում և հեղուկներում ձայնային ալիքների դարածվում և խրացման և նոսրացման երկայնական ալիքների տեսքով (նկ. 51): Միջավայրի խրացումները և նոսրացումները, որոնք ի հայտ է գալիս ձայնի աղբյուրի (զանգակի, լարի, կամերպոնի, հեռախոսի մեմբրանի, ձայնալարերի և այլն) դարանումների արդյունքում, որոշ ժամանակ անց հասնում են մարդու ականջին և սփիթելով ականջի թմբկաթաղանթին հարկադրական դարանումներ կարարել՝ մարդու մոտ որոշակի լսողական զգացողություն են առաջացնում:

Մարդու ականջը շատ զգայուն սարք է: Զայնը մենք սկսում ենք ընկալել արդեն այն ժամանակ, եթե ալիքում օդի մասնիկների դարանումների



Նկար 50



Նկար 51

լայնույթը հավասար է լինում ընդամենը ափումի շառավղին:

Տարիքի հետ թմբկաթաղանթի էլաստիկության կորստի պարզառով մարդու կողմից ընկալվող հաճախությունների վերին սահմանը ասդիմանաբար իջնում է: Միայն երիտասարդներն են ընդունակ լսելու 20 կՇց հաճախության ձայները: Միջին, առավել ևս գրանց հասակում և՛ գրամարդիկ, և՛ կանայք դադարում են ընկալել այն ձայները, որոնց հաճախությունը մեծ է 12-14 կՇց-ից:

Մարդկանց լսողությունը վարանում է ուժեղ ձայնների գրւական ազդեցության պարզառով: Հզոր ինքնաթիռների հարևանությամբ կամ զործարանների աղմկով արգադրամասերում աշխափանքը, հաճախակի այցելությունները դիսկորեկներ և ականջականներով բարձր երաժշպություն լսելը վնասակար ազդեցություն են թողնում ձայնների (հագրկապես բարձր հաճախությունների) սուր ընկալման վրա և որոշ դեպքերում կարող են հանգեցնել խլացման:

Դարցեր

1. Ի՞նչ է ձայնը:
2. Մարդու ականջը ի՞նչ հաճախության ալիքներ է ընկալում:
3. Թվարկե՛ք ձեզ հայդրի ձայնի աղբյուրներ: Դրանցից որո՞նք են բնական, որո՞նք՝ արհեստական:
4. Ի՞նչ է կամերդրունք: Ինչո՞ւ են այն ամրացնում փայփե արկդիկին:
5. Ո՞ր գրւակին (երկայնակա՞ն, թե՛ լայնական) են պարկանում զազերում և հեղուկներում հանդիպող ձայնային ալիքները:


Փորձարարական առաջադրանք: Ձեռքի ափը դնելով կոկորդին՝ ճայնավոր որսէ հնչյուն արդարեթնք: Բացապրենք ձեր զգացողությունները:

§ 27. Զայնը փարբեր միջավայրերում

Զայնի փարածման համար առածգական միջավայր է անհրաժեշտ: Անող փարածության մեջ ճայնային ալիքները չեն կարողանում փարածվել, քանի որ փափանվելու բան չկա: Դրանում կարելի է համոզվել հետևյալ պարզ փորձով: Եթե ապակյա զանգի փակ էլեկտրական զանգ դնենք, ապա պոմպով զանգից օղն ասդիմանաբար հանելիս կնկարենք, որ զանգի ճայնը սկսում է կամաց-կամաց թուլանալ, մինչև որ ընդհանրապես կլրվում է:

Զայնը գագերում: Հայտնի է, որ ամպրոպի ժամանակ մենք սկզբում դրեսնում ենք կայծակի փայլափակումը, և միայն որոշ ժամանակ անց լսում ամպերի որովք (նկ. 52): Այս հապաղումն առաջ է զայիս այն պարճառով, որ օդում ճայնի արագությունը զգալիորեն փոքր է կայծակից եկող լույսի արագությունից:

Օդում ճայնի արագությունն առաջին անգամ չափել է ֆրանսիացի գիտական Մ. Մերսենը 1636 թվականին: 20°C ջերմաստիճանում այն հավասար է 343 մ/վ-ի , այսինքն՝ 1235 կմ/ժ-ի : Նկագենք, որ 800 մ փարածության վրա հենց մինչև այս արժեքն է նվազում զնդակի արագությունը, որը դուրս է թռչել Կալաշնիկովի զնդացրից (ԿԳ): Գնդակի սկզբնական արագությունը



Նկար 52


825 մ/վ է, ինչը զգալիորեն զերազանցում է օդում ձայնի արագությունը: Դրա համար էլ մարդը, լսելով կրակոցի ձայնը կամ զնդակի սուլոցը, կարող է չանհանգստանալ. այդ զնդակը նրա կողքից է անցել: Գնդակն առաջ է անցնում կրակոցի ձայնից և իր զոհին է հասնում նախքան այդ ձայնի փեղ հասնելը:

Ձայնի արագությունը կախված է միջավայրի ջերմաստիճանից. օդի ջերմաստիճանը բարձրանալիս այն մեծանում է, իսկ ցածրանալիս՝ նվազում: 0 °C ջերմաստիճանում օդում ձայնի արագությունը կազմում է 331 մ/վ:

Տարբեր զագերում ձայնը փարածվում է փարբեր արագությամբ: Որքան մեծ է զազի մոլեկուլների զանգվածը, այնքան փոքր է դրանում ձայնի արագությունը: Վյապես՝ 0 °C ջերմաստիճանում ձայնի արագությունը ջրածնում 1284 մ/վ է, հելիումում՝ 965 մ/վ, իսկ թթվածնում՝ 316 մ/վ:

Ձայնը հեղուկներում: Եեղուկներում ձայնի արագությունը, որպես կանոն, մեծ է զագերում ձայնի արագությունից: Զրում ձայնի արագությունն առաջինը չափել են Ժ. Կոլադոնը և Յա. Շփուրմը 1826 թվականին: Իրենց փորձերը նրանք կարարում էին Շվեյցարիայում՝ Ժնևյան լճում (նկ. 53): Մի նավակի վրա վառող այրելով՝ միաժամանակ հարվածում էին ջրի մեջ իջեցրած զանգին: Վյա զանզի ձայնը ընդունվում էր առաջին նավակից 14 կմ հեռավորության վրա զբնվող երկրորդ նավակից ջրի մեջ իջեցված հագուկ ձայնափողի միջոցով: Լուսի բռնկման և ձայնային ազդանշանի փեղ հասնելու միջև ընկած ժամանակամիջոցի հիման վրա որոշեցին ջրում ձայնի արագությունը: Պարզվեց, որ 8 °C ջերմաստիճանում այն հավասար է մոդավորապես 1440 մ/վ-ի:

Երկու փարբեր միջավայրերի սահմանագծին ձայնային այիքի մի մասն անդրադառնում է, իսկ մյուս մասն անցնում է առաջ: Օդից ջրի մեջ անցնելիս ձայնային էներգիայի 99,9 %-ը հետք է անդրադառնում, սակայն ջրի մեջ



Նկար 53

անցած ձայնային ալիքում ճնշումը 2 անգամ ավելի մեծ է լինում: Զկների լսողական ապարատը հենց սրան է՝ արձագանքում: Դրա համար էլ ջրի մակերևույթի վրա գոռոցն ու աղմուկը ծովային բնակիչներին վախեցնելու վսրահելի միջոց են: Զրի տակ հայդնված մարդուն այդ ձայները չեն խլացնի. ջրի մեջ սուզվելիս նրա ականջների մեջ օդային «խցաններ» են մնում, որոնք էլ փրկում են նրան ձայնային գերբեռնվածությունից:

Ձայնը ջրից օդի մեջ անցնելիս դարձյալ անդրադարնում է նրա էներգիայի 99,9 %-ը: Բայց եթե օդից ջրի մեջ անցնելիս ձայնային ճնշումը մեծանում էր, ապա այժմ, ընդհակառակը, այն կդրուկ նվազում է: Տեսն այդ պարզաբանվ էլ, ասենք, մարդու ականջին չի հասնում ջրի տակ քարերի բախման ձայնը:

Զրի և օդի սահմանագծին ձայնի նման վարքն է մեր նախնիներին հիմք փվել սպորտայի աշխարհը «լուրջան աշխարհ» համարելու: Այսպեսից է «Համը է ծկան պես» արդահայպությունը: Սակայն դեռևս Լեռնարդո դա Վինչին էր առաջարկում լսել սպորտայի ձայները՝ ականջը ջրի մեջ իջեցրած թիակին հպելով: Օգրվելով այս միջոցից՝ կարելի է համոզվել, որ ձկներն իրականում բավականին շարախու են:

Ձայնը պինդ մարմիններում: Պինդ մարմիններում ձայնի արագությունն ավելի մեծ է, քան հեղուկներում և զագերում: Եթե ձեր ականջը հպեք ռելսին, ապա դրա մյուս ծայրին հարվածելուց հետո դուք երկու ձայն կլսեք: Դրանցից մեկը ձեր ականջին կհասնի ռելսի միջոցով, մյուսը՝ օդով:

Ձայնի լավ հաղորդականություն ունի հողը: Դրա համար հին ժամանակներում պաշարման ժամանակ ամրոցի պարերի մով «լսորդներ» էին կանգնում, որոնք հողից հաղորդվող ձայնի միջոցով կարողանում էին որոշել՝ թշնամին փորում է իրենց ամրոցի պարերի մով, թե՛ ոչ: Ականջը գեզնին դնելով՝ հեփսում էին թշնամու հեծելազորի մովենալուն:

Պինդ մարմինները լավ են հաղորդում ձայնը: Դրա շնորհիվ լսողությունը կորցրած մարդիկ երեսն կարողանում են պարել երաժշտության տակ, որը նրանց լսողական նյարդերին է հասնում ոչ թե օդի և արդաքին ականջի, այլ հարակի և ոսկորների միջոցով:

Նարցեր

- Ինչո՞ւ ամպրոպի ժամանակ մենք նախ դեսնում ենք կայծակը և հետո նոր լսում որոպէր:
- Ինչի՞ց է կախված զագերում ձայնի արագությունը:
- Ինչո՞ւ զեսի ափին կանգնած մարդը չի լսում ջրի տակ առաջացող ձայները:
- Ինչո՞ւ «լսորդները», որոնք իին ժամանակներում հետևում էին թշնամու հողային աշխարհանքներին, հաճախ կույր մարդիկ էին:

Փորձարարական առաջադրանք: Ձեռքի ժամացույցը դնելով դախարքակի (կամ փայտե երկար քանոնի) ծայրին՝ ձեր ականջը հպե՞ք մյուս ծայրին: Ի՞նչ եք լսում: Բացաբրե՛ք այդ երևույթը:

§ 28. Ձայնի ուժգնություն և բարձրություն: Արձագանք

Լսողական զգայությունները, որոնք մեզ մոտ առաջացնում են դարբեր ձայները, մեծ մասամբ կախված են ձայնային ալիքի լայնույթից և նրա հաճախությունից: Լայնույթը և հաճախությունը ձայնային ալիքի ֆիզիկական բնութագրիչներն են: Այս ֆիզիկական բնութագրիչներին համապատասխանում են որոշակի ֆիզիկական բնութագրիչներ, որոնք կապված են ձայնի մեր ընկալման հետ: Այդպիսի ֆիզիկական բնութագրիչներ են ձայնի ուժգնությունը և բարձրությունը:

Ձայնի ուժգնությունը որոշվում է նրա լայնույթով. *ինքան մեծ է ձայնային ալիքում դարպանումների լայնույթը, այնքան մեծ է ձայնի ուժգնությունը:* Այսպես, եթե հնչող կամերդունի դարպանումները մարում են, լայնույթի հետ միասին փոքրանում է նաև ձայնի ուժգնությունը: Եվ հակառակը, կամերդունին ավելի ուժեղ հարվածելով և դրանով մեծացնելով նրա դարպանումների լայնույթը, մենք առաջացնում ենք ավելի ուժգին ձայն:

Ձայնի ուժգնությունը կախված է նաև նրանից, թե ինքանով է մեր ականջը զգայուն այդ ձայնի նկարմամբ: Մարդու ականջն առավել զգայուն է 1–5 կՏց հաճախությամբ ձայնային ալիքների նկարմամբ:

Չափելով այն էներգիան, որը ձայնային ալիքը 1 վայրկյանում տեղափոխում է 1 մ² մակերեսով մակերևույթի միջով, մենք կսրանանք մի մեծություն, որը կոչվում է *ձայնի ինտենսիվություն*: Պարզվում է, որ ամենասուժագին ձայների (երբ ցավի զգացողություն է առաջանում) ինտենսիվությունը գերազանցում է մարդու ընկալմանը հասու ամենաթույլ ձայների ինտենսիվությունը 10 դրիլիոն անգամ: Այս առումով սրացվում է, որ մարդու ականջը շաբ ավելի կապարյալ սարքավորում է, քան սովորական չափից սարքերից յուրաքանչյուրը: Դրանցից ոչ մեկով արժեքների այդպիսի լայն գիրույթ չափել հնարավոր չէ (սարքերում այն հազվադեպ է անցնում 100-ից):

Ուժգնության միավորը կոչվում է *սոն* (լատիներեն «սոնուս» - ձայն): 1 սոն ուժգնություն ունի խլացված խոսակցությունը: Ժամացույցի վկալկողը բնութագրվում է մոտ 0,1 սոն ուժգնությամբ, սովորական խոսակցությունը 2 սոն է, գրամնենայի թիվականությունը՝ 4 սոն, փողոցային ուժգին աղմուկը՝ 8 սոն: Դարբնոցում ձայնի ուժգնությունը հասնում է 64 սոնի, իսկ ռեակտիվ ինքնաթիռի աշխագործ շարժիչից 4 մ հեռավորության վրա 256 սոն է: Ավելի մեծ ուժգնության ձայները սկսում են ցավի զգացողություն առաջացնել:

Մարդկային ձայնի ուժգնությունը կարելի է մեծացնել բարձրախոսի միջոցով: Դա կրնածն ձայնափող է, որ մոդելվում է խոտող մարդու թերանին (նկ. 54): Այս դեպքում ձայնի ուժեղացումը տեղի է ունենում ճառագայթվող ձայնային էներգիայի ձայնափողի առանցքի ուղղությամբ կուփակվելու շնորհիվ: Ուժգնության առավել մեծացման կարելի է հասնել էլեկտրական բարձրախոսի միջոցով, որի ձայնափողը միացված է միկրոֆոնի և հարուկ դրանգիստրային ուժեղացուցիչի հետ:


Ձայնափողը կարելի է կիրառել նաև ընկալվող ձայնը ուժեղացնելու նպարակով: Դրա համար հարկավոր է այն դնել ականջին: Դին ժամանակ-



Նկար 54

ներում (երբ դեռ չկային հագուստ լսողական սարքեր) դրանից հաճախ էին օգտվում վագ լսողություն ունեցող մարդիկ:

Չայնափողն օգտագործվել է նաև ձայնագրման և ձայնի վերարդարման առաջին սարքերում: Չայնի մեխանիկական գրանցման եղանակը հայտնագործել է Թ. Էդիսոնը (ԱՄՆ) 1877 թվականին: Նրա սփեղծած սարքը կոչվում էր ձայնագրիչ (Փոնոգրաֆ): Իր ձայնագրիչներից մեկը (նկ. 55) նա ուղարկել է Լ.Ն. Տոլսուրյին:



Նկար 55

Չայնագրիչի հիմնական մասերն են 1 գլանիկը, որը ծածկված է անագեթիթով, և 2 մեմբրանը, որը միացած է շափյուղյա ասեղին: Չայնային ալիքը ձայնափողի միջով ազդելով մեմբրանի վրա հարկադրում է ասեղին դրագանվել և երրեմն ավելի ուժեղ, երրեմն ավելի թույլ խրվել թիթեղի մեջ: Բռնակը պարփելիս գլանիկը (որի առանցքը պարուրած ակոսներ ունի) ոչ միայն պարփակում է, այլև գրեղաշարժվում է հորիզոնական ուղղությամբ: Թիթեղի վրա փոփոխական խորության պարուրակած ակոսիկի է առաջանում: Գրանցված ձայնը լսելու համար ասեղը գրեղադրում էին ակոսիկի սկզբում և մեկ անգամ էլ պարփեցնում գլանիկը:

Տեսրագայում պարփակող գլանիկը ձայնագրիչում փոփոխինվեց դրագակ սկավառակով, իսկ նրա վրայի ակոսը փաթաթվող պարույրի գրեսք սրացավ: Վյապես առաջ եկան գրանցուային սկավառակները:

Բացի ուժգնությունից, ձայնը բնութագրվում է բարձրությամբ: Չայնի բարձրությունը որոշվում է նրա հաճախությամբ. որքսան մեծ է ձայնային ալիքում դրագանումների հաճախությունը, այնքան բարձր է ձայնը: Փոքր հաճախությամբ դրագանումներին համապարասիանում են ցածր ձայները, մեծ հաճախությամբ դրագանումներին՝ բարձր ձայները:

Վյապես, օրինակ՝ իշամեղուն թոշելիս իր թևիկներն ավելի փոքր հաճախությամբ է շարժում, քան մոծակը. իշամեղվի համար այն կազմում է վայրկյանում 220 թափահարում, իսկ մոծակի համար՝ 500-600: Դրա համար իշամեղվի թոփքն ուղեկցվում է ցածր ձայնով (բզզոցով), իսկ մոծակինը՝ բարձր (բզզոցով):

Որոշակի հաճախությամբ ձայնային ալիքն այլ կերպ կոչում են երաժշտական տրուն: Ուստի ձայնի բարձրության փոխարեն հաճախ ասում են վոնի բարձրություն:

Դիմնական վոնը մի քանի այլ հաճախությունների դաստիարակությունը՝ «խառնուրդով» առաջացնում է երաժշտական ձայն: Օրինակ՝ ջութակի և դաշնամուրի ձայնները կարող են 15-20 դարբեր դաստիարակություններ պարունակել: Յուրաքանչյուր բարդ ձայնի կազմից է կախված նրա տեսքը:

Լարի ազադ դաստիարակությունը կախված է նրա չափերից և ձգվածությունից: Դրա համար էլ ցցիկների օգնությամբ կիթառի լարը ձգելով և սեղմելով դրանք կիթառին՝ դարբեր մասերում, մենք փոխում ենք լարի սեփական հաճախությունը, իեփևաբար նաև դրա արձակած ձայնի բարձրությունը:

Աղյուսակ 5-ում բերված են երաժշտական դաստիարակությունները:

Աղյուսակ 5

Չութակ	260 – 15000 ₣գ
Դաշնամուր	90 – 9000 ₣գ
Թմբուկ	90 – 14000 ₣գ
Երգեհոն	22 – 16000 ₣գ
Սաքսոֆոն (բաս)	80 – 8000 ₣գ

Երգիչների և երգչուհիների ձայններին համապատասխանող հաճախությունների փիրույթները կարելի են գտնել աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Կանանց ձայններ	Տղամարդկանց ձայններ		
Կոնֆրալքոն	170 – 780 ₣գ	Բաս	80 – 350 ₣գ
Մեցցո սոպրանո	200 – 900 ₣գ	Բարիբոն	100 – 400 ₣գ
Սոպրանո	250 – 1000 ₣գ	Տենոր	130 – 500 ₣գ
Կոլորադուրային սոպրանո	260 – 1400 ₣գ		

Սովորական խոսքի ժամանակ դդամարդու ձայնում հանդիպում են 100-ից 7000 ₣գ, իսկ կնոջ ձայնում 200-ից 9000 ₣գ հաճախության դաստիարակություններ: Առավել բարձր հաճախություն ունեցող դաստիարակությունները միանում են «ս» բաղաձայնի կազմության մեջ:

Զայնի ընկալման բնույթը շափ բանով կախված է այն գրարածքի նախագծից, որդեռ ունկնդրվում է խոսքը կամ երաժշգույքունը: Սա բացարձրվում է նրանով, որ փակ գրարածքներում բացի անմիջական ձայնից ունկնդիրն ընկալում է նաև այդ ձայնի արագ իրար հաջորդող կրկնությունների միավորյալ շարքը, որն առաջանում է գրարածքում զգնվող առարկաներից, պատերից, առասպատից և հապալից ձայնի բազմակի անդրադառներից:

Զայնի գրեսության մեծացումը, որն առաջ է գալիս գրարքեր արգելքներից ձայնի անդրադառների շնորհիվ, կոչվում է ռեվերբերացիա: Ռեվերբերացիան մեծ է լինում դաստիարակ գրարածքներում, որդեռ այն թնդացող արձագանք է առաջացնում: Եվ հակառակը, փափուկ պաստառապատճեն գրարքերում, վարագույններում, փափուկ կահույքով, գորգերով, ինչպես նաև մարդկանցով լցված գրարածքները լավ են կլանում ձայնը, ուստի ռեվերբերացիան դրանցում աննշան է:

Զայնի անդրադառնումը է բացարձրվում նաև արձագանքը: **Արձագանքը** ձայնային ալիքներ են, որոնք անդրադարձել են որևէ արգելքից (շենքից, բլուրից, անդամանությունից) և վերադարձել դեպի իրենց սկզբնաղբյուրը: Եթե մեզ են հասնում այնպիսի ձայնային ալիքներ, որոնք հաջորդաբար անդրադարձել են գրարքեր արգելքներից և բաժանված են իրարից $t > 50-60$ մվ ժամանակային ինֆերվալով, ապա առաջանում է բազմակի արձագանք: Այսպիսի արձագանքներից մի քանիսը համաշխարհային ճանաչում են սպառագել: Այսպես, օրինակ՝ Չեխիայում Աղերսրախի մոտ շրջանաձև դասավորված ժայռերը որոշակի վայրում երեք անգամ կրկնում են 7 վանկ, իսկ Անգլիայում՝ Վուդմարք ամրոցում, արձագանքը պարզորոշ կրկնում է 17 վանկ:

Անգլերն echo, ոուսերեն ռեպ (= արձագանք) բառերի ծագումը կապված է հավերժահարս Էքոյի հետք, որը, իին հունական առասպելի համաձայն, անպատճախան սիրով սիրում էր Նարզիզին: Տառապելով Նարզիզի հանդեպ գրածած սիրուց՝ Էքոն չորացավ և բարացավ, իսկ նրանից մնաց միայն ձայնը, որն ընդունակ է կրկնել իր ներկայությամբ արդասանված բառերի վերջավորությունները:

Տարցեր

1. Ինչո՞վ է որոշվում ձայնի ուժգնությունը:


2. Ինչպե՞ս է կոչվում ձայնի ուժգնության միավորը:
3. Կամերդունին մուրճով հարվածելուց հետո ինչո՞ւ է նրա ձայնն ասդի-ճանաբար թուլանում:
4. Ինչո՞վ է որոշվում ձայնի բարձրությունը:
5. Ինչի՞ց է «կազմված» երաժշտական ձայնը:
6. Ի՞նչ է արձագանքը:
7. Բացադրե՛ք Էղիստնի ձայնագրիչի գործողության սկզբունքը:

§ 29. Ենթաձայն և անդրաձայն

Ձայնային ալիքները բնութագրվում են 16 Հց-ից մինչև 20 կՀց հաճախությամբ: $v < 16$ Հց հաճախության առաձգական ալիքները կոչվում են **ենթաձայներ** (ինֆրաձայներ), իսկ $v > 20$ կՀց հաճախություն ունեցողներ՝ **անդրաձայներ** (ուլտրաձայներ) (նկ. 56):

Ենթաձայն: Ենթաձայնային ալիքները մարդկային ականջը չի ընկալում: Չնայած այդ բանին՝ դրանք ընդունակ են մարդու վրա որոշակի ֆիզիոլոգիական ազդեցություն ունենալ: Այդ ազդեցությունը բացադրվում է ռեզոնանսով: Մեր մարմնի ներքին օրգանների սեփական հաճախությունները բավականին ցածր են. որովայնախոռոչինը և կրծքավանդակինը՝ 5-8 Հց, զիսիինը՝ 20-30 Հց: Ուեզոնանսային հաճախության միջին արժեքն ամբողջ մարմնի համար կազմում է 6 Հց: Նոյն կարգի հաճախություններ ունենալով՝ ենթաձայնային ալիքները սդիպում են մեր օրգաններին թրթուալ և շափ մեծ ինքնևնսիվության դեպքում կարող են ներքին արյունագեղումներ առաջացնել:

Նախորդ փորձերը ցույց են տվել, որ մարդկանց ճառագայթումը բավականաչափ ինքնևնսիվ ենթաձայնով կարող է հանգեցնել հավասարակշռության զգացողության կորսարի, սրբիալոնցի, ակնախնձորի ակամա պլույֆների և այլն: Օրինակ՝ 4-8 Հց հաճախության դեպքում մարդը ներքին օրգանների



Նկար 56

փեղաշարժի զգացողություն է ունենում, իսկ 12 Տց-ի դեպքում ծովային հիվանդության նոպա է սկսվում:

Պարբերություն են, որ մի անգամ ամերիկացի Փիզիկոս Ռ.Վուդը (որն իր գործընկերների շրջանում յուրօրինակ և զվարճասեր մարդու համբավ էր ձեռք բերել) թափրոն բերեց հապուկ մի սարք, որը ենթաձայնային ալիքներ էր ճառագայթում, և միացնելով այն՝ ուղղեց դեպի բեմը: Ոչ ոք ոչ մի ձայն չլսեց, սակայն դերասանուին ընկավ հիստերիայի մեջ:

Մարդու օրգանիզմի վրա ցածր հաճախություն ունեցող ձայների ռեզոնանսային ազդեցությամբ է բացարրվում նաև ժամանակակից ոոք երաժշգության գրգիռիչ ներգործությունը, որը հազեցած է թմրուկների, բաս-կիբառների և այլնի բազմապատճեն ուժեղացված ցածր հաճախություններով:

Մարդու ականջը չի ընկալում ենթաձայնը, սակայն այն կարողանում են լսել որոշ կենդանիներ: Օրինակ՝ մեղուզաները վսփահորեն ընկալում են 8-13 Տց հաճախությամբ ենթաձայնային ալիքները, որոնք առաջանում են փոթորկի ժամանակ ծովի ալիքների կափարների հետ օդի հոսանքների փոխազդեցության արդյունքում: Դասնելով մեղուզաներին՝ այդ ալիքները նախապես (15 ժամ առաջ) «նախազգուշացնում են» նրանց փոթորկի մուրենալու մասին:

Ենթաձայնի աղբյուր կարող են լինել ամպրոպի պարապումը, թնդանոթի կրակոցը, հրաբխի ժայթքումը, ափոմային ոումքի պայթյունը, երկրաշարժը, ռեակտիվ ինքնաթիռի աշխափող շարժիչը, ծովի ալիքների կափարները շրջանցող քամին և այլն:

Ենթաձայնին բնորոշ է փարբեր միջավայրերում նրա փոքր կլանումը, ինչի արդյունքում այն կարողանում է փարածվել շատ մեծ հեռավորությունների վրա: Սա հնարավորություն է փալիս որոշել հզոր պայթյունի վայրը, կրակող թնդանոթի դեղը, հսկողություն սահմանել սփորերկրյա միջուկային պայթյունների նկարմամբ, կանխափեսել ցունամին և այլն:

Անդրածայն: Անդրածայնը ևս մարդու ականջը չի ընկալում: Սակայն այն կարող են արձակել և ընկալել որոշ կենդանիներ: Այսպես, օրինակ՝ դելֆինները դրա շնորհիվ վսփահ կողմնորոշվում են պղփոր ջրում: Ուղարկելով և ընդունելով հետո դարձած անդրածայնային ազդակները, նրանք ընդունակ են 20-30 մ հեռավորության վրա հայրնաբերել անգամ փոքրագույն


կոպորակը, որը զգուշորեն իջեցվել է ջրի մեջ: Անդրածայնն օգնում է նաև չղջիկներին, որոնք վագր գետողություն ունեն կամ էլ ընդհանրապես ոչինչ չեն դեմում: Իրենց լսողական ապարատի միջոցով անդրածայնային ալիքներ (վայրկյանում մինչև 250 անգամ) արձակելով՝ նրանք կարողանում են կողմնորոշվել թռչելիս և հաջողությամբ որս են անում անգամ լիակատար խավարի մեջ: Ներաքրքրական է, որ որոշ միջադաշտերի մոտ սրան ի պարասիան հագուկ պաշտպանական ռեակցիա է մշակվել: զիշերային թիթեռների և բգեգների որոշ գետակներ կարողանում են ընկալել չղջիկների արձակած անդրածայները և լսելով դրանք՝ անմիջապես ծալում են թևերը, ընկնում ներքև և անշարժանում գետնին:

Անդրածայնային ազդանշանները օգտագործում են նաև որոշ ագրամնավոր կերպեր: Այս ազդանշանները նրանց հնարավորություն են դրային կաղամարներ որսալ լույսի լիակատար բացակայության պայմաններում:

Դասպարփած է նաև, որ 25 կԴց-ից մեծ հաճախության անդրածայնային ալիքները ցավի զգացողություն են առաջացնում թռչունների մոտ: Սա օգտագործվում է ճայերին խմելու ջրի ամբարներից հեռու վանելու նպագրկով:

Անդրածայնը լայն կիրառում է սրանում գիտության մեջ և դեխնիկայում, որպես այն սրանում են գարբեր մեխանիկական (օրինակ՝ շքակը) և էլեկտրամեխանիկական սարքավորումների միջոցով:

Անդրածայնի աղբյուրներ են դեղադրվում նավերի և սուզանավերի վրա: Անդրածայնային ալիքների կարճ ազդակներ ուղարկելով՝ կարելի է որսալ դրանց անդրադարձումը ջրի հափակից կամ այլ առարկաներից: Անդրադառող ալիքի ուշանալու ժամանակից եկնելով՝ կարելի է դափել մինչև արգելքն ընկած հետափորության մասին: Այս դեպքերում օգտագործվող էխոլոգները (ճայնախորաչափերը) և հիդրոլոկադրոնները (ճայնավեղորոշիչները) հնարավորություն են դրային չափել ծովի խորությունը (նկ. 57), լուծել նավազնացության գործընթացը խնդիրներ (ժայռերի, խութերի մուրով



Նկար 57

լողալը և այլն), ձկնորսական հետախուզություն իրականացնել (հայդրաբերել ձկների վրառներ), ինչպես նաև ռազմական խնդիրներ լուծել (թշնամու սուզանավերի որոնում, առանց շրջադիրակի գործադրանքի թերությունները և այլն):

Արդյունաբերության մեջ մեփաղական ձուլվածքներում եղած ճեղքերից անդրածայնի անդրադարձման միջոցով գրնում են արդադրանքի թերությունները:

Անդրածայները մանրացնում են հեղուկ և պինդ նյութերը՝ սպեղծելով փարբեր էմուլսիաներ և սուսպենզիաներ:

Անդրածայնի միջոցով հաջողվում է գողել այլումինե ապրանքները, ինչը մյուս եղանակներով չի սպացվում, քանի որ այլումինի մակերևույթին միշտ օքսիդային թաղանթի հասփ շերք կա: Անդրածայնային զողիչի ծայրը ոչ միայն դրաքանում է, այլև մոտ 20 կԴ հաճախության դրաքանումներ է կապրարում, ինչի շնորհիվ այլումինի վրայի օքսիդային թաղանթը քայլայվում է:

Անդրածայնի վերածումը էլեկտրական դրաքանումների և ապա լույսի թույլ է դրակի ծայնագրեսություն իրականացնել: Զայնագրեսության շնորհիվ հնարավոր է առարկաները դրեսնել անլուսաթափանց ջրում:

Բժշկության մեջ անդրածայնի միջոցով կոդրված ոսկորներ են կացնում, հայդրաբերում են ուռուցքներ, մանկաբարձության բնագավառում ախտորոշիչ հետքազոփություններ են իրականացնում և այլն: Անդրածայնի կենսաբանական ազդեցությունը (որը սպանում է մանրէներին) թույլ է դրակի այն օքփազործել կաթի, դեղանյութերի, ինչպես նաև բժշկական զործիքների մանրէազերծման նպագրակով:

Նարցեր

1. Ի՞նչ է ենթածայնը:

2. Բերե՛ք ենթածայնային ալիքների աղբյուրների օրինակներ:

3. Ինչո՞վ է բացաբրվում ենթածայնի ֆիզիոլոգիական ազդեցությունը մարդու վրա:

4. Ի՞նչ է անդրածայնը:

5. Բերե՛ք կենդանական աշխարհի ներկայացուցիչների կողմից անդրածայնային ալիքների օքփազործման օրինակներ:

6. Որպե՞ս և ի՞նչ նպագրակներով են օքփազործվում ենթա- և անդրածայները:

ԶԵՐՄԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

IV

ԳԼՈՒԽ

ՆԵՐՁԻՆ ԷՆԵՐԳԻԱ

§ 30. Չերմասդիճան

Մեխանիկայի ուսումնասիրության ժամանակ մեզ հետաքրքրում էր մարմինների շարժումը: Այժմ մենք կը նարկենք երևոյթներ, որոնք կապված են դադարի վիճակում գրնվող մարմինների հարկությունների հետ: Մենք ուսումնասիրելու ենք օդի տաքանալու և սառչելու, սառուցի, մերսադների հալվելու, ջրի եռալու և նման այլ երևոյթներ: Այս երևոյթները կոչվում են ջերմային երևոյթներ:


Մենք գիտենք, որ տաքացնելիս սառը ջուրը նախ գոլանում է, ապա տաքանում: Կրակից դուրս բերված մերսադն ասդիճանարար է սառչում: Շոգեցնուցման մարդկոցը շրջապատող օդը տաքանում է և այլն:

«Սառ», «գոլ», «տաք» բառերով մենք նշում ենք մարմինների ջերմային վիճակը: Մարմնի ջերմային վիճակը բնորոշող մեծությունը ջերմասդիճանն է:

Բոլորին է հայտնի, որ տաք ջրի ջերմասդիճանը բարձր է սառը ջրինից, որ ձմռանը օդի ջերմասդիճանը դրսում ավելի ցածր է, քան ամռանը:

Սարբերդ, որոնք ծառայում են ջերմասդիճանը չափելու համար, կոչվում են ջերմաչափեր: Դրանցից մեկը պարկերված է նկ. 58-ում: Այդպիսի ջերմաչափի աշխատանքը հիմնված է նյութերի ջերմային ընդարձակման վրա: Տաքանալիս ջերմաչափում օգտագործվող նյութի (օրինակ, սնդիկի կամ սպիրտի) այունը բարձրանում է, սառչելիս՝ իջնում: Կենցաղում գործածվող ջերմաչափերը նյութի ջերմասդիճանն արդահայքում են Ցելսիուսի ասդիճաններով ($^{\circ}\text{C}$):

Ա. Ցելսիուսը (1701–1744) շվեյ գիտնական է, որը ջերմութ-



Նկար 58
97

յունը չափելու համար հարյուր ասդիճան ունեցող սանդղակ է առաջարկել: Ցելսիոսի ջերմասպիճանային սանդղակում 0-ին համապարախանում է հալվող սառույցի ջերմասպիճանը, իսկ 100 ասդիճանին՝ նորմալ մթնոլորդային ճնշման դեպքում ջրի եռման ջերմասպիճանը:

Բնության մեջ և գեհնիկայում հանդիպող ջերմասպիճանների օրինակները բերված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Մարդու կրիպիկական ջերմասպիճանը, որի դեպքում նա կորցնում է զիգակցությունը Երկրագնդի վրա (Հյուսիսային Աֆրիկա) ամենաբարձր ջերմասպիճանը	+ 42 °C
Երկրագնդի վրա (Անգարկվիդա) ամենացածր ջերմասպիճանը	+ 58 °C
Միջին ջերմասպիճանը Մարսի վրա Միջին ջերմասպիճանը Վեներայի վրա	- 88 °C
Միջին ջերմասպիճանը Վեներայի վրա Թղթի բոցավառման ջերմասպիճանը	- 60 °C
Սպիրուտրոցի բոցի ջերմասպիճանը Արեգակի մակերևույթի ջերմասպիճանը	+ 470 °C
Արեգակի մակերևույթի ջերմասպիճանը Շեղուկ ազուրի ջերմասպիճանը	+ 233 °C
Արեգակի մակերևույթի ջերմասպիճանը Սալուտարի ջերմասպիճանը	+ 1100 °C
Արեգակի մակերևույթի ջերմասպիճանը Նեղուկ ազուրի ջերմասպիճանը	+ 6000 °C
Արեգակի մակերևույթի ջերմասպիճանը Շեղուկ ազուրի ջերմասպիճանը	- 200 °C

Տարկավոր է հիշել, որ ամեն մի ջերմաչափ միշտ իր սեփական ջերմասպիճանն է ցույց դալիս: *Միջավայրի ջերմասպիճանը որոշելու համար սկսությունը է ջերմաչափը տեղադրել այդ միջավայրում և սպասել այնքան, մինչև սարքի ջերմասպիճանը դադարի փոփոխվել և ձեռք բերի այն արժեքը, որը հավասար է շրջապատող միջավայրի ջերմասպիճանին:* Միջավայրի ջերմասպիճանի փոփոխության դեպքում կփոխվի նաև ջերմաչափի ջերմասպիճանը:

Մի փոքր այլ կերպ է աշխատում բժշկական ջերմաչափը, որը նախադեսված է մարդու մարմնի ջերմությունը չափելու համար: Այն ամրագրում է ամենաբարձր ջերմասպիճանը, մինչև որն ինքը դաքանակ է: Ձեր ջերմությունը չափելով՝ կարող եք նկարել, որ ավելի սառը (մարդու մարմնի ջերմության համեմատ) միջավայրում հայդրով՝ բժշկական ջերմաչափը շարունակում է ցույց դալ իր նախկին արժեքը: Սնդիկի սյունը նախկին դիրքին

վերադարձնելու համար հարկավոր է ջերմաչափը թափ դալ: Լաբորատոր ջերմաչափի դեպքում, որն օգտագործվում է միջավայրի ջերմաստիճանը չափելու համար, նման բան անել պետք չէ:

Առաջին հեղուկային ջերմաչափը հայտնագործել է ֆրանսիացի Փիզիկոս Ժ. Ռեյլ 1631 թվականին: Սակայն սովորելով չափել ջերմաստիճանը՝ մարդիկ չեն հասկանում, թե ինչն են հարկապես չափում: Նարզը, թե ինչ է ջերմաստիճանը, շաբ բարդ դուրս եկավ: Ինչո՞վ է, ասենք, դաքարք ջուրը դարբերվում սառը ջրից: Երկար ժամանակ այս հարցին հսկակ պարագային չէր դրվում:

Վյուր մենք գիտենք, որ ցանկացած ջերմաստիճանում ջուրը կազմված է նույն մոլեկուլներից: Վյդ դեպքում ի՞նչն է փոխվում ջրում նրա ջերմաստիճանը բարձրացնելիս:

Դիմենք հեփսյալ փորձին: Վերցնենք երկու կփոր շաքար, դրանցից մեկը զցենք սառը, մյուսը եռման ջրի մեջ: Կրեսնենք, որ դաք ջրում շաքարը զգալիորեն ավելի արագ է դարրապուծվում: Տարրապուծումը վեղի է ունենում դիֆուզիայի շնորհիվ: Վյապիսով՝ դիֆուզիան բարձր ջերմաստիճանի պայմաններում ավելի արագ է տեղի ունենում, քան ցածր ջերմաստիճանի դեպքում:

Սակայն դիֆուզիայի պարբառը մոլեկուլների շարժումն է: Նշանակում է՝ մոլեկուլների շարժման արագության և մարմնի ջերմաստիճանի միջև կապ կա. բարձր ջերմաստիճան ունեցող մարմնում մոլեկուլներն ավելի արագ են շարժվում:

Օրինակ՝ 0 °C-ում թթվածնի մոլեկուլների միջին արագությունը 440 մ/վ է: Ընդունք, որ ջերմաստիճանը որոշվում է ինչն մոլեկուլների միջին արագությամբ: Մարմնի առանձին մոլեկուլների շարժման արագությունները դարձերվում են իրարից և դրված ջերմաստիճանում կարող են միջինից և բարձր, և ցածր լինել:

Սակայն ջերմաստիճանը միայն մոլեկուլների միջին արագությունից չի կախված: Վյապես, օրինակ՝ թթվածնը, որի մոլեկուլների շարժման միջին արագությունը 440 մ/վ է, ունի 20 °C ջերմաստիճան, իսկ ազովը մոլեկուլների շարժման նույն միջին արագության դեպքում ունի 16 °C ջերմաստիճան: Ազովի ավելի ցածր ջերմաստիճանը պայմանավորված է նրանով, որ ազ-

փի մոլեկուլներն ավելի թերև են թթվածնի մոլեկուլներից: Այսպիսով՝ նյութի ջերմաստիճանը որոշվում է ոչ միայն նրա մոլեկուլների շարժման միջին արագությամբ, այլև նրանց զանգվածով:

Մենք գիտենք մեծություններ, որոնք կախված են ինչպես մասնիկի արագությունից, այնպես էլ զանգվածից: Դրանք են իմպուլսը և կինետիկ էներգիան: Գիտնականները հասպարել են, որ հավելապես մոլեկուլների կինետիկ էներգիան է որոշում մարմնի ջերմաստիճանը:

Զերծաստիճանը մարմնի մասնիկների միջին կինետիկ էներգիայի չափն է. որքան մեծ է այդ էներգիան, այնքան բարձր է մարմնի շերտանականը:

Այսպիսով՝ մարմնի դարացման դեպքում մոլեկուլների միջին կինետիկ էներգիան մեծանում է, և նրանք սկսում են ավելի արագ շարժվել, սառցման դեպքում մոլեկուլների էներգիան նվազում է, և նրանք սկսում են ավելի դանդաղ շարժվել:

Մարմինը կազմող մասնիկների անկանոն շարժումը կոչվում է **ջերմային շարժում**: Ջերմային շարժումը դարձերվում է սովորական մեխանիկական շարժումից նրանով, որ նրա ինքնանհվությունը կախված է մարմնի ջերմաստիճանից, և այդ շարժմանը միշտ մասնակցում են հսկայական քանակությամբ մասնիկներ, որոնք շարժվում են շատ բարդ և խճճված հետագծերով:

«Տարցեր»

1. Ի՞նչ ջերմային երևույթներ գիտեք:
2. Ինչպես է ընթանում դիֆուզիան դարձերվում ջերմաստիճանների դեպքում:
3. Նյութի ջերմաստիճանն ի՞նչ կախվածություն ունի մոլեկուլների միջին արագությունից և նրանց զանգվածից:
4. Մարմնի ջերմաստիճանն ինչի՞ չափն է:
5. Ինչո՞վ է դարձերվում դարձերվում ջերմաստիճանների դեպքում:
6. Ինչպիսի՞ դարձերվում դարձերվում է ավելի արագ աղիանում վարունգները: Ինչո՞ւ:
7. Ի՞նչ է ջերմային շարժումը: Ինչո՞ւ է այն այդպես կոչվում: Ինչո՞վ է այն դարձերվում մարմինների մեխանիկական շարժումից:


8. Ինչի՞ վրա է հիմնված ջերմաչափի աշխատանքը:
9. Ո՞վ և ե՞րբ է հայրնազործել առաջին հեղուկային ջերմաչափը:

§ 31. Ներքին էներգիա

Մենք գիտենք, որ զոյություն ունի մեխանիկական էներգիայի երկու տեսակ՝ կինետիկ և պոտենցիալ: Մարմինները կինետիկ էներգիայով են օժդվում իրենց շարժման շնորհիվ, իսկ պոտենցիալով՝ այլ մարմինների հետ փոխազդեցության պատճառով:

Ուսումնասիրելով մեխանիկական երևույթները՝ մենք իմացանք, որ կինետիկ և պոտենցիալ էներգիաները կարող են փոխակերպվել մեկը մյուսի: Վյոպիսի փոխակերպման օրինակներ կարելի է գրնել § 17-ում և 20-ում:

Չննարկենք ևս մեկ օրինակ: Ենթադրենք, թե կապարեն սալի վրա կապարեն գունդ է դրված: Գունդը բարձրացնում ենք վեր և բաց թողնում (նկ. 59, ա): Գունդը վեր բարձրացնելով՝ նրան պոտենցիալ էներգիա հաղորդեցինք: Գնդի անկման ժամանակ այդ էներգիան սկսում է նվազել, քանի որ գունդը գնալով ավելի ներքին է իշխում: Սակայն արագության մեծացմանը գուգընթաց աստիճանաբար մեծանում է գնդի կինետիկ էներգիան: Տեղի է ունենում մարմնի պոտենցիալ էներգիայի փոխակերպում կինետիկ էներգիայի: Եվ ահա գունդը բախվեց կապարեն սալին և կանգ առավ (նկ. 9 թ): Նրա և՛ կինետիկ, և՛ պոտենցիալ էներգիաները սալի նկարմամբ այդ պահին հավասարվեցին զրոյի:



Նկար 59

Արդյո՞ք դա նշանակում է, որ Էներգիան, որով մինչ այդ պահը օժբված էր գունդը, անհետ կորել է: Ո՛չ, չի նշանակում: Տարվածից հետո զննելով գունդը և սալը՝ փեսնում ենք, որ գունդը մի քիչ փափակել է, իսկ սալը մի փոքր փոս է ընկել: Չափելով դրանց ջերմաստիճանը՝ փեսնում ենք նաև, որ դրանք փաքացել են:

Բայց մենք արդեն գիտենք, որ փաքանալիս մեծանում է մարմնի մոլեկուլ-ների միջին կիսնեփիկ էներգիան: Մոլեկուլներն օժբված են նաև պոփենցիալ էներգիայով, քանի որ նրանք փոխազդում են միմյանց հետ. ձգում են իրար, իսկ միմյանց շափ մոփենալիս՝ վանում: Դեֆորմացիայի ժամանակ փոփովում է մարմնի մասնիկների փոխադարձ դասավորությունը, ուստի փոխվում է նաև նրանց պոփենցիալ էներգիան:

Այսպիսով՝ կարող ենք պնդել, որ գունդը սալին բախվելու արդյունքում փեղի է ունենում այդ մարմինների մասնիկների կիսնեփիկ և պոփենցիալ էներգիաների փոփոխություն: Սա նշանակում է, որ մեխանիկական էներգիան, որ փորձի սկզբում ուներ գունդը, անհետ չի կորել. այն փոխակերպվել է մոլեկուլների էներգիայի:

Մարմինը կազմող մասնիկների շարժման և փոխազդեցության էներգիան կոչվում է մարմնի **ներքին էներգիա**: Ներքին էներգիան նշանակում են *U* փառու:

Մոլեկուլների ջերմային շարժումը երբեք չի դադարում: Ուստի յուրաքանչյուր մարմին ցանկացած պահի օժբված է որևէ ներքին էներգիայով:

Զերմային երևոյթների ուսումնասիրությունը ցույց է դալիս, որ ինչքանով նվազում է մարմինների մեխանիկական էներգիան, այդքանով մեծանում է նրանց ներքին էներգիան: *Մարմնի ամրողական էներգիան*, որ հավասար է նրա մեխանիկական և ներքին էներգիաների գումարին, ցանկացած պրոցեսի ընթացքում մնում է անփոփոխ: Սա **Էներգիայի պահպանման օրենքն** է՝ փարածված ջերմային երևոյթների վրա:

Էներգիան ոչչից չի առաջանում և չի կորչում անհետ: Այն կարող է պարզապես մի փեսակից փոխակերպվել մեկ ուրիշի՝ պահպանելով իր ամրողական (ընդհանուր) արժեքը: Այսպես, օրինակ՝ հրթիռի թռիչքի պահին այրվող վառելիքի ներքին էներգիան փոխակերպվում է հրթիռի պալյանի մեխանիկական էներգիայի, քամու առաջացման դեպքում փաքացած օդի

ներքին Էներգիան փոխակերպվում է շարժվող օդային զանգվածների կինետիկ Էներգիայի և այլն:

Առաջիններից մեկը, ով ուշադրություն դարձրեց Էներգիայի դրաբեր գույնակների միմյանց փոխակերպումներին, գերմանացի գիտնական Օռֆերդ Մայերն էր (1814 – 1878): 1838 թվականին նա բժշկության դոկտորի ասլինահի թեկ պաշտպանեց և երկու դրաբի անց որպես նավի բժիշկ ուղևորվեց ճավա կղզի: Նավարկության ընթացքում նա մրգածում էր այն մասին, թե ինչու ուժեղ փոթորկից հետո ծովի ջուրը միշտ ավելի դրաբ է լինում, քան նախքան փոթորիկը: Իսկ հասնելով կղզի՝ Մայերն ուշադրություն դարձրեց իր բուժած նավագինների արյան անսովոր վառ գույնի վրա: Դյուսիային լայնություններում մարդկանց արյունն ուրիշ, ավելի մուգ երանգ ուներ: Նարց էր առաջանում ինչո՞ւ: Մայերն այնպես էր հափշրակել այս խնդրով, որ դրանից բացի ուրիշ ոչ մի բանի մասին չէր մրգածում: Ներազայում ընկերոջն ուղղված նամակում նա գրել էր. «Ես այնպիսի սիրով ձեռնամուխ եղա այդ աշխագրանքին, որ շաբ քիչ էի հետաքրքրվում աշխարհի այդ հեռավոր մասով (ինչը կարող է ունաց ծիծաղը հարուցել), ավելի հաճույքով մնում էի նավում, որպես կարող էի անարգել դրվել իմ աշխագրանքին, և որպես որոշ ժամերի ես ինձ խիստ ոգեշնչված էի զգում: Նման բան, որբան հիշում եմ, չեմ զգացել ոչ դրանից առաջ և ոչ էլ հետո»:

Միունկով մարդու օրգանիզմում կարարվող պրոցեսների (կախած ջերմաստիճանային պայմաններից, որպես գործում է մարդը) և Էներգիայի մասին, որն առաջանում է նրա մեջ սննդի «այրումից»՝ Մայերն ի վերջո հայդնագործեց ֆիզիկայի ամենահիմնարար օրենքներից մեկը՝ Էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքը:

«Արցեր

1. Էներգիայի ի՞նչ փոխակերպումներ են դրենի ունենում զնդի բարձրացման և անկման ժամանակ:
2. Ի՞նչ փոփոխություններ են կրում կապարե գունդն ու սալը բախման արդյունքում:
3. Գնդի մեխանիկական Էներգիան ի՞նչ էներգիայի է փոխակերպվում սալին բախվելուց հետո:

4. Ո՞ր էներգիան են անվանում մարմնի ներքին էներգիա:
5. Ո՞րն է էներգիայի պահպանման օրենքը ջերմային երևոյթների դեպքում:
6. Կարո՞ղ է արդյոք մարմինն օժդիված լինել մեխանիկական էներգիայով, բայց չունենալ ներքին էներգիա:
7. Կարո՞ղ է մարմինն օժդիված լինել ներքին էներգիայով, բայց չունենալ մեխանիկական էներգիա:
8. Էներգիայի ի՞նչ փոփոխերպումով է պայմանավորված փոթորկից հետո ծովի ջրի դրամականալը:


§ 32. Ներքին էներգիայի փոփոխման եղանակները


Մարմնի ներքին էներգիան կախված է նրա մոլեկուլների միջին կինետիկ էներգիայից, իսկ այս էներգիան էլ իր հերթին կախված է ջերմաստիճանից: Դրա համար էլ փոփոխելով մարմնի ջերմաստիճանը՝ մենք փոփոխում ենք նրա ներքին էներգիան: *Տարացնելիս մարմնի ներքին էներգիան մեծանում է, սառեցնելիս՝ նվազում:*

Կարարենք հետևյալ փորձը: Ենարանի վրա ամրացնենք բարակ պարունակությունով արովյել խողովակ: Դրա մեջ մի քիչ եթեր լցնենք և ամուր փակենք: Այժմ խողովակը ոլորենք պարանով և սկսենք դրանով շփել այն՝ արագ մեկ այս, մեկ այն կողմ ձգելով պարանը: Որոշ ժամանակ անց եթերով խողովակի ներքին էներգիան այնքան կմնանա, որ եթերը կսկսի նուլ, և առաջացած գոլորշին դուրս կմղի խցանը (նկ. 60):

Այս փորձը ցույց է տալիս, որ մարմնի ներքին էներգիան կարելի է փոփոխել այդ մարմնի վրա աշխարհանք կարարելու, մասնավորապես շիման միջոցով:

Շիման միջոցով փոփոխելով փայտի կոտրի ներքին էներգիան՝ մեր նախնիները կրակ են սպացել: Փայտի բռնկման ջերմաստիճանը 250°C է: Ուստի կրակ սպանալու համար անհրաժեշտ է փայտի մի






Նկար 61

կփորք մյուսի հետ շփել այնքան ժամանակ, մինչև դրանց ջերմասպիճանները հասնեն այդ արժեքին: Դե՛շք է, արդյոք, դա անելը: Եթե այդ եղանակով փորձեցին կրակ սպանալ Ժյուլ Վեռնի «Խորհրդավոր կղզի» վեպի հերոսները, նրանց մոտ բան չսփացվեց: Նրանց անհաջողության պատճառն այն էր, որ կրակ պետք է սպանային ոչ թե պարզապես փայտի մի կփորք մյուսին շփելու միջոցով, այլ սրբած փայտիկով գախտակը շաղափելով (նկ. 61): Վյո դեպքում որոշ հմբություն ունենալով կարելի է 1 վայրկյանում փայտիկի բնում ջերմասպիճանը մնացնել 20°C -ով: Իսկ փայտիկը այրվելու ասդիճանի հասցնելու համար կպահանջվի ընդամենը $250/20=12,5$ վայրկյան:

Շափ մարդիկ մեր ժամանակներում ել կրակ են սպանում շփման եղանակով՝ լուցկին գույփի եզրին քսելով: Իսկ ե՛րք է սպեղծվել լուցկին: Առաջին լուցկիների (Փոսֆորային) արդարությունը սկսվել է XIX դ. 30-ական թվականներին: Ֆոսֆորը բռնկվում է բավականին թույլ գրաբացումից, եթե նրա ջերմասպիճանը հասնում է ընդամենը 60°C : Դրա համար էլ Փոսֆորն լուցկին վառելու համար բավական էր այն քսել ցանկացած մակերևույթի (սկսած մորթակա պափից մինչև կոշիկի ճիփքը): Սակայն այս լուցկիները շափ վրանգավոր էին. դրանք թունավոր էին և դյուրավառ լինելով՝ հրդեհի պարճառ էին դառնում: Անվրանգ լուցկիները (որոնք մնանք գործածում ենք մինչ օրս) հայդրագործվել են 1855 թվականին Շվեդիայում (այսպեղից էլ



Նկար 62

դրանց անվանումը՝ «շվեիդական լուցկիներ»): Այս լուցկիներում ֆուֆորը փոխարինված է այլ դյուրավառ նյութերով:

Այսպիսով՝ շիման միջոցով կարելի է բարձրացնել նյութի ջերմաստիճանը: *Մարմնի նկատմամբ աշխատանք կարարելով* (ասենք՝ մուրճով հարվածելով կապարի կողորին, մերժալարը ճկելով և ուղեկողով, մի առարկան մյուսի մակերևույթով գրեթե աշխատելով կամ միցային գլանում զբնվող զազը սեղմելով)` մենք մեծացնում ենք նրա ներքին էներգիան: Եթե մարմնն ինքն է աշխատանք կարարում (իր ներքին էներգիայի հաշվին), ապա մարմնի ներքին էներգիան նվազում է, և այն սառչում է:

Դիմարկենք դա փորձով: Վերցնենք հասք պարեր ունեցող անոթ և ամուր փակենք այն անցք ունեցող ռեզինե խցանով: Այդ անցքի միջով օդամուիչ պոմպով սկսենք օդ լցնել անոթի մեջ: Որոշ ժամանակ անց խցանն աղմուկով դուրս կթռչի անոթից, իսկ անոթում մառախուղ կառաջանա (նկ. 62): Մառախուղի առաջացումը նշանակում է, որ անոթում օդը սառել է, և հեփսաբար նրա ներքին էներգիան նվազել է: Դա բացաբրվում է նրանով, որ անոթում զբնվող սեղմված օդը, խցանը դուրս մղելով, աշխատանք է կարարել իր ներքին էներգիայի նվազման հաշվին: Դրա համար էլ օդի ջերմաստիճանն իջել է:

Մարմնի ներքին էներգիան կարելի է փոփոխել նաև առանց աշխատանք կարարելու: Այսպես, օրինակ՝ այն կարելի է մեծացնել զազօչախի վրա ջրով թեյնիկը դրաբանելով կամ զդալը դրա թեյով բաժակի մեջ մրցնելով: Տարանում է վառարանը, որի մեջ կրակ է վառվում, շենքի դրանիքը, որը լուսավորված է արևով և այլն: Այս բոլոր դեպքերում մարմինների ջերմաստիճանի բարձրացումը նշանակում է նրանց ներքին էներգիայի մեծացում, սակայն այդ մեծացումը գրեթե է ունենում առանց աշխատանք կարարելու:

Առանց աշխատանք կարարելու մարմնի ներքին էներգիայի փոփոխությունը կոչվում է ջերմափոխանակություն: *Ջերմափոխանակությունն*

առաջանում է տարրեր ջերմաստիճան ունեցող մարմինների (կամ նոյն մարմինի տարրեր մասերի) միջև:

Օրինակ՝ ինչպե՞ս է դրեղի ունենում ջերմափոխանակությունը դաք ջրի հետ սառը գդալի շիման ժամանակ: Սկզբում դաք ջրի մոլեկուլների միջին արագությունը և կինետիկ էներգիան գերազանցում են մետաղից պարբռաստիճան գդալի մասնիկների միջին արագությունն ու կինետիկ էներգիան: Բայց այն մասերում, որտեղ գդալը հպվում է դաք ջրին, դաք ջրի մոլեկուլները սկսում են իրենց կինետիկ էներգիայի մի մասը դալ գդալի մասնիկներին, և դրանք սկսում են ավելի արագ շարժվել: Ջրի մոլեկուլների կինետիկ էներգիան այդ ընթացքում նվազում է, իսկ գդալի մասնիկների կինետիկ էներգիան՝ մեծանում: Էներգիայի հետ մեկտեղ փոփոխվում է նաև ջերմաստիճանը. ջուրն աստիճանաբար սառչում է, իսկ գդալը՝ դաքանում: Դրանց ջերմաստիճանների փոփոխությունը շարունակվում է մինչև այն պահը, երբ և՛ ջուրը, և՛ գդալն ունենում են նոյն ջերմաստիճանը:

Ջերմափոխանակության ժամանակ մի մարմնից մյուսին հաղորդվող ներքին էներգիայի մասը նշանակվում է Q դառով և կոչվում է ջերմաքանակ:

Ջերմաքանակը պեսքը չէ շփոթել ջերմաստիճանի հետ: Ջերմաստիճանը չափում է աստիճաններով, իսկ ջերմաքանակը (ինչպես էներգիայի ցանկացած դեսակ)՝ ջուլներով:

Տարրեր ջերմաստիճաններ ունեցող մարմինների հպման դեպքում դաք մարմինը որոշ քանակության ջերմություն է տալիս, իսկ սառը մարմինը ստանում է այն:

Այսպիսով՝ գոյություն ունի ներքին էներգիայի փոփոխման երկու եղանակ. 1) *աշխատանքի կարարում* և 2) *ջերմափոխանակություն*: Այս եղանակներից առաջինի իրականացման դեպքում մարմնի ներքին էներգիան փոփոխվում է կարարված A աշխատանքի մեծության չափով, իսկ երկրորդ եղանակի դեպքում՝ հաղորդվող Q ջերմաքանակի չափով:

Ենթաքրքրական է, որ դիֆարկված երկու եղանակներն ել կարող են հանգեցնել միանման արդյունքի: Ուստի, վերջնական արդյունքով հնարավոր չէ որոշել, թե հարկադարձ որ եղանակով է այն ձեռք բերվել: Այսպես՝ սեղանի վրայից վերցնելով պողպարե դաք շյուլը՝ մենք չենք կարող ասել,

թե որ եղանակով են այն գրաքացրեկ՝ շփմա՞ն, թե՛ գրք մարմնի հետ հպման միջոցով: Սկզբունքորեն կարող է լինել և՛ մեկը, և՛ մյուսը:


Դարցեր

1. Նշե՛ք մարմնի ներքին էներգիայի փոփոխման երկու եղանակները:
2. Բերե՛ք մարմնի նկարմամբ աշխարհանք կարարելու միջոցով նրա ներքին էներգիայի մնացման օրինակներ:
- 3 Բերե՛ք ջերմափոխանակության եղանակով մարմնի ներքին էներգիայի մնացման և փոքրացման օրինակներ:
4. Ի՞նչ է ջերմաքանակը: Ի՞նչ գրառով է այն նշանակվում:
5. Ի՞նչ միավորով է չափվում ջերմաքանակը:
6. Ի՞նչ եղանակներով կարելի է կրակ սրանալ:
7. Ե՞րբ է սկսվել լուցեր արդադրությունը:

Փորձարարական առջադրանք: Մելքաղադրամը կամ փայլարիթենը սեղմե՛ք սրբարաթղթին կամ գրախափակին: Սկզբում 10, հետո 20 և այդպես շարունակ մեկ այս, մեկ այն կողմ շարժումներ անելով՝ ուշադրություն դարձե՛ք, թե շփման ընթացքում ինչ է կարարվում մարմինների ջերմասպիճանի հետ: Ինչպես է կախված մարմնի ներքին էներգիայի փոփոխությունը կարարված աշխարհանքի մնանականությունից:

§ 33. Ջերմափոխանակության գեսակները

Մարմնի ներքին էներգիան կարելի է փոփոխել երկու եղանակով՝ աշխարհանք կարարելով և ջերմափոխանակությամբ: Ջերմափոխանակությունը




կարող է փարբեր ձևերով իրականացվել: Տարբերում են ջերմափոխանակության երեք գուսակ՝ ջերմահաղորդականություն, կոնվեկցիա և ճառագայթային ջերմափոխանակություն:

1. Ջերմահաղորդականությունը ջերմափոխանակության գուսակ է, որի ժամանակ գույի է ունենում լներգիայի անմիջական փոխանցում մարմնի ավելի փաքացած մասի մասնիկներից նրա պակաս փաքացած մասի մասնիկներին: Ջերմահաղորդականության դեպքում նյութն ինքը մարմնի երկայնքով չի գույղաշարժվում, գուղափոխվում է միայն լներգիան:

Դիմենք հետևյալ փորձին: Ամրակալանին պղնձե հասպ մեփաղալար ամրացնենք, իսկ մեփաղալարին մոմով (կամ պլաստիլինով) մի քանի մեխեր կպցնենք (նկ. 63): Մեփաղալարի մյուս ծայրը սպիրուֆայրոցի բոցով փաքացնելիս մոմը հալչում է, և մեխերն ասդիմանաբար պոկվում են մեփաղալարից: Ընդ որում, սկզբում ընկնում են նրանք, որոնք ավելի մոփ են կրակի բոցին, հետո հերթականությամբ մյուս բոլորը: Սա բացաբրվում է հետևյալ կերպ:

Սկզբում մեծանում է մեփաղի այն մասնիկների շարժման արագությունը, որոնք մոփ են կրակին: Վյշ մասում մեփաղալարի ջերմասպիրիդանը բարձրանում է: Վյշ մասնիկների և դրանց հարևանությամբ գործող մասնիկների փոխազդեցության ժամանակ վերջիններիս արագությունը նույնպես մեծանում է, ինչի արդյունքում բարձրանում է մեփաղալարի այդ հարվածի ջերմասպիրիդանը: Վյուիեփև մեծանում է հաջորդ մասնիկների արագությունը և այդպես շարունակ, մինչև որ փաքանում է ամբողջ մեփաղալարը:

Տարբեր նյութեր փարբեր ջերմահաղորդականություն ունեն. մի քանիսինը ավելի մեծ է, մյուսներինը՝ ավելի փոքր: Մեր կենսափորձից գիրնը, որ եթե ձեռքերս վերցնենք երկարյա որևէ իր (ասենք՝ մեխ) և սկսենք փաքացնել կրակի վրա, ապա այն չենք կարողանա ձեռքում երկար պահել: Եվ հակառակը, վառվող լուցկին կարող ենք պահել այնքան ժամանակ, քանի դեռ



Նկար 63

կրակի բոցը չի հասել մեր ձեռքին: Սա նշանակում է, որ փայտն ավելի փոքր ջերմահաղորդականություն ունի, քան երկաթը:

Առավել մեծ ջերմահաղորդականությամբ օժգված են մետաղները, հարկապես արծաթը և պղինձը: Նեղուկների (բացառությամբ հալեցրած մետաղների) ջերմահաղորդականությունը փոքր է: Գազերին ավելի փոքր է, քանի որ դրանց մոլեկուլներն անհամեմապ ավելի հեռու են զբնվում իրարից, և Լներգիայի փոխանցումը մի մասնիկից մյուսին դժվարությամբ է կապարվում:


Եթե փարբեր նյութերի ջերմահաղորդականությունները համեմապենք պղինձի ջերմահաղորդականության հետ, ապա կպարզվի, որ երկայինը փոքր է մոտ 5 անգամ, ջրինը՝ 658, ծակորդին աղյուսինը՝ 840, նոր եկած ձյանը՝ գրեթե 4000 անգամ, բամբակինը, փայտի սղոցուկինը և ոչխարի մորթունը՝ գրեթե 10000 անգամ, իսկ օդի ջերմահաղորդականությունը փոքր է մոտավորապես 20000 անգամ:

Բրդի, բմբուլի, մորթու վագր ջերմահաղորդականությունը (որը պայմանավորված է նրանց մանրաթելերի միջև օդի առկայությամբ) թույլ է փալիս կենդանու մարմնին պահպանել օրգանիզմի սպեկտրած էներգիան և այդպիսով խուսափել սառչելուց: Ցրփից պաշտպանում է նաև ճարպի շերպը, որն առկա է լողացող թռչունների, կեփերի, ծովափդերի, փոկերի և մի քանի այլ կենդանիների մոտ:


2. Կոնվեկցիան ջերմափոխանակությունն է հեղուկ և զազային միջավայրերում, որն իրականացվում է նյութի հոսքերով (կամ շիթերով):

Բոլորին է հայտնի, որ հեղուկները և զազերը սովորաբար դարձնում են դրական: Զրով թեյնիկը դնում են կրակին, ջեռուցման մարդկոցները դրեղադրում են պարուիանների դրակ: Դարձականությունն է դա:

Ջեռը պահելով դրաք սալօջախի կամ վառվող լամպի վրա՝ մենք զգում ենք, որ սալօջախից կամ լամպից վեր են բարձրանում օդի դրաք հոսանքներ: Այդ հոսանքները կարող են պարփել լամպի վերևում դրեղադրված ոչ մեծ թղթե պարփանը (նկ. 64): Որպեսի՞ց են առաջանում այդ հոսանքները:



Նկար 64




Նկար 65


Օդի այն մասը, որ սահմանակից է սպազմախին կամ լամպին, դաքանում է և դրա հետքնանքով ընդարձակվում: Նրա խրությունը դառնում է ավելի փոքր, քան իրեն շրջապատող (ավելի սառը) միջավայրինը, և արքիմեյյան ուժի ազդեցությամբ այն սկսում է բարձրանալ վեր: Նրա փեղը ներքում գրադեցնում է սառը օդը: Որոշ ժամանակ անց օդի այս շերտը դաքանալով նույնպես բարձրանում է վեր՝ իր փեղը զիջելով օդի հաջորդ բաժնին և այդպես շարունակ: Սա էլ հենց կոնվեկցիան է:

Նույն կերպ է ներգիան դեղաշարժվում նաև հեղուկների դաքացման ժամանակ: Տաքացնելիս հեղուկի շերտերի դեղաշարժը դիպելու համար ջրով լի ապակե փորձանոթի մեջ ներկանյութի (ասենք, կալիումի պերմանգանատի) բյուրեղիկ են զցում և փորձանոթը դնում կրակի վրա: Որոշ ժամանակ անց ջրի ներքին շերտերը, որոնք կալիումի պերմանգանատի պարզաբուծ ներկվել են մանուշակագույն, սկսում են բարձրանալ վերև (նկ. 65): Դրանց փեղը գրավում է սառը ջուրը, որը դաքանալով նույնպես բարձրանում է վեր և այսպես շարունակ: Վսփիճանաբար ամրող ջուրը դաքանում է: Կոնվեկցիայի շնորհիվ է դաքանում նաև մեր բնակարանների օդը (նկ. 66):


Կոնվեկցիան, արդյոք, օդը և հեղուկները, եթե դրանք դաքացնենք վերևից: Կրկին դիմենք փորձին: Փորձասրվակի մեջ մի կվոր սառույց դնենք, դրա վրա դեղադրենք մերադե մանեկ և անոթի մեջ սառը ջուր լցնենք:



Նկար 66



Նկար 67



Նկար 68

Մրգակը վերսից դրաքացնելիս կարելի է ջրի վերին շերպերը հասցնել եռման ասդիմանի (նկ. 67), մինչդեռ ջրի սփորին շերպերը սառը կմնան (և անզամ սառույցը չի հալվի): Սա բացաբրվում է նրանով, որ դրաքացման այս եղանակի դեպքում կոնվեկցիա չի կապարվում: Տարացած շերպերը բարձրանալու վեղ չունեն. դրանք առանց այդ էլ վերևում են: Իսկ սփորին (սառը) շերպերը այդպես էլ կմնան ներքևում: Ճիշտ է, ջուրը կարող է դրաքանալ ջերմահաղորդականության շնորհիվ, սակայն այն շաբ թույլ է, այնպես որ, երկար պերք է սպասել, որ դա դժվար ունենա:

Նույն ձևով կարելի է բացաբրել, թե ինչո՞ւ չի դրաքանում նկ. 68-ում պարկերված փորձարվակում գրնվող օդը: Տարանում է միայն նրա վերին մասը, իսկ սփորին մասը մնում է սառը:

Նկ. 67-ում և 68-ում պարկերված փորձերը ոչ միայն ապացուցում են, որ հեղուկներն ու գազերը պերք է դրաքանել ներքևից, այլև որ դրանք վագր ջերմահաղորդականություն ունեն:

3. ճառագայթային ջերմափոխանակությունը այն ջերմափոխանակությունն է, որի դեպքում էներգիան փեղափոխվում է դրաբեր ճառագայթների միջոցով: Դրանք կարող են լինել արեգակնային ճառագայթները, ինչպես նաև մեր շուրջը գրնվող դրաքացած մարմիններից առարվող ճառագայթները:


Այսպես, օրինակ՝ վառարանի կամ խարույկի մոդ նսվելիս զգում ենք, թե ինչպես է ջերմությունը կրակից փոխանցվում մեր մարմնին: Սակայն

այսպիսի ջերմափոխանցման պարբառը ոչ ջերմահաղորդականությունն է (քանի որ կրակի և մեր մարմնի միջև գլուխող օդի ջերմահաղորդականությունը շատ փոքր է) և ոչ էլ կոնվեկցիան (քանի որ կոնվեկցիոն հոսանքները միշտ ուղղված են լինում դեպի վեր): Այսպես գործում է ջերմափոխանակության երրորդ փեսակը՝ ճառագայթային ջերմափոխանակությունը:

Վերցնենք ջերմարնդունիչը: Սա շրջանաձև փափակ փուլի փեսքով սարք է, որի մի երեսը հայելու պես փայլեցված է, իսկ մյուսը պարզված է ևս անփայլ ներկով: Տուփի ներսում ող կա, որը կարող է դուրս գալ հագուկ անցքի միջով: Ջերմարնդունիչը միացնենք հեղուկային մանոմետրին (նկ. 69) և ջերմարնդունիչին մոփեցնենք կենկորական սալիկ կամ բարձր ջերմասփիճանի փաքացված մեփաղի կողոր: Կորեննենք, որ մանոմետրի հեղուկի սյունը փեղաշարժվում է: Բայց սա նշանակում է, որ ջերմարնդունիչում գլուխող օդը փաքացել և ընդարձակվել է: Ջերմարնդունիչի օդի փաքացումը կարելի է բացադրել միայն փաքացքած մարմնից նրան էներգիայի փոխանցմամբ: Ի՞նչ ձևով փոխանցվեց էներգիան: Պարզ է, որ ոչ ջերմահաղորդականության եղանակով, քանի որ փաքացված մարմնի և ջերմարնդունիչի միջև ող կա, որը փոքր ջերմահաղորդականությամբ է օժիված: Այսպես կոնվեկցիա էլ փեղի չի ունեցել, քանի որ ջերմարնդունիչը գլուխում է ոչ թե փաքացված մարմնի վերևում, այլ կողքին: Տվյալ դեպքում էներգիան փոխանցվել էր փաքացված մարմնից արձակված անփեսանելի ճառագայթների շնորհիվ: Այդ ճառագայթներն անվանում են ջերմային ճառագայթում:

Ջերմային ճառագայթման (փեսանելի կամ անփեսանելի) շնորհիվ է Երկրին փոխանցվում Արեգակի էներգիան: Ջերմափոխանակության այս փեսակի առանձնահարկությունն այն է, որ այն կարող է իրականանալ նաև անօդ փարածության միջով:

Ջերմային ճառագայթում են առաքում բոլոր մարմինները՝ կենկորական սալիկը, լամպը, հողը, թեյով բաժակը, մարդու մարմինը և այլն: Սակայն



Նկար 69

ցածր ջերմաստիճան ունեցող մարմինների մոտ այն թույլ է: Եվ հակառակը, ինչքան բարձր է մարմնի ջերմաստիճանը, այնքան շափ էներգիա է նա հաղորդում ճառագայթման ճանապարհով:

Եթե ճառագայթումը, տարածվելով աղբյուր հանդիսացող մարմնից, հասնում է այլ մարմինների, ապա նրա մի մասն անդրադառնում է, իսկ մի մասը կլանվում է նրանց կողմից: Կլանման ժամանակ ջերմային ճառագայթման էներգիան վերածվում է մարմինների ներքին էներգիայի, և դրանք տարանում են:


Մարմինների բաց և մուգ գույնի մակերևույթները ճառագայթումը տարբեր կերպ են կլանում: Եթե ջերմարնդունիչը (նկ. 69) ճառագայթող մարմնին ուղղենք նախ սև, ապա փայլեցրած մակերևույթով, ապա մանումետրի հեղուկի սյունն առաջին դեպքում ավելի մեծ չափով կդեղաշարժվի, քան ներկրորդ դեպքում: Սա ցույց է տալիս, որ մուգ մակերևույթ ունեցող մարմինն ավելի լավ է կլանում էներգիան (հետքեաբար ավելի շափ է տաքանում), քան բաց գույնի կամ հայելային մակերևույթով մարմինը:

Մուգ մակերևույթ ունեցող մարմինները ոչ միայն ավելի լավ են կլանում, այլև ավելի լավ են ճառագայթում էներգիան: Ավելի շափ ճառագայթելով՝ նրանք ավելի արագ են սառչում: Օրինակ՝ մուգ թեյնիկում դաքանի շուրն ավելի արագ է սառչում, քան բաց գույնի թեյնիկում:

Ճառագայթվող էներգիան տարբեր կերպ կլանելու ունակությունը լայն կիրառում է զգել տեխնիկայում: Օրինակ՝ օդապարիկները և ինքնաթիռների թեյները շափ հաճախ ներկում են արծաթազույն ներկով, որպեսզի դրանք ավելի քիչ տաքանան արեգակնային ճառագայթներից: Իսկ եթե անհրաժեշտ է օգտագործել արեգակնային էներգիան (օրինակ՝ արհեստական արբանյակների վրա դեղադրված որոշ սարքերի դաքանիկան նպատակով), ապա այդ սարքավորումները ներկում են մուգ գույնով:

Նարցեր

1. Թվարկե՛ք ջերմափոխանակման դեսակները:
2. Ի՞նչ է ջերմահաղորդականությունը: Ո՞ր մարմինների ջերմահաղորդականությունն է լավ, որո՞նցը՝ վափ:
3. Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է ցույց տալիս նկ. 70-ում պատկերված փորձը:



Նկար 70

4. Ի՞նչ է կոնվեկցիան:
5. Ինչո՞ւ են հեղուկներն ու գազերը դաքացնում ներքևից:
6. Ինչո՞ւ կոնվեկցիան հնարավոր չէ պինդ մարմիններում:
7. Զերմափոխանակման ո՞ր դրեսակը կարող է իրականանալ անօդ դաճությունում:
8. Ի՞նչ կառուցվածք ունի ջերմարնդունիչը:
9. Ո՞ր մարմիններն են ավելի լավ, և որո՞նք են ավելի վագ կլանում ջերմային ճառագայթման էներգիան:
10. Ի՞նչու բաց գույնի թեյնիկում դրաք ջուրն ավելի ուշ է սառչում, քան մուգ թեյնիկում:

Փորձարարական առաջադրանքներ: 1. Լինելով դրանք, կողոցում կամ դրաննապորդում՝ սպուզե՛ք, թե շոշափելիս որ առարկաներն են թվում ավելի սառը: Ի՞նչ կարող եք ասել դրանց ջերմահաղորդականության մասին: Զեր դիֆարկումների հիման վրա կազմե՛ք նյութերի անվանումների շարքը՝ դրանց ջերմահաղորդականության աճմանը համապատասխան: 2. Միացրեք էլեկտրական լամպը և ձեր ձեռքը մոփեցրե՛ք դրան (առանց լամպին հպվելու): Ի՞նչ եք զգում: Տվյալ դեպքում ջերմափոխանակման ո՞ր դրեսակն է դրեդի ունենում: 3. Տաքացն՛ում է, արդյոք, մուշդրակը: Դա պարզելու համար վերցրե՛ք ջերմաչափը և հիշելով նրա ցուցմունքը՝ փաթաթե՛ք մուշդրակով: Կես ժամից հանեք այն: Փոխվե՛լ է, արդյոք, ջերմասպիճանի ցուցմունքը: Ինչո՞ւ:

§ 34. Զերմափոխանակության օրինակներ բնության մեջ և գելքնիկայում

1. Քամիները: Մթնոլորդում եղած բոլոր քամիներն իրենցից հսկայական մասշտարի կոնվեկցիոն հոսանքներ են ներկայացնում: Կոնվեկցիայով են, օրինակ՝ բացապրվում առավինյա զեփյուռները՝ ծովերի և մեծ լճերի ափերին գոյացող գիշերային և ցերեկային քամիները:

Ամուսն օրերին ցամաքն արևի կողմից ավելի արագ է դարձանում, քան ջուրը, ուստի և ցամաքի վրա օդն ավելի շար է դարձանում, քան ջրի վրա: Վյո դեպքում ցամաքի վրայի օդն ընդարձակվում է, ինչի պատճառով նրա ճնշումը դառնում է ավելի փոքր, քան ծովի վրա եղած սառը օդի ճնշումը: Արդյունքում, ինչպես հաղորդակից անոթներում, սառը օդը ծովից (որդեռ ճնշումը մեծ է) գեղափոխվում է ափ (որդեռ ճնշումն ավելի փոքր է): Սա ցերեկային զեփյուռն է:

Գիշերը ջուրն ավելի դանդաղ է սառչում, քան ցամաքը, և ցամաքի վրայի օդն ավելի սառն է դառնում, քան ջրի վրայինը: Վյժմ ավելի բարձր ճնշումը լինում է ցամաքի վրա, և դրա համար էլ օդը սկսում է շարժվել ափից դեպի ծով: Սա գիշերային զեփյուռն է:

2. Քարշում: Մենք գիտենք, որ առանց թարմ օդի հոսքի վառելիքի այրումն անհնար է: Եթե հնոցի կամ վառարանի մեջ օդ չմփնի, այրումը կդադարի: Վյրմանը նպաստելու նպագակով հաճախ օգտագործում են օդի բնական հոսքը՝ քարշումը: Դրա համար այն մասի վրա, որդեռ վառելիքն է այրվում, խողովակ են գեղադրում: Տաքանալով օդն ընդարձակվում է, իսկ ճնշումը հնոցում և խողովակում դառնում է ավելի փոքր, քան արդարին օդի ճնշումը: Ճնշումների դարձերության հետևանքով սառը օդը դրսից ուղղվում է հնոցը, իսկ դարձ խողովակով վեր է բարձրանում: Սա էլ հենց քարշումն է:

Խողովակի բարձրություր մեծացնելիս քարշումն ուժեղանում է, քանի որ որքան բարձր է հնոցի վրա դրված խողովակը, այնքան մեծ է դրսի և խողավակի միջի օդի ճնշումների դարձերությունը:

3. Զրացեռուցում: Երկրագնդի բարեխառն և սառը գոփիների երկրների բնակիչները հարկադրված են ցուրփ եղանակին դարձանելու իրենց բնակարանները: Բնակելի դարձքներում մարդու համար առավել բարենպաստ


Է օդի $18-20^{\circ}\text{C}$ ջերմաստիճանը: Այդ ջերմաստիճանը պահպանելու համար բազմաթիվ տներում կիրառում են ջրաջեռուցումը:

Կենդրոնական ջեռուցման համակարգերում ջրի փաքացումը դեղի է ունենում ջեռուցվող շենքի սահմաններից դուրս (կաթսայափներում կամ ջերմակենսկդրակայաններում՝ ջէկ-երում): Ջեռուցիչից փաք ջուրը խողովակաշարով հասնում է շենք: Այսպես (նկ. 71) այն (1) զիխավոր կանգնուկով բարձրանում է վերև, այնքեղից խողովակներով մտնում է (2) ջեռուցման սարքերի (ռադիատորների) մեջ: Եթե ջուրը դրանց մեջ սառչում է, վերադառնում է ներքև և հասնում ջեռուցիչին: Այսպես իրականացվում է ամրող համակարգում ջրի անդադար շրջապատճերը: Փոքր շինություններում այդ շրջապատճերը առաջանում է շնորհիվ բնական կոնվեկցիայի, իսկ բաղադրային մեծ փներում այն փեղի է ունենում հարուկ պոմպերի աշխատանքի շնորհիվ (արհեստական կամ հարկադրական կոնվեկցիա):

Տաքացվող հեղուկի ընդարձակման դեպքում ճնշման մեծացման պատճառով ջեռուցման համակարգում հնարավոր վթարները կանխելու նպագակով (1) զիխավոր կանգնուկին միացնում են ընդարձակման (3) բարը:

4. Ջերմու: Վեևի շաք փաքացած մարմնից ջերմության փոխանցումն ավելի սահը մարմնին հանգեցնում է դրանց ջերմաստիճանների հավասարեցմանը: Այդ պատճառով, օրինակ, զագօջախից վեցրուծ փաք թեյնիկը, շփվելով իրեն շրջապատող օդի հետ, որոշ ժամանակ հետո սառչում է: Մարմնի սառեցմանը (կամ փաքացմանը) խոչընդունելու համար անհրաժեշտ է կանխել հնարավոր ջերմափոխանակությունը, ընդ որում նրա բոլոր երեք դրսնորումներով (կոնվեկցիա, ջերմահաղորդականություն և ճառագայթում): Դրան կարելի է հասնել մարմինը հարուկ՝ Դյուարի անոթի մեջ փեղադրելու միջոցով: Այն հայդնագործել է անզիխացի գիտնական Զեյմս Դյուարը 1892 թվականին:

Դյուարի անոթները սկզբում օգտագործվում էին միայն արագ զոլորշացող հեղուկ զագերը (ասենք՝ հեղուկ հելիումը) պահպանելու համար: Ներազայում դրանք սկսեցին




Նկար 71


գործածվել կենցաղային նպարակներով, այն է՝ դրանց մեջ գլեղադրվող սննդամթերքը անփոփոխ չերմաստիճանում պահելու համար: Դյուարի այսպիսի անորթները սկսեցին կոչվել *թերմոսներ* (նկ. 72):

Տեղուկներ պահելու համար նախաբեաված թերմոսի կառուցվածքը ցուցադրված է նկ. 73-ում: Այն կազմված է կրկնակ պարեր ունեցող ապակե 4 անորթից: Այդ պարերի ներքին մակերևույթը պարփակված է փայլուն մետաղական շերտով, իսկ պարերի միջի տարածությունից օղը հանված է: Թերմոսի ապակե իրանը վնասվելուց պաշտպանելու համար այն գլեղադրում են սրբարաթղթե կամ մետաղե (3) պարյանի մեջ: Անորթ ամոր փակում են (2) խցանով, իսկ պարյանը վերևի մասում փակում են պարուսակավոր (1) կափարիչով:

Թերմոսն այնպես է պարբաստված, որ նրա պարունակության և շրջապատող միջավայրի ջերմափոխանակությունը հասցի նվազագույնի: Նրա պարերի միջև օդի բացակայությունը խոշընդուրում է կոնվեկցիայի կամ ջերմահաղորդականության եղանակներով էներգիայի հաղորդումը, իսկ թերմոսի ներքին մակերևույթի փայլուն շերտը խանգարում է ճառագայթման միջոցով էներգիայի փոխանցմանը:



Նկար 72



Նկար 73

Հարցեր

1. Ինչո՞ւ է ցերեկային գելիյուռ փշում ծովից ցամաք ուղղությամբ, իսկ գիշերայինը՝ ցամաքից դեպի ծով:
2. Ինչի՞ արդյունքում է առաջանում քարշումը:
3. Ի՞նչ կառուցվածք ունի ջրաջեռուցման համակարգը:
4. Բացաբրե՛ք թերմոսի կառուցվածքը: Ինչի՞ հաշվին է հնարավոր լինում նրանում նվազեցնել ջերմափոխանակությունը: Ինչո՞ւ է դաքստում նրանում նվազեցնել ջերմափոխանակությունը:

§ 35. Ներքին էներգիայի փոփոխության հաշվարկը

Մենք գիտենք, որ մարմնի ներքին էներգիան կարելի է փոփոխել երկու եղանակով՝ աշխարհանք կապարելով և ջերմափոխանակության միջոցով։ Այս եղանակներից առաջինի կիրառման դեպքում մարմնի ներքին էներգիան փոփոխվում է կապարված աշխարհանքի A մեծության չափով, իսկ երկրորդի դեպքում՝ փոխանցված ջերմության Q բանակին հավասար մեծությամբ։

Մարմնի սկզբնական ներքին էներգիան նշանակենք U_1 -ով, իսկ վերջնականը (փոփոխումից հետո)՝ U_2 -ով։ Այդ դեպքում մարմնի ներքին էներգիայի փոփոխությունը հավասար կլինի $U_2 - U_1$ տարրերությանը։ Ֆիզիկական ցանկացած մեծության փոփոխությունը ֆիզիկայում ընդունված է նշանակել հունական Δ (դեկտա) տառով։ Տեքստարար կարող ենք գրել.

ΔU-ն ներքին էներգիայի փոփոխությունն է,

$$\Delta U = U_2 - U_1$$

Ներքին էներգիայի փոփոխությունը կարող է արդահայտվել ինչպես դրական, այնպես կենցասական մեծությամբ։

1) Եթե մարմնի ներքին էներգիան մեծանում է, ապա $U_2 > U_1$ և, հետևաբար, $\Delta U > 0$,

2) Եթե մարմնի ներքին էներգիան նվազում է, ապա $U_2 < U_1$ և, հետևաբար, $\Delta U < 0$ ։

Մարմնի ներքին էներգիայի փոփոխության եղանակից (աշխարհանքի կապարման կամ ջերմափոխանակության) կախված՝ այդ փոփոխությունը կարելի է հաշվել երկու եղանակով։

$$\Delta U = A - \text{աշխարհանքի կապարման դեպքում}, \quad (35.1)$$

$$\Delta U = Q - \text{ջերմափոխանակության դեպքում}: \quad (35.2)$$

(35.1) հավասարությունը կիրառելիս հարկավոր է հիշել, որ նրա աջ կողմում գրնվում է մարմնի վրա ազդող *արդարաքին ուժերի* կապարած աշխարհանքը։ Մարմնի կապարած $A_{\text{մարմնի}}$ աշխարհանքը բարբերվում է դրանից միայն նշանով։

$$A_{\text{մարմնի}} = -A$$

Զերմաքանակը՝ Q-ն, նույնպես կարող է լինել դրական կամ բացասական.

1) Եթե մարմնի ներքին էներգիան մեծանում է ջերմափոխանակության ընթացքում, ապա $Q > 0$ (մարմինը ջերմաքանակ է սրանում),

2) Եթե մարմնի ներքին էներգիան նվազում է ջերմափոխանակության ընթացքում, ապա $Q < 0$ (մարմինը ջերմաքանակ է հաղորդում):

Ընդհանուր դեպքում մարմնի (կամ մարմինների համակարգի) ներքին էներգիան կարող է փոփոխվել միաժամանակ երկու եղանակով՝ աշխատանքի կապարման և ջերմափոխանակության միջոցով: Այդ դեպքում ներքին էներգիայի փոփոխությունը հաշվելու համար օգտագործում են հետևյալ հավասարումը.

$$\Delta U = A + Q$$

(35.3)

Տամաձայն այս հավասարման՝ *համակարգի ներքին էներգիայի փոփոխությունը հավասար է արդարին ուժերի կարգարած աշխատանքի և համակարգի սրացած ջնունաքանակի գումարին:*

«արցեր»

1. Ինչպես են նշանակվում մարմնի ներքին էներգիան և մարմնի ներքին էներգիայի փոփոխությունը:
2. Ո՞ր դեպքում է մարմնի ներքին էներգիայի փոփոխությունը դրական մեծություն և ո՞ր դեպքում՝ բացասական:
3. Ի՞նչ նշան ունի. ա) մարմնի սրացած ջերմաքանակը, բ) մարմնի դրական ջերմաքանակը: Ինչո՞ւ:
4. Գրե՛ք այն բանաձևը, որով հաշվում են ջերմափոխանակության ընթացքում մարմնի ներքին էներգիայի փոփոխությունը:
5. Գրե՛ք այն բանաձևը, որով հաշվում են մարմնի նկարմամբ աշխատանք կապարելու շնորհիվ նրա ներքին էներգիայի փոփոխությունը:
6. Ի՞նչ բանաձևով են հաշվում մարմնի ներքին էներգիայի փոփոխությունը ընդհանուր դեպքում:

§ 36. Տեսակարար ջերմունակություն


Կապարենք հեղևյալ փորձը: Վերցնենք միանման երկու անոթ, մեկի մեջ լցնենք 400 գ ջուր, մյուսի մեջ՝ 400 գ ձեթ և սկսենք դրանք փառացնել միանման այրոցների վրա (նկ. 74): Նեփսելով ջերմաչափերի ցուցմունքներին՝ մենք նկատում ենք, որ ձեթն ավելի արագ է փառանում: Զուրը և ձեթը մինչև միևնույն ջերմասպիճանը փառացնելու համար զուրը պեսքը է ավելի երկար փառացնել: Բայց ինչքան երկար ենք փառացնում ջուրը, այնքան ավելի մեծ քանակությամբ ջերմություն է նա սփանում այրոցից:

Այսպիսով՝ միևնույն զանգվածով փառքեր նյութեր մինչև նույն ջերմասպիճանը փառացնելու համար փառքեր քանակությամբ ջերմություն է պահանջվում: *Մարմնի փառացնան համար անհրաժեշտ ջերմաքանակը կախված է մարմնի նյութի տեսակից:*

Այսպես, օրինակ՝ 1 կգ ջրի ջերմասպիճանը 1°C -ով բարձրացնելու համար պահանջվում է 4200Ω ջերմաքանակ, իսկ նույն զանգվածով արևածաղկի ձեթը 1°C -ով փառացնելու համար անհրաժեշտ ջերմաքանակը կազմում է 1700Ω :

Ֆիզիկական այն մեծությունը, որը ցույց է փալիս, թե ինչ ջերմաքանակ է անհրաժեշտ նյութի 1 կգ-ը 1°C -ով փառացնելու համար, կոչվում է այդ նյութի **դիէլեկտրակարար ջերմունակություն**:

Ցուրաքանչյուր նյութ իր դիէլեկտրակար ջերմունակությունն ունի: Այն նշանակվում է լափինական շ դրառով և չափվում է ջոռության մասնակի կազմում ($\Omega/(կգ \cdot ^{\circ}\text{C})$):



Նկար 74

Որոշ նյութերի փեսակարար ջերմունակությունները կարելի են գրնել աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

Մի քանի նյութերի փեսակարար ջերմունակությունը, $\Omega/\text{կգ } ^\circ\text{C}$

Ուկի	130	Գրաֆիտ	750
Սնդիկ	140	Լարորապոր ապակի	840
Կապար	140	Աղյուս	880
Անագ	230	Ալյումին	920
Արծաթ	250	Արևածաղկի ձեթ	1700
Դուինձ	400	Սառույց	2100
Ցինկ	400	Կերոսին	2100
Արույր	400	Եթեր	2350
Երկաթ	460	Փայփ (կաղնու)	2400
Պողպար	500	Սպիրը	2500
Թուզ	540	Զուր	4200

Աղյուսակից, օրինակ, երևում է, որ կապարի փեսակարար ջերմունակությունը հավասար է $140 \Omega/\text{կգ } ^\circ\text{C}$: Այս թիվը ցույց է տալիս, որ 1 կգ կապարը 1°C -ով փաքացնելու համար պահանջվում է 140Ω -ին հավասար ջերմաքանակ: Եվ նույն (ըստ մոդուլի) ջերմաքանակը կանչափվի 1 կգ կապարը 1°C -ով սառչելու դեպքում:

Ազրեագրային փարբեր վիճակներում (պինդ, հեղուկ, գազային) միևնույն նյութի փեսակարար ջերմունակությունը փարբեր է: Այսպես՝ ջրի փեսակարար ջերմունակությունը $4200 \Omega/\text{կգ } ^\circ\text{C}$ է, իսկ սառույցինը՝ $2100 \Omega/\text{կգ } ^\circ\text{C}$, պինդ վիճակում ալյումինի փեսակարար ջերմունակությունը $920 \Omega/\text{կգ } ^\circ\text{C}$ է, իսկ հեղուկ վիճակում՝ $1080 \Omega/\text{կգ } ^\circ\text{C}$:

Նկարենք, որ ջուրը խիստ մեծ փեսակարար ջերմունակություն ունի (փես աղ. 8): Ուստի, օվկիանոսների և ծովերի ջուրը, ամուսնը փաքանալով, ոդից մեծ քանակությամբ ջերմություն է կլանում: Շնորհիվ դրա այն վայրերում, որոնք մեծ ջրամբարների մոտ են գրնվում, ամառն այդքան շոգ չի լինում, ինչպես օդից հեռու վայրերում:

Հարցեր

- Նկարագրե՛ք փորձ, որն ապացուցում է, որ մարմնի փաքացման հա-

մար անհրաժեշտ ջերմաքանակը կախված է այն նյութի փեսակից, որից կազմված է:

2. Ո՞ր մեծությունն են անվանում փեսակարար ջերմունակություն:
3. Թղթի փեսակարար ջերմունակությունը հավասար է $1500 \text{ } \Omega/\text{կգ } {}^{\circ}\text{C}$: Ի՞նչ է դա նշանակում:
4. Ի՞նչ կերպ է ջրի փեսակարար ջերմունակությունն անդրադառնում կլիմայի վրա:

§ 37. Մարմնի փարացման համար անհրաժեշտ և սառչելիս նրանից անջապվող ջերմաքանակի հաշվարկը

Մարմնի փարացման համար անհրաժեշտ ջերմաքանակը հաշվելու համար նախ պարզենք, թե ինչ մեծություններից է այն կախված:

Նախորդ պարագրաֆից մենք արդեն գիտենք, որ ջերմաքանակը կախված է այն նյութի փեսակից, որից կազմված է մարմինը (այսինքն՝ փեսակարար ջերմունակությունից)։

Q-ն կախված է c-ից:

Բայց սա դեռ ամենը չէ:

Եթե ուզում ենք թեյնիկի ջուրը փարացնել այնքան, որ նա պարզապես զոլանա, ապա մենք երկար չենք փարացնի այն: Իսկ որպեսզի ջուրը շափ փարանա, մենք ավելի երկար պիտի փարացնենք այն: Բայց ինչքան երկար ժամանակ թեյնիկը շփվի ջեռուցիչին, այնքան ավելի մեծ քանակությամբ ջերմություն կարանա նրանից: Ռեփերար, ինչքան շափ է փոփոխվում փարացման ընթացքում մարմնի ջերմաստիճանը, այնքան ավելի մեծ ջերմաքանակ է այն սրանում:

Մարմնի սկզբնական ջերմաստիճանը նշանակենք $t_{սկզբ.}$ -ով, իսկ վերջնական ջերմաստիճանը՝ $t_{վերջ.}$ -ով: Այդ դեպքում մարմնի ջերմաստիճանի փոփոխությունը կարդահայդվի դրանց փարբերությամբ.

$$\Delta t = t_{վերջ.} - t_{սկզբ.},$$

և ջերմաքանակը կախված կլինի այդ մեծությունից.

Q-ն կախված է Δt -ից:

Վերջապես, բոլորին հայտնի է, որ, ասենք, 2 կգ ջուրը դարձնելու համար ավելի երկար ժամանակ է պահանջվում, քան 1 կգ-ը դարձնելու համար: Սա նշանակում է, որ մարմնի դարձնան համար անհրաժեշտ ջերմաքանակը կախված է այդ մարմնի զանգվածից:

Q-ն կախված է մ-ից:

Այսպիսով՝ ջերմաքանակը հաշվելու համար անհրաժեշտ է իմանալ այն նյութի դեսակարար ջերմունակությունը, որից պարբռասպված է մարմինը, այդ մարմնի զանգվածը և նրա վերջնական ու սկզբնական ջերմաստիճանների դարբերությունը:

Ենթադրենք՝ պահանջվում է որոշել այն ջերմաքանակը, որն անհրաժեշտ է 5 կգ զանգվածով երկաթե ղեփալը դարձնելու համար այն դեպքում, եթե նրա սկզբնական ջերմաստիճանը հավասար է 20°C -ի, իսկ վերջնականը պետք է հասցվի 620°C -ի:

Աղյուսակ 8-ից դեղենկանում ենք, որ երկաթի դեսակարար ջերմունակությունը՝ $c = 460 \text{ J/(kg} \cdot ^\circ\text{C)}$: Սա նշանակում է, որ 1 կգ երկաթը 1°C -ով դարձնելու համար պահանջվում է 460 J :

1°C -ով 5 կգ երկաթը դարձնելու համար կպահանջվի 5 անգամ ավելի մեծ ջերմաքանակ, այսինքն՝ $460 \text{ J} \times 5 = 2300 \text{ J}$:

Երկաթը ոչ թե 1°C -ով, այլ $\Delta t = 600^{\circ}\text{C}$ -ով դարձնելու համար կպահանջվի ևս 600 անգամ ավելի ջերմաքանակ, այսինքն՝ $2300 \text{ J} \times 600 = 1\,380\,000 \text{ J}$: Նույնպիսի (ըստ մոդուլի) ջերմաքանակ է անջապվում այդ երկաթը 620°C -ից 20°C -ը սառչելիս:

Այսպիսով՝ մարմնի դարձնան համար անհրաժեշտ կամ սառչելիս նրանից անջապվող ջերմաքանակը գրնելու համար պետք է մարմնի դեսակարար ջերմունակությունը բազմապարկել նրա զանգվածով և նրա վերջնական ու սկզբնական ջերմաստիճանների դարբերությամբ.

$$Q = cm(t_{վերջ.} - t_{սկզբ.}):$$

Մարմնի դարձնան դեպքում $t_{վերջ.} > t_{սկզբ.}$ և, հետևաբար, $Q > 0$: Մարմնի սառեցման դեպքում $t_{վերջ.} < t_{սկզբ.}$ և, հետևաբար, $Q < 0$:

Նարցեր

1. Բերե՛ք օրինակներ, որոնք վկայում են, որ դաքանալիս մարմնի սրացած ջերմաքանակը կախված է նրա զանգվածից և ջերմասպիհանի փոփոխությունից:
2. Ո՞ր բանաձևով են հաշվում մարմնի դաքացման համար անհրաժեշտ կամ սառչելիս նրանից անջապվող ջերմաքանակը:

§ 38. Ներքին էներգիայի պահպանման օրենքը և ջերմային հաշվեկշռի հավասարումը

(33.3) հավասարման համաձայն համակարգի ներքին էներգիայի փոփոխությունը հավասար է արդաքին ուժերի աշխատանքի և համակարգի սրացած ջերմաքանակի գումարին.

$$\Delta U = A + Q:$$

Այս հավասարումից հետևում է, որ եթե մարմինների համակարգը մեկուսացնենք արդաքին ներգործությունից, ապա նրա ներքին էներգիան անփոփոխի կմնա՝ անկախ համակարգի ներսում դեղի ունեցող պրոցեսներից:

Իրոք, այդ դեպքում $A = 0$ և $Q = 0$: Ուստի, $\Delta U = 0$: Բայց եթե ներքին էներգիայի փոփոխությունը հավասար է զրոյի, ապա, նշանակում է, ներքին էներգիան հասպարուն մեծություն է:

Այսպիսով՝

Մեկուսացած համակարգում ընթացող ցանկացած պրոցեսների դեպքում նրա ներքին էներգիան անփոփոխ է մնում:

Սա ներքին էներգիայի պահպանման օրենքն է: Մեկուսացած համակարգի ներքին էներգիայի պահպանումը նշանակում է այդ համակարգը կազմող մասնիկների հավերժական ջերմային շարժում:

Ներքին էներգիայի պահպանման օրենքը կիրառենք դարբեր ջերմասպիհաններ ունեցող երկու մարմնից բաղկացած փակ համակարգի համար: Այս

մարմինների հպման դեպքում նրանց միջև ջերմափոխանակություն կսկսվի: Ջերմափոխանակության ընթացքում ավելի փաք մարմինը կփա իր էներգիան, իսկ ավելի սառը կընդունի այն: Սա կշարունակվի այնքան ժամանակ, մինչև դրանց ջերմաստիճանները հավասարվեն: Քանի որ այդ մարմինների գումարային ներքին էներգիան պեսք է պահպանվի, ուստի, որքանով նվազում է մարմիններից մեկի ներքին էներգիան, այնքանով կմեծանա մյուս մարմինի ներքին էներգիան: Սակայն (35.2) բանաձևի համաձայն՝ այդ մարմիններից յուրաքանչյուրի ներքին էներգիայի փոփոխությունը հավասար է ջերմաքանակին: Ուստի, ջերմափոխանակության ընթացքում ավելի փաք մարմնի հաղորդած ջերմաքանակը բար մոդուլի հավասար է ավելի սառը մարմնի սրացած ջերմաքանակին.

$$Q_{\text{սր.}} = |Q_{\text{փվ.}}|:$$

Սա ջերմային հաշվեկշռի հավասարումն է:

Ջերմային հաշվեկշռի հավասարման ճշմարգացիությունը կարելի է սրուցկա փորձով: Ջերմություն չհաղորդող անոթում (Դյուարի անոթում) $m_1 = 0,8$ կգ զանգված և $t_1 = 25^{\circ}\text{C}$ ջերմաստիճան ունեցող ջուրը խառննենք $m_2 = 0,2$ կգ զանգվածով եռման ջրի հետ (եռման ջրի ջերմաստիճանը՝ $t_2 = 100^{\circ}\text{C}$): Որոշ ժամանակ անց չափելով սրացված խառնուրդի ջերմաստիճանը՝ մենք պարզում ենք, որ այն դարձել է՝ $t = 40^{\circ}\text{C}$: Նաշվենք փաք ջրի հաղորդած ջերմաքանակը և այն համեմաքենք սառը ջրի սրացած ջերմաքանակի հետ:

Եռման ջուրը 100°C -ից մինչև 40°C սառչելով փալիս է հեփսյալ ջերմաքանակը.

$$Q_{\text{փվ.}} = cm_2(t - t_2),$$


$$Q_{\text{փվ.}} = 4200 \cdot 0,2 \cdot (40 - 100) \Omega = - 50\,400 \Omega:$$

Իսկ ջուրը, որը լցրել էինք եռման ջրի վրա, 25°C -ից դարձանալով մինչև 40°C , սրանում է հեփսյալ ջերմաքանակը.

$$Q_{\text{սր.}} = cm_1(t - t_1),$$

$$Q_{\text{սր.}} = 4200 \cdot 0,8 \cdot (40 - 25) \Omega = 50\,400 \Omega:$$

Տեսնում ենք, որ, իդոք, ջերմափոխանակության ժամանակ փաք ջրի փված ջերմաքանակը մոդուլով հավասար է այդ ընթացքում սառը ջրի սրացած ջերմաքանակին:



Նկար 75

Դպրոցական պայմաններում նմանօրինակ փորձի անցկացման ժամանակ Դյուարի անոթի փոխարեն օգտագործում են ավելի հասարակ մի սարք, որ կոչվում է կալորիմետր (նկ. 75): Այն բաղկացած է երկու անոթից, որոնք բաժանված են օդային միջանցքով: Ներսի անոթի հապակը դրսինի հարակից առանձնացված է հապուկ հենարաններով: Իհարկե, այսպիսի անոթը չի կարող լիովին խոչընդու缚ել անոթի պարունակության և շրջապատող միջավայրի միջև ջերմափոխանակության իրականացումը, սակայն նվազեցնել այն կարող է: Եթե փորձը հնարավորինս արագ կարարվի, ապա կարելի է հասնել նրան, որ շրջապատող միջավայրի (և կալորիմետրի պարերի) հետ ջերմափոխանակության ընթացքում կորցրած ջերմաքանակն աննշան լինի:

Նարցեր

1. Չնակերպե՛ք և ապացուցե՛ք ներքին էներգիայի պահպանման օրենքը:
2. Ներքին էներգիայի պահպանման օրենքից արդանե՛ք ջերմային հաշվեկշռի հավասարումը:
3. Ինչո՞ւ ջերմային հաշվեկշռի հավասարման մեջ մարմնի փուած ջերմության քանակը վերցվում է մողուլով:
4. Ի՞նչ է կալորիմետրը:
5. Ինչո՞ւ կալորիմետրում փաք և սառը ջրերը խառնելիս փաք ջրի հաղորդած ջերմաքանակի մողուլը հավասար չի լինում սառը ջրի սփացած ջերմաքանակին: Դրանցից ո՞րն ավելի մեծ կլինի:

§ 39. Նյութի ազրեգաֆային վիճակները


Չմոանը ջուրը լճերի և գետերի մակերևույթին սառչում է՝ վերածվելով սառույցի: Սառույցի դժուքը մնում է հեղուկ վիճակում: Այսպես միաժամանակ զոյտթյուն ունեն ջրի երկու դարբեր ազրեգաֆային վիճակները՝ պինդ (սառույց) և հեղուկ (ջուր): Գոյություն ունի նաև ջրի երրորդ՝ գազային վիճակը. անդեսանելի ջրային գոլորշին գրնվում է մեզ շրջապատող օդում:

Ցանկացած նյութ ունի դարբեր ազրեգաֆային վիճակներ: Այդ վիճակներն իրարից դարբերվում են ոչ թե մոլեկուլներով, այլ նրանով, թե ինչ դասավորություն ունեն այդ մոլեկուլները և ինչպես են շարժվում: Նոյն նյութի՝ ջրի ազրեգաֆային դարբեր վիճակներում մոլեկուլների դասավորության առանձնահագեցությունները պարկերված են նկ. 76-ում:

Որոշակի պայմանների առկայության դեպքում նյութերը կարող են մի վիճակից անցնել մեկ այլ վիճակի: Նարավոր բոլոր փոխակերպումները պարկերված են նկ. 77-ում: Դ, Շ և Գ դարբերը նշանակում են նյութերի համապատասխանաբար պինդ, հեղուկ և գազային վիճակները, սլաքները ցույց են դալիս այս կամ այն պրոցեսի ընթացքի ուղղությունը:

Ընդհանուր հաշվով դարբերում են վեց պրոցես, որոնց դեպքում դեղի և նյութերի ազրեգաֆային փոխակերպումները:

Պինդ (բյուրեղային) վիճակից նյութի անցումը հեղուկ վիճակի կոչվում



Նկար 76

Է հալում, իսկ հակառակ պրոցեսը՝ **բյուրեղացում** կամ **պնդացում**: Հալման օրինակ է սառույցի հալումը, հակառակ պրոցեսը գեղի է ունենում ջրի սառցակալման ժամանակ:


Նյութի անցումը հեղուկ վիճակից զազայինի կոչվում է **շոգեգոյացում**, հակառակ պրոցեսը կոչվում է **խփացում** (կրնդենսացիա, լատ.

«կրնդենսապրիո» - «խփացում» բառից): Շոգեգոյացման օրինակ է ջրի գոլորշացումը, խփացման՝ ցողի առաջացումը:

Նյութի անցումը պինդ վիճակից զազայինի (շրջանցելով հեղուկ վիճակը) կոչվում է սուրլիմացիա (լաբիներեն «սուրլիմո» - «քարձրացնում եմ» բառից), հակառակ պրոցեսը՝ դեսուրլիմացիա: Օրինակ՝ գրաֆիկը կարելի է դրաբացնել մինչև հազար, երկու հազար և անզամ երեք հազար աստիճան, և այդուհանդերձ, այն չի վերածվի հեղուկի, նա սուրլիմացիայի կենթարկվի, այսինքն՝ պինդ վիճակից միանգամից կանցնի զազայինի: Միանգամից զազային վիճակի է անցնում (շրջանցելով հեղուկ վիճակը) նաև, այսպես կոչված, «չոր սառույցը» (պինդ ածխածնի օքսիդը՝ CO_2), որը կարելի է դեսնել պաղպաղակի պահպանման և դեղափոխման համար նախարարված թերևնարկերում: Բոլոր հոգերը, որոնցով օժգված են պինդ մարմինները (ասենք՝ նավթալինը), նույնպես պայմանավորված են սուրլիմացիայով. պինդ մարմնից մթնոլորդ դուրս գալով՝ մոլեկուլները նրա վրա գազ (կամ գոլորշի) են գոյացնում, ինչն էլ հոգի զգացողություն է առաջացնում:

Դեսուրլիմացիայի օրինակ կարող է ծառայել ձմռանը լուսամուգների վրա սառույցի բյուրեղիկներից նախշերի առաջացումը: Այս գեղեցիկ նախշերը օդում գրնվող ջրային գոլորշու դեսուրլիմացիայի արդյունքն են:

Նյութի մի ազրեզարային վիճակից մյուսին անցումները կարևոր դեր են խաղում ոչ միայն բնության մեջ, այլև դեկսինիկայում: Այսպես, օրինակ՝ ջու-



Նկար 77

որ զոլորշու վերածելով՝ մենք կարող ենք այն հետո օգտագործել էլեկտրակայանների շոգեփուրքիններում: Գործարաններում մետաղները հալելով՝ մենք հնարավորություն ենք սփանում դրանցից փարբեր համաձուլվածքներ սփանագ՝ պողպատ, թուղ, արույր և այլն: Վյու բոլոր պրոցեսներն ըմբռնելու համար պեսքը է իմանալ, թե ինչ է փեղի ունենում նյութի հետ նրա ազրեգավային վիճակի փոփոխման ժամանակ, և ինչ պայմաններում է այդ փոփոխությունը հնարավոր: Վյու մասին կիսումի հաջորդ պարագաֆներում:


Նարցեր

1. Անվանե՛ք նյութի ազրեգավային երեք վիճակները:
2. Թվարկե՛ք բոլոր հնարավոր պրոցեսները, որոնց դեպքում նյութը մի ազրեգավային վիճակից անցնում է մեկ ուրիշի:
3. Բերե՛ք սուրլիմացիայի և դեսուրլիմացիայի օրինակներ:
4. Ազրեգավային փոխակերպումների ի՞նչ գործնական կիրառություններ գիտեք:
5. Նկ. 76-ում ո՞ր փառով (ա, թ կամ զ) են նշանակված ջրի պինդ, հեղուկ և գազային վիճակները:

§ 40. Բյուրեղային մարմինների հալումն ու պնդացումը

Բյուրեղային պինդ մարմինը հալելու համար անհրաժեշտ է նրան որոշակի ջերմաքանակ հաղորդել:

